# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

№ 3. ՄԱՐՏ. ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ԱՊՐԻԼ № 4.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես:

1 Քնար և քնարերգք (թարգմ.), օրիորդ ՍԱԼՈՄԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ . . 69
2 Հայկական Այբուբեն (Մ. Էմինի յօդուածից), Ս. ՍՏԵՓԱՆԷ . . . . 77
3 Հոգևորականների առաջնորդութիւն, ՀԱՅ—ԲԱՐԵԿԱՄ . . . . . 81
4 Հարսանիք (բանաստ.) Նեկրասովից, ԿՈՄՍ ԴԸ ԼԱՏՈՒՐ . . . . 83
5 Մանկական լոյսը «Дѣтс. Садъ» օրագրից, ՀԱՅ—ԲԱՐԵԿԱՄ . . 84
6 Արծաթեայ կոճակներ, մանկական կոմէդիա Բէրկէնից, ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏ. 89
7 Ուսումնական ճանապարհ. իմ սենեակումս (Մանժէնից), Կ. ՋԱԼԱԼԵԱՆ. 96
8 Մտքեր յայտնելու իրաւունք, ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻ . . . . . . . 98
9 Նամակ դէպի խմբագր. արտասահմանեան տեղեկութիւնների մասին, ԳՐ. ԱՐԾ. 100
10 Երազ (բանաստ.) Լէրմոնտովից, ԳՐ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ . . . . . 101
11 Կոմս դը Մոնտալամբէր, ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻ . . . . . . . . 102
12 Նամակ դէպի խմբագրոց Բագուից «Մարդասիրական ընկերութեան և նոր նախագահի մասին, ՋԱՎԱՏ ՂԱԶԻԵԱՆ . . . . . . . . 103
13 Նամակ Երնջակից գանազան յօդուածների մասին, ԱՐ. ՎԱՐԴ. ՍԵԴՐԱԿ. 104
14 Նամակ Մօսկվայից Հայ—կաթոլիկների մասին, Յ. Տ. Յ. . . . . 106
18 Նամակ դէպի խմբագրոց ուսումնարանի հաշւի մասին, օր. ԱՇ. ԴՕՂԳԵԱՆ 109
18 Նամակ Ներս. ուսում. ակտին ասուած ճառի մասին, ԱԼ. ԹԱՅԻՐԵԱՆ. 111
17 Մեր Ներքին Գործեր («Հայկական Աշխարհի» ուշանալու մասին ստորագրողի մի կարծիք: Ցուրտ օրեր: Քարոզներ և կոնսէրտներ ուսումնարանում եղած . .

ԹԻՖԼԻՍ.

1870

Дозволено цензурою. Тифлисъ, 3 ... 1870 г.

ում. Ռուսիայում և Հայերիս մէջ ։ Առժամանակեայ Յովսէփ Էֆէնդեանից կազմ-
ված փոքրիկ խրճիթների բաժանումն օրիորդական ուսումնարաններին ։ Մարիամեան ու-
սումնարանների կողմից կատարված հոգեհանգիստ։ Նորաշէն եկեղեցու երեսփոխան պ. Մե-
լիքնուբարեանի և արժ. հ. Սրապիոն ա. քահ. Տէրմովսիսեանի հոգսեր։ Մարիամեան
ուսումնարանների Տարեդարձ։ Հայկական թատրոնական ներկայացմունք։ «Ռիշելիօ» և մեծ.
պ. Սունդուկեանի «Էլի մէկ զոհ» նոր պիէս ։ «Մեղ. Հ-ի» Լրագրի յօդվածներ ։
«Արարատ» և տեղեկութիւններ նորանից։ Պարոնեկեան շահից վեհ. Գէորգ կաթողի-
կոսին ուղարկված չքանչան։ Իմ կարծիք «Արարատի» շնորհված բառի մասին։ Նորա պա-
տւքին արժանաւորութիւններ։ Լուր սրբ. Գաբրիէլ եպիսկ. Այվազեանի գալու մասին։
Սրբազան Գէորգ արքեպիսկ. Հիւրմիւզեանի խօսքեր սրբ. Գաբրիէլի մասին։ Իմ պրէրա։
Վեհափառ Հօր Գէորգ Դ. Կաթողիկոսի շնորհաբեր գալուստ Թիֆլիս Վեհ. Հօր խմբա-
տուն բարեհաճութիւն Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներին), ՀԱՅԱՍԼՐ. 114
18 Պատասխաններ խմբագրութեան կողմից, կարմի երկրորդ երեսին ։

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ։

Երնջակ, գիւր. Ար. վար. Սեդ. Ձեր նամակը ստացանք ։ Ձեր յօդվածնե-
րից եթէ կուղարկէք մեզ «Մշեցիների երգեր» և «Ժողովրդական Նախապաշարմունք»
գրվածներն կհրատարակենք ։ Իսկ Ձեր այն ցանկութեան մասին, որ բարեկամաբար Հայ մի
յանձն առնէր հրատարակել Ձեր աշխատութիւններն, մեր կարծիքը ասել ենք նոյնպիսի գոր-
ծի առիթով «Հայկ. Աշխարհում» 1869 № 5 եր. 199,

Մօզդօկ, Սար. Խօշ. Ձեր ուղարկած փողը ստացանք ։

Հէյդլբերգ, Ա. Ա. Ձեր ուղարկած փողը ստացանք ։

Հասավ—Խուրտ, Ս. Խ-դ. Ձեր ուղարկած փողը «Արարատի» համար այնքան պա-
տրված է, որ չենք համարձակում հասցնել խմբագրութեանը ։

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» օրագիրը հրատարակվում է ամիսը միանգամ 2—3 թերթ,
Օրագրի տարեկան գինը 5 մանէթ է։

Յօդված կամ նամակ ուղարկողներից խնդրվում է պարզ և որոշ գրել, եթէ ոչ—
գրվածը անտես կմնայ։

Թիֆլիսում «Հայկական Աշխարհին» ստորագրվել կարելի է նոյն ինքն խմբագրատանը
կամ Ա. Էնֆիաճեանի և Ն. Աղաբաթեանի գրավաճառանոցներում։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ուղղակի դէպի խմբագրողը դառնալ այս հասցէով.
Степану Степане. Въ Тифлисъ. Въ редакцію армянскаго журнала «Армянскій Міръ».

Дозволено цензурою. Тифлисъ. 8 мая. 1870 г.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ։

№ 3. ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ։ ՄԱՐՏ։


*Քվօդ պօտուի ֆացիօ, ֆացիանտ մելիօրա պօտէնտես.*
*Ինչ կարող եմ կատարումեմ, թող կատարէ առաւել լաւ ով կարող է։*

## ՔԵՌԻ ԵՒ ՔԵՌՈՐԴԻ (Ֆրանսիականից), (—Հայկ. Աշխ. № 2—)։

### 3.

Բժիշկը մտաւ ներողութիւն խնդրելով. Ֆրանսուա վերկացաւ, յետ դրեց գիրքը սե֊ղանի վերայ և յայտնեց իւր գործը մեծ հեշտութեամբ, ճեմելով սենեակում։

—Ազնիւ պարոն, ասաց նա. սա իմ քեռին է, որ ես եկայ ձեր հոգացողութեան յանձ֊նելու։ Դուք տեսնումէք ձեր առաջ մօտ յիսուն տարեկան մարդ, ձեռագործութեամբ կոշ֊տացած և կեանքի զրկանքներին սովորած։ Սա ծնված է առողջ ծնողներից, մի ընտանիքի մէջ, ուր երբէք չէ պատահել մտաւորական խելագարութիւն. ուստի դժուարութիւն չէք ու֊նենայ բժշկել ժառանգական հիւանդութիւն։ Դա հիւանդ է ամենազարմանալի ցնորքով մի առարկայի վերայ և փոխվումէ անհաւատալի արագութեամբ ծայրագոյն ուրախութենից դէպի անսահման տխրութիւն։ Դա առանձին մի խառնակութիւն է իսկ մենամոլութեան և սեւա֊մաղձութեան։

—Բայց նա միտքը չէ կորցրել արդեօք բոլորովին։

—Ոչ. նա բոլորովին ցնորված չէ. այլ միայն մի առարկայի վերայ խելագարված է և ամենեւին պատկանումէ ձեր գիտութեան մասին։

—Որն է դորա հիւանդութեան որպիսութիւնը։

—Աւաղ, ազնիւ պարոն, մեր դարի թուլութիւնը ագահութիւն է։ Ողորմելի հիւանդը բոլորովին պատկանումէ իւր ժամանակին։ Մանկութենից աշխատելով, նա գտնվումէ մինչև այժմ առանց կարողութեան։ Հայրս, սկսելով նորա նման, թողեց ինձ բաւական մեծ հա֊րստութիւն սիրելի քեռիս նախանձեց ինձ։ Մտածեց, որ իմ միակ ազգական լինելով, կժա֊ռանգէի կայքս մահի դիպուածով, կամ կդառնար հոգաբարձուս իմ ցնորվելու ժամանակ, և֊որովհետև թոյլ մարդը հաւատումէ նորան, ինչ որ ցանկանումէ, դժբաղդը համոզվել է, որպէս թէ ես կորցրել եմ միտքս. ամենքին արդէն յայտնել է այդպէս, և կտեսնէք, որ ձեզ էլ նոյնը կկրկնէ։ Կառքում, թէպէտ ձեռներ կապած ունէր, կարծումէր թէ ինձ էր բերում ձեզ մօտ։

—Երբ է սկսվել հիւանդութիւնը։

—Մօտ երեք ամիս է։ Նա եկաւ մօտս, մտաւ դռնապանի սենեակը և ասաց նորան

զարհուրած. «Պ(արո)ն Լեմմանուէլ, դուք մի դատար ունիք, թողէք նորան այստեղ և եկէք օգնել ինձ կապել իմ քեռորդին»։

—Կարող է նա ճանաչել իւր դրութիւնը։ Իմանում է արդեօք թէ ոչ, որ հիւանդ է։

—Ոչ, պարոն, և ես կարծում եմ, որ այդ լաւ նշան է։ Ես ձեզ կասեմ դարձեալ, որ նա զգում է ստամոքսի խանգարումն։ Ախորժակ չունի ամենևին և նոյնպէս անքուն է։

—Աւելի լաւ. այն խելագարը, որ կարգով ուտում է ու քնում է, գրեթէ անբժշկելի է։ Թոյլ տուէք ինձ զարթեցնել նորան։

Պարոն Օվրէի հանդարտ շարժեց ննջածի ուսը, որ իսկոյն ոտի վերայ կանգնեց։ Նորա առաջին գործը եղաւ աչքերը շփել. բայց երբ տեսաւ իւր ձեռները կապված նա գուշակեց, թէ ինչ էր անցել իւր քնելու ժամանակ, և շատ ծիծաղեց։

—Լաւ խաղ է, ասաց նա։ Ֆրանսուա տարաւ բժիշկը միւս կողմը։

—Տեսնում էք։ Իսկ հինգ րոպէից յետ կկատաղի սաստիկ։

—Գիտեմ—ինչպէս հարկաւոր է վարվել նորա հետ։ Թողէք ինձ։

Նա մօտեցաւ հիւանդին, ինչպէս երեխային, որը կամենում են զուարճացնել։

—Բարեկամ, ասաց նա նորան, դուք վաղ էք զարթնում։ Լաւ երազ էք տեսել արդեօք։

—Ես ամենևին չեմ երազել։ Ես ծիծաղում եմ, որ ինձ խուրձի նման կապել են։ Կարծեն թէ ես եմ խելագարը։

—Լսում էք, ասաց Ֆրանսուան։

—Խնդրում եմ ազատեցէք ինձ, պարոն։ Ես չեմ կարող լաւ յայտնել գործս մինչև կապված եմ։

—Որդեակ իմ. ես ուրախութեամբ կարձակեմ ձեզ. բայց դուք խոստանում էք խելացի մնալ։

—Նշանակում է դուք ինձ արդարև խելագար էք համարում։

—Ոչ, սիրելի բարեկամ. բայց դուք հիւանդ էք։ Մենք կբժշկենք ձեզ և կառողջացնենք։ Ահա ձեր ձեռները ազատ են. բայց դէպի չարութիւն մի գործ դնէք նոցա։

—Ինչ սատանայութիւն կամենում էք, որ գործեմ։ Ես բերի ձեզ մօտ քեռորդիս.

—Լաւ, պատասխանեց պ. Օվրէի. մենք դորա վերայ այս րոպէիս կխօսենք։ Ես գտայ ձեզ ննջած. արդեօք պատահում է ձեզ հետ քնել ցերեկով։

—Երբէք. այս յիմար գիրքն է դորա պատճառ։

—Վայ, վայ, ասաց հեղինակը, վատ բան է։ Դուք կարծում էք, որ ձեր քեռորդին խելագար է։

—Կապելու խելագար, պարոն. և դորա ապացոյց այն է, որ ես հարկադրված էի կապել նորա ձեռները պարանով։

—Բայց դուք ձեռներ կապած ունէիք։ Միթէ չէ, որ այժմ միայն ազատեցի ձեզ։

—Ես. ոչ,—նա ունէր։ Թողէք վերջապէս պատմել ձեզ բոլոր գործը կարգով։

—Հանդարտ, բարեկամ. դուք չարանում էք ի զուր. ահա կարմրել էք արդէն։ Ես չեմ կամենում, որ դուք յոգնէք։ Բաւականացէք պատասխանել հարցմունքիս։ Դուք ասում էք, որ ձեր քեռորդին հիւանդ է։

—Խելագար է, խելագար է, խելագար։

—Յ. դուք բաւական էք, տեսնելով նորա խելագարութիւն։

—Ես։

—Յայտնեցէք ինձ պարզապէս։ Դուք չէք կամենում, որ նա առողջանայ։

—Ինչի չէ։

—Որ նորա հարստութիւնը մնայ ձեզ։ Դուք ցանկանումէք հարուստ լինել։ դուք բարկացած էք, որ այսքան ժամանակ աշխատելուց յետ կարողութիւն չէք ստացել. և կարծումէք, որ այժմ ձեր հերթն եկել է։

Պ. Մօրլօ չպատասխանեց, այլ մնաց աչքերը ցած բռնած. նա հարցնումէր ինքն իւրանից թէ վատ երազ էր տեսնում արդեօք. նա աշխատումէր որոշել, թէ ինչ ճշմարտութիւն կար իւր կապած ձեռների պատմութեան մէջ և այդ օտարականի հարցմունքում, որ այդպէս ուղիղ իմացել էր նորա ամենախորին մտքեր։

—Դուք երբեմն ձայներ լսումէք, հարցրեց պ. Օվրէի։

Խեղճ պ. Մօրլօ զգաց, որ մազերը ցցվումէին նորա գլխի վերայ։ Նորա միտք էր գալիս այն կատաղի ձայնը, որ խօսումէր նորա ականջում, և նա պատասխանեց մեքենայաբար. «Երբեմն»։

—Ո՜. դուք բանտադուշակում էք։

—Ո՛չ. ոչ. ես հիւանդ չեմ, թողէք ինձ դուրս գնամ այստեղից. գլուխս կկորցնեմ այստեղ։ Հարցրէք բոլոր իմ բարեկամներից. ամենքը կասեն ձեզ որ միտքս առողջ է։ Շօշափեցէք զարկս, կտեսնէք, որ տաքութիւն չունիմ։

—Խեղճ իմ քեռի. ասաց Ֆրանսուա. չէ իմանում թէ խելագարութիւնը առանց տաքութեան հիւանդութիւն է։

—Պարոն, աւելացրեց բժիշկը, եթէ մենք կարողանայինք տենդ տալ մեր հիւանդներին, ամենքը կառողջացնէինք։

Պ. Մօրլօ ընկաւ աթոռի վերայ։ Նորա քեռորդին չարունակումէր չափել բժշկի սենեակը մեծ քայլերով։

—Ազնիւ պարոն, ասաց Ֆրանսուա, ես սաստիկ տխուր եմ քեռուս պատահած անբաղդութեան մասին։ Բայց իմ համար մեծ մխիթարութիւն է հաւատալ նորան ձեր նման մարդի հոգացողութեան։ Ես կարդացի ձեր զարմանալի գրուածը «Մտաւոր Մենամոլութիւն». այդ ամենաերևելի գիրք է, որ տպված է եղել այդ տեսակներից «Մտքի Հիւանդութիւն» գրքից յետոյ, որ չարադրեց մեծ Եսկիրօլը։ Քանի մի օր առաջ ես նախաճաշումէի Սալպէտրիէրի պահակի սրահում աշակերտների հետ միասին։ Այնտեղ բարեկամ մի ունիմ ես կարելի է ճանաչումէք նորան. պարոն Տավիէն։

—Ես լսել եմ, որ այդ երիտասարդը խոստանումէ ապագայում երևելի բժիշկ լինել։

—Բոլոր այն պարոններ հաւատացրին ինձ, որ եթէ իմ քեռին կարող էր առողջանալ— այդ միայն ձեր բժշկութեամբ։ Ես գիտեմ վերջապէս, որ դուք իբրև հայր էք ձեր հիւանդների համար. այդ պատճառով ես ամաչումեմ ևս խնդրել ձեզանից լաւ պահել պ. Մօրլօն։ Ինչ որ վերաբերվումէ նորա թոշակի գնին, դուք ինքնին կնշանակէք։

Այսպէս խօսելով նա հանեց իւր քսակից հազար ֆրանկանոց տոմսակ և դրեց արագութեամբ հնոցի վերայ։

—Ես պատիւ կունենամ ներկայանալ ձեր առաջ եկող շաբաթին մի օր։ Որ ժամին կա- ... ... դառնենս

—12 ժամից մինչև 2-ը։ Իսկ ես մինչ տանն եմ. Բարով մնացէք, պարոն։

—Կանգնեցրէք նորան, աղաղակեց պ. Մօրլօ, մի թողէք որ գնայ։ Նա է խելագարը։ Ես ձեզ կմեկնեմ նորա ցնորքը։

—Հանգստացէք, սիրելի քեռի. ասաց Ֆրանսուա, հեռանալով։ Ես թողնում եմ ձեզ պ. Օվրէի մօտ. սա կհոգայ ձեր մասին։

Պ. Մօրլօ կամենում էր վազել իւր քեռորդու յետևից, բայց բժիշկը բռնեց նորան։

—Ինչպիսի արկած է, գոչեց խեղճ քեռին, ոչ մի յիմարութիւն չէ ասում։ Եթէ նա փոքր ինչ միայն անհանճար խօսէր, դուք իսկոյն կնշմարէք, որ խելագարը ես չեմ։

Ֆրանսուա արդէն դուռը բացել էր, բայց նա յետ դարձաւ մի քանի ժամանակից յետոյ, իբրև թէ մոռացել էր մի բան. գնաց ուղիղ դէպի բժիշկը և ասաց նորան.

—Պատուելի պարոն. քեռուս հիւանդութիւնը միակ պատճառ չէ, որ բերեց ինձ այստեղ։

—Ախ, երանի քըթմնջեց պ. Մօրլօ, որը փոքր ինչ յոյս ստացաւ։

Երիտասարդը շարունակեց. «Դուք մի դուստր ունիք»։

—Ի վերջոյ, աղաղակեց ողորմելի քեռին։ Դուք վկայ էք, որ հարցրեց թէ դուք մի դուստր ունիք։

Բժիշկը պատասխանեց Ֆրանսուային. «Այո, պարոն։

—Դուք մի դուստր ունիք—օրիորդ Կլարա Օվրէի։

—Ահա, լսում էք. ես ձեզ արդէն ասել էի։

—Այո, պարոն, կրկնեց բժիշկը։

—Նա Նիսի ջրերի վերայ էր երեք ամիս առաջ իւր մօր հետ։

—Կեցցէ, կեցցէ. գոչեց պ. Մօրլօ.

—Այո, պարոն. պատասխանեց պ. Օվրէի։

Պ. Մօրլօ վազեց դէպի բժիշկը և ասաց. «Դուք այստեղի բժիշկ չէք կարող լինել. դուք այս խելագարանոցի հիւանդներից մին էք։

—Բարեկամ, պատասխանեց նորան բժիշկը, եթէ դուք խելացի չէք մնայ. մենք ձեր վերայ կածենք սառն ջուր։

Պ. Մօրլօ հեռացաւ զարհուրած. նորա քեռորդին շարունակեց.

—Պարոն, ես սիրում եմ ձեր աղջիկը և յոյս ունիմ, որ նա ևս սիրում է ինձ. և եթէ նա չէ փոխվել դէպի ինձ սեպտեմբեր ամսից, ես պատիւ ունիմ խնդրել ձեզանից թոյլտւութիւն ամուսնանալ նորա հետ։

Բժիշկը պատասխանեց. «Ես բաղդ ունիմ խօսել պ. Ֆրանսուա Թօմասի հետ։

—Նորա հետ իսկ, պարոն. ես լաւ կանէի, եթէ սկսէի խօսակցութիւնս ձեզ հետ իմ անուն յայտնելով։

—Պարոն, կարող եմ ձեզ ասել, որ շատ ժամանակ սպասել տուիք ձեզ։

Այս րոպէին, բժշկի ուշադրութիւնը դարձրեց իւր վերայ պ. Մօրլօ, որ մաքրում էր իւր ձեռներ մի տեսակ կատաղութեամբ։

—Ինչ է պատահել ձեզ, սիրելի բարեկամ, հարցրեց նա իւր ամենաքաղցր ձայնով։

—Ոչինչ, ոչինչ, ես միայն մաքրում եմ ձեռներս։

—Ինչի։

—Մի բան ինձ նեղացնում է։

—Ցոյց տուէք։ Ես ոչինչ չեմ տեսնում։

—Դուք չէք տեսնում։ Այն այստեղ մատների մէջ։ Ես լաւ եմ տեսնում, հաւատացնում եմ։

—Ինչ էք տեսնում։

—Իմ քեռորդու հարստութիւնը։ Վեր առէք նորան. պ. Օվրէյ, ես ազնիւ մարդ եմ եղել միշտ։ Ես երբէք ոչ ոքին վնաս չեմ տուել։

## 4.

Մինչդեռ բժիշկը ուշադրութեամբ լսում էր պ. Մօրլօի առաջին խոստովանանքը, դարմանալի փոփոխութիւն պատահեց Ֆրանսուայի հետ։ Նա այլայլւում էր, մրսում էր, ատամները կափկափւում էին սաստիկ։ Պ. Օվրէի դարձաւ նորան հարցնելու թէ ինչ էր զգում նա։

—Ոչինչ, պատասխանեց, ձեր դուստրը գալիս է, ես լսում եմ նորա քայլերը, ուրախութիւնը ինձ թուլացնում է։ Երջանկութիւն թափւում է իմ վերայ ինչպէս ձիւն։ Պ. Օվրէյ, տեսէք, թէ ինչ է պատահում գլխիս հետ։

Պ. Մօրլօ վազեց դէպի նա, աղաղակելով. «Բաւական է յիմարութիւն խօսել։ Ես չեմ կամենում, որ քեզ խելագար կարծեն, կասեն որ ես եմ գողացել քո միտքը։ Ես ազնիւ եմ։ Բժիշկ, տեսէք ձեռներս, որոնեցէք գրպաններիս մէջ. ուղարկեցէք տունս Շարոնի փողոցում սուրբ Անտօնի արուարձանում, բացէք բոլոր արկղները. կտեսնէք, որ ոչ ոքից գողացած բան չունիմ ամենեւին։

Բժիշկը շատ դժուար դրութեան մէջ էր այս երկու հիւանդներ տեսնելով, երբ դուռը բացվեցաւ և Կլարա մտաւ իւր հօր յայտնելու, որ նախաճաշիկը պատրաստ էր։

Ֆրանսուան վերկացաւ իբրև թէ ազդմամբ. բայց նա միայն մօտիլ հանդիպեց օրիորդ Օվրէյին։ Մարմինը ծանր ընկաւ աթոռի վերայ. հազիւ թէ կարողացաւ մի քանի խօսք արտաբերել։

—Կլարա, ես եմ։ Ես սիրում եմ ձեզ։ Կամենում էք. . . . .

Նա ձեռը դրեց ճակատի վերայ։ Նորա դեղին երեսը յանկարծ կարմրեց. քնքեր սաստիկ զարկւում էին. Նա զգում էր յօնքերի վերայ հզօր ճնշում։ Կլարա, աւելի մեռած քան կենդանի, վեր առաւ նորա ձեռները, որոնց կաշին չոլացել էր, և զարկը այնպէս ամուր էր, որ թշուառ աղջիկը զարհուրեց։ Այսպէս չունէր նա յոյս պատահել նորան։ Քանի մի րոպէից յետ, քթի ծայրերը դեղնացան, նա սկսեց փսխալ և պ. Օվրէի խիկոյն ճանաչեց մաղձաւոր տենդի բոլոր նշանները։

—Ինչ անբաղդութիւն է. ասաց նա, որ այս տենդը չպատահեց նորա քեռու հետ։ Բոլորովին կառողջացնէր նորան։

Նա զարկեց զանգակ. եկաւ սպասաւորը, յետոյ երևեցաւ և ծերունի Օվիլի, որը Ֆրանսուան հազիւ թէ ճանաչեց, այնպէս թուլացել էր նա։ Նոքա հարկադրված էին պառկեցնել հիւանդը անյապաղ։ Կլարա առաջարկեց իւր սենեակ և անկողին, որը գեղեցիկ և մաքուր էր սպիտակ վարագոյրներով. սենեակը փոքր էր և համեստ զարդարված. լի մեծ հաւաքվելով կապոյտ չինական ամաններում։ Չորսի վերայ ելնում էր մեծ եղնդեղնափոր

բաժակ. այդ միակ պարգևն էր, որը Կլարա ստացել էր իւր սիրեկանից։ Եթէ տենդ ու-
նենամ, ընթերցող—բարեկամ, ես ցանկանումեմ ձեզ այդպիսի հիւանդանոց։

Մինչդեռ հոգւումէին Ֆրանսուայի շուրջ, վախեցած քեռին անհանգիստ էր մնում սե-
նեակում, կանգնեցնելով բժիշկը, գգուելով հիւանդը, վերառնելով տիկին Օվրէյի ձեռը և
աղաղակելով բարձր ձայնով.

—Ազատեցէք նորան շուտ, շուտ։ Ես չեմ կամենում, որ դա մեռնէ, ես ընդդէմ
կլինամ նորա մահին. այդ իմ պարտաւորութիւն է։ Ես նորա քեռին եմ և հոգաբարձու։
Եթէ դուք չէք բժշկի նորան, կասեն թէ ես սպանեցի։ Դուք վկայ եղէք, որ ես չեմ
ցանկանում ժառանգել դորան. բոլոր կարողութիւնը կտամ ես չքաւորներին։ Խնդրումեմ
տուէք մի բաժակ ջուր ձեռներս լուանալու համար։

Խեղճ պ. Մօղլոն տեղափոխեցին հիւանդանոցը։ Այնտեղ նա այնպէս անհանգիստ դար-
ձաւ, որ ստիպուած էին հագցնել նորան հաստ քաթանից շինած զգեստը, որ կապվումէր
յետևից և որի թևերը կարած էին մինչև ծայրը. սա այն է, որ կոչումեն ապուշութեան
զգեստ։ Հիւանդապահները հոգացին նորա մասին։

Տիկին Օվրէյ և նորա դուստրը հոգատար եղան Ֆրանսուային սէրով, թէպէտ բժշկու-
թեան մանրամասն հանգամանքները միշտ հաճոյական չէին։ Բայց ամենաքնքոյշ սէրը հա-
ւանումէ դիւցազնութիւն։ Դուք կասէք, որ այս երկու կանայք տեսնումէին իւրանց հիւանդի
մէջ մին—փեսայ, միւսը—ամուսին, բայց ես կարծումեմ, որ եթէ նա ամենևին օտար ևս
լինէր, ոչինչ չէր կորցնի դորանով։ Ջուր է հաւատալ, թէ Սէն—Վինսէն—դէ—Պօլ
հիմնեց աղօթամոլ կանանց ընկերութիւնն. նա միայն հաստատել զանազանեց այդ կանայքը
միւսներից, որովհետև ամեն կնոջ մէջ, քանի տարեկան և ինչ կարողութեան տէր որ լինի,
կայ հիւանդապահ քոյր լինելու կոչումն։

Անցկացնելով գիշեր և ցերեկ հիւանդի սենեակում, մայր և դուստր, ազատ ժամա-
նակը մխիթարումէին իւրանց, միտք բերելով անցեալը և ապագայի յոյսեր կազմելով։ Նո-
քա չէին կարող մեկնել ոչ Ֆրանսուայի երկար լռութիւնը, ոչ նորա յանկարծակի վերադար-
ձը, և ոչ պատճառը, որ բերել էր նորան Մօնտէյնի կողմը։ Եթէ նա սիրումէր Կլարան,
ինչի սպասել տուեց իւրան այդքան ժամանակ։ Միթէ նորան հարկաւոր էր իւր քեռու
հիւանդութիւն պ. Օվրէյի մօտ գալու համար։ Եթէ մոռացել էր իւր սիրեկանը, ինչի չէր
տուել պ. Մօղլոն միւս բժշկի մօտ փոխվում շատ բժիշկներ կան։ Կարելի է նա կար-
ծումէր թէ դադարել ես սիրել Կլարան մինչև որ (նորա) առաջ անկարողութիւնը ազատեց նորան սը-
խալմունքից։ Այդ անկարելի էր, որովհետև առաջ քան թէ տեսաւ նորան, խնդրեց հօ-
րից թոյլտուութիւն ամուսնանալ նորա հետ։

Այս բոլոր հարցմունքին պատասխանեց ինքն Ֆրանսուան իւր ցնորքի ժամանակը. Կլա-
րա, թողլով նորա անկողնի վրայ, ուշադրութեամբ լսումէր նորա ամէն մի խօսքը, յե-
տոյ պատմումէր նոցա իւր հօրը և մօրը, որը շուտով սկսեց ճանաչել ճշմարտութիւնը.
Այդպիսի մարդի համար, որ սովոր էր դաշակել ամենախառնակ մտքեր, և կարդալ խե-
լագարների հոգու մէջ ինչպէս կնքանշված գրքի մէջ, տենդոտի ցնորքը հասկանալի խօսակ-
ցութիւն է, և ամենախառն բանդագուշանքներ կարող են տալ փոքր ինչ լոյս։ Շուտ իմա-
ցան, որ նա խնդրող էր եղել և ինչ պատճառով. կարողացան մինչև անգամ մեկնել թէ
նա ինչպէս էր դարձել իւր քեռու խնամակալութեան անմեղ պատճառ։

Այն ժամանակ սկսվեցաւ օրիորդ Օլրէյի համար նոր երկիւղ. Ֆրանսուա խելագար էր եղել: Կարող էր նա արդեօք բժշկվել գործից այն զարհուրելի հեղձումից, որ Կլարան յառուցել էր անգիտութեամբ: Բժիշկը հաստատնումէր, թէ տենդը կարող էր դատել՝ այնքան ոչնչացնել խելացնորութիւն. այսու ամենայնիւ չկայ կանոն առանց բացառութեան՝ մանաւանդ բժշկութեան մէջ: Եթէ Ֆրանսուան առողջանար այժմ, արդեօք երկիւղ չկար՝ որ նորա խելագարութիւնը կկրկնվէր: Կհամաձայնէր թէ ոչ տ. Օլրէյ տալ իւր դուստրը իւր հիւանդներից մինին:

—Ինչ որ վերաբերվումէ ինձ, ասումէր Կլարան ժպտելով տրտմութեամբ, ես բնաւ չեմ վախենում: Ես պատրաստ եմ դնել գլուխս ի կէիւ: Ես եմ եղել նորա ցաւերի պատճառ, ես և ես պէտքէ լինիմ նորա մխիթարիչ: Մանաւանդ որ նորա խելագարութիւն պատճառեց իմ հետ ամուսնանալու խնդիրը: Երբ ես նորա կին կդառնամ, նա այն օրից ոչինչ չի ունենայ խնդրելու, նշանակումէ ոչինչ երկիւղ ևս չկայ: Խեղճ երիտասարդը հիւանդացաւ միայն անչափ սիրելու պատճառով. առողջացրու նորան, սիրելի հայր իմ, բայց ոչ ամենևին: Ես ցանկանումեմ որ նորա մէջ միայ դարձեալ այնքան խելացնորութիւն, որ սիրէ ինձ այնպէս, ինչպէս ես սիրումեմ նորան:

—Կտեսնենք, պատասխանեց տ. Օլրէյ: Սպասիր մինչև տենդը անցնէ:

Եթէ Ֆրանսուան կամաչէ կամ կախրէ իւր հիւանդութեան համար. եթէ տեսնեմ նորան մելամաղձ առողջանալուց յետոյ, պատասխանատու չեմ այն ժամանակ: Բայց եթէ, ընդհակառակն, նա կմոռանայ իւր խելագարութիւնը առանց ամօթի և չնեղանալով, եթէ կխօսէ նորա վերայ խոնարհութեամբ, եթէ նա կնայէ առանց զզուելու նորա մասին հոգացող անձներին, երկիւղ չէ կարող լինել հիւանդութեան կրկնելու մասին:

—Այո, հայր իմ, ինչի կարող է նա ամաչել իւր անչափ սիրելու մասին. դա ազնիւ և գովելի խելացնորութիւն է, որ չեն ճանաչում ցած հոգիները: Եւ ինչպէս կատէ նա իւր հոգացողները, որք անունը չէ որ արդէն մեզ է պատկանում:

Վեց օր ցնորքից յետոյ առատ քրտինք վախճան դրեց տենդին, և հիւանդը սկսեց առողջանալ փոքր առ փոքր: Երբ նա նկատեց, որ անծանօթ սենեակի մէջ էր, տեսաւ տիկին Օլրէյ իւր անկողնի մօտ նստած, նորա առաջին միտքը այն էր, որ կարծեց թէ «Զորս Եղանակ» կոչված պանդոկում էր, Նմսի մեծ փողոցում: Նորա թուլութիւնը, նիհարութիւնը և բժշկի ներկայութիւնը ազդեցին նորան ուրիշ մտքեր. նա սկսեց միտք բերել բոլոր եղածը, բայց անորոշ: Բժիշկը հասաւ նորան օգնութիւն: Նա յայտնեց Ֆրանսուային անցածը ճշմարտութեամբ և խոհեմութեամբ, ինչպէս չափումն այն մարմնի կերակուր, որը զօրութիւն է կորցրել չափ պահելով կերակրում: Ֆրանսուան լսեց իւր սեփական պատմութիւնը ինչպէս վիպասանութիւն մի, որի մէջ ոչինչ դեր չունէր ինքն, նա այժմ մի ուրիշ մարդ էր, նորոգված մարդ, և դուրս էր եկած տենդից ինչպէս գերեզմանից: Փոքր առ փոքր նորա միտքը վերադարձաւ, նորա գլխի մէջ լոյս թէ եղել էր դատարկութիւն, որ լցվումէր այժմ առանց շարժմունքի: Շուտ նա բոլորովին տիրեց իւր մտքին և բոլորովին միտք բերեց անցածը:

Այս բժշկութիւնը գիտութեան և մանաւանդ համբերութեան գործ եղաւ. որոյ մէջ կարելի էր գովել տ. Օլրէյի հայրական հոգացողութիւնը: Այդ գերազանց մարդը քաղցրութեան և քնքշութեան իշխան էր:

Դեկտեմբերի 23-ին Ֆրանսուան նստած անկողնի վերայ, զօրացած հաւի ոտքով և ձուի կէս դեղնոցով, պատմեց ամբողջ միջադէպը անայլայլապէս, առանց մոլորվելու, առանց խղճահարութեան, առանց ուրիշ շփոթման, չեմ ասում ուրախութեան, անցած երեք ամսի բոլոր պատահածը։ Կլարա և տիկին Օվրէի լաց էին լինում լսելով նորան։ Բժիշկը, իբրև թէ նշաններ ինչ գրումէր, բայց թղթի վերայ ձգումէր ուրիշ մի բան քան թէ թանաքը։ Երբ պատմութիւնը աւարտվեցաւ, առողջացածն աւելացրեց իբրև եզրակացութիւն.

—Այսօր դեկտեմբերի 23, երեք ժամին ճաշից յետոյ, ես ասացի իմ ամենապատուելի բժշկին, իմ ամենասիրելի հօր պ. Օվրէին, որի ոչ անունը և ոչ հասցէն ես այսուհետև մոռանալու չեմ։ Ազնիւ պարոն, դուք մի դուստր ունիք, օրիորդ Կլարա անունով. ես տեսել եմ նորան այս ամառը Էմսի ջրերի վերայ իւր մօր հետ միասին. ես սիրումեմ նորան, նա ինձ բաւական ապացուցեց, որ նա էլ սիրումէ ինձ։ Եթէ դուք չէք վախենում, որ հիւանդութիւնս վերադառնայ, ես պատիւ ունիմ խնդրել նորան յամուսնութիւն։

Բժիշկը փոքր գլխով նշան տուեց. բայց Կլարա փարեցաւ նորա վզով և համբուրեց ճակատը։ Աւելի լաւ պատասխան չէ կարելի ցանկանալ այդպիսի խնդիր յայտնելուց յետոյ։

Այդ մի և նոյն օրը, պ. Մօրլօ հանգստացած և ազատված իւր ազդեցութեան զգեստից, վերկացաւ առաւօտեան 8 ժամին։ Վերկենալով անկողնից, նա վերառաւ իւր հողաթափները, շուտ տուեց նոցա, քննեց մեծ ուշադրութեամբ և տուեց հիւանդապահին աղաչելով տեսնել, թէ պարունակումէին նոքա արդեօք 30,000 ֆրանկ տարեկան շահը։ Այս բանից յետոյ միայն համաձայնեց հագնել նոցա։ Նա ամանդրվեցաւ կէս ժամից աւելի, կրկնելով. «Ես չեմ կամենում որ ասեն, թէ քեռորդուս հարստութիւնը մոյկերիս մէջ է»։ Թափ տուեց և ս բոլոր իւր զգեստը պատուհանից, նոցա մինչև վերջին ծալը քննելոց յետոյ։ Երբ հագնվեցաւ խնդրեց մատիտ և գրեց իւր սենեակի չորս պատի վերայ.

Մի ցանկանար ուրիշի հարստութիւն։

Յետոյ սկսեց սրբել ձեռներ անհաւատալի արագութեամբ իւրան հաստատելու, որ Ֆրանսուաի կարողութիւնը նոցա վերայ չէր մնացել։ Նա մաքրեց եղունգները մատիտով, համարելով մինից մինչև տասը, և վախենալով մոռանալ մինը նոցանից։

Պ. Օվրէի սովորաբար գնաց նորան տեսութիւն։ Պ. Մօրլօ կարծեց, որ դատաւորին ներկայացել էր, և խնդրեց, որ քննէ նորան։ Բժիշկը աշխատեց իւրան ճանաչել տալ և ասաց որ Ֆրանսուան առողջացել էր։ Խեղճ մարդը հարցրեց թէ գտել էին արդեօք փողը։ «Որովհետև քեռորդիս այստեղից դուրս է գնալու, ասաց նա, նորան իւր փողը հարկաւոր է. որտեղ է նա։ Ես չունիմ. բայց կարելի է անկողնիս մէջ է»։ Եւ նա այնպէս շուտ վեր ի վայր դցեց իւր անկողինը, որ ժամանակ չունեցան կանգնեցնել նորան։

Բժիշկը դուրս գնաց, նորա ձեռը սեղմելով. նա սրբեց այն ձեռը մեծ հոգացողութեամբ։ Նորա առաջ դրին նախաճաշիկ. նա հետազօտեց գինջակ, բաժակ, դանակ, աման, կրկնելով որ չէր կամենում ուտել իւր քեռորդու հարստութիւնը։ Հացը կերած, լուաց ձեռներ մեծ զգուշութեամբ։ «Պատառաքաղը արծաթեայ է, ասաց նա, կարող է կպչել ձեռիս»։

Պ. Օվրէի յոյս չէ կորցնում առողջացնել դորան ևս, դարձեալ ժամանակ է հարկաւոր. Մանաւանդ ամառն և աշնան են լաւացնում բժիշկները խելագարներ։

Մօսկվա։ Օրիորդ ՍԱԼՈՄԷ ՍՏԵՓԱՆԵԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ (Մ. Էմինի յօդվածից)։

## 5.

### Դանիէլի գրեր։

Դառնանք այժմ տառերի նշաններին։ Այն այբուբենը, որ գործ են ածում Հայերը մինչև այսօր, կոչում են թէ ինքն այս ազգը, և թէ արևմտեան ուսումնականներ «Մեսրոպի Այբուբեն»։

Սորա գիւտը հայկական ուսումնականները միաձայն յատկացնում են Մեսրոպին։ Եւ ուսումնականներ, և բոլոր նշանաւոր գրողներ, որոնք ապրում էին հայկական այբուբեն գտնելու ժամանակը—Կորիւնը, Մովսէս Խորենացին, Ղազար Փարպեցին և բոլոր յետագայ պատմագրողներն և տարեգրողներն համարում են սուրբ Մեսրոպը հայկական այբուբենի հնարող, ստեղծող։

Այս միակ թագաւորող և ընդհանրապէս ընդունված կարծիքին հետևում են և եւրոպական ուսումնականներն, որոնք նուիրված են հայկական գրականութիւնը ուսումնասիրելուն. Սէն—Մարտէնը, Նեօյմանը և ուրիշները այլապէս չեն մտածում այս հետաքրքիր գրականական խնդրի մասին։ Հայկական նոր ուսումնականներից միայն հայր Ինճիճեանը իւր «Հայաստանի Հնախօսութիւններ»ի մէջ մի փոքր այլապէս է նայում այս խնդրին, բայց ինչպէս երևում է, նա չէ կամեցել աշխատ լինել պարզելու այս խառնակված խնդիրը։ Եթէ ուսումնասիրենք ուշադրութեամբ այն աղբիւրներ, որոնք խօսում են հայկական գրերի սկզբի վերա, քանի մի կշռադատութիւնների օգնութեամբ կարելի կլինի նոր լոյս գցել հայկական գրականութեան պատմութեան այս տեղի վերա։

Կորիւնը, սուրբ Մեսրոպի աշակերտը, որ ապրում էր 5 դարի սկզբում, թողեց մեզ իւր ուսուցչի կենսագրութիւնը, որի մէջ պատմելով թէ ինչպէս սուրբ մարդը հնարեց հայկական այբուբեն, հարևանցի ասում է քանի մի խօսքեր, որոնք արժանի են մեր ուշադրութեան։ Նա ասում է. «ս. Սահակը և Մեսրոպը, քննելով արդարև համոզվեցան, որ Դանիէլի գրերը չեն կարող յայտնել ամբողջապէս հայկական լեզւի վանկեր և կապակցութիւններ։ Սորան հարկաւոր է աւելացնել, որ այս գրերը մոռացված և պատահմամբ գտնված էին» (1)։ Երևում է, որ նախ քան ս. Մեսրոպը հնարել է հայկական գրեր, կռապաշտ Հայաստանում գտնվում էր այբուբենը, որ գործ է ածվում եղել անյայտ ժամանակներից։ Այդ այբուբենն է ահա գործ ածվում եղել նշաններից ետ և մեսրոպեան ամբողջ այբուբենից առաջ ժամանակում։ Այդ այբուբենն է ահա յայտնել կռապաշտ Հայերի մտքեր, շատ առաջ քան թէ սկսեց գործ ածել մեր ազգը ասորական, պարսկական և յունական տառեր։ Երբ որ սկսվեցաւ այս օտարազգի տառերի գործածութիւնը Հայաստանի հողի վերա, այն ընկել է գործածութենից հին այբուբենը դուցէ բոլորովին քաղաքական պատճառներով։ Սոյն այս այբուբենը, օտարոտի անգիտութեամբ, Դանիէլեան են կոչում բոլոր հին հայկական գրողները։

Այս հիմով և յետագաները սորան ուրիշ անուն չեն տալիս, եթէ ոչ—Դանիէլեան։ Բայց մենք տեսնում ենք Կորիւնի խօսքերից, որ նա հնարված չէր «Դանիէլից»,

1) Կորիւն, Ս. Մեսրոպի կենսագրութիւն։

այլ կար դեռ առաջ և նորէն գտնվել է պատահմամբ, բայց թէ ինչ կերպով—նա բացայայտել չէ կարողանում։ Կորիւնը աւելի ևս պարզում է խնդիրը, ասելով, որ այս պատահմամբ գտնված տառերը «հայկական այբուբենի գրեր էին» (1)։ Մովսէս Խորենացին իր Պատմութեան մէջ, խօսելով այս այբուբենի մասին, այս բառերով է բացատրում դորան. «Հաղուց հնարված տառեր (2)»։ Այս այբուբենի հնուց լինելութեան մասին յիշում է նոյնպէս և Ղազար Փարպեցին, մէջ բերելով այն բառերը, որ ասել է մի մարդ հայկական թագաւորին Վռամշապուհին, «թէ ես տեսայ հայկական գրեր մի եպիսկոպոսի մօտ մի գիւղում (3)» Մեսրոպի գիւտից առաջ։ Նա միւս տեղ, թէ «Սուրբ Մաշտոցը (Մեսրոպ), տեսնելով, թէ ինչ դժվարութիւնների հետ կապված է հայկական երիտասարդների լուսաւորութիւնը, որո՛ք նորա ժամանակում հարկադրված էին տեղեկութիւններով հասնելու իրանց հայրենիքից դուրս ասորական դպրոցներում և ասորական լեզուով, նեղանում էր ոչ սակաւ, մանաւանդ երբ մտածում էր. «որ կան արդէն հայկական լեզուի նշաններ (4), որոնց օգնութեամբ կարելի է յայտնել միտքը, ձեռը չտալով օտար փոխառած տառերին (5)»։ Վերջապէս նոյն այս պատմագրողը մի ուրիշ տեղ տալիս է յիշված եպիսկոպոսի անունը, ասելով. «Բարեպաշտ այրը. Դանիէլ եպիսկոպոսը ունէր հայկական նշաններ (6)»։

Այս բոլորը—սուրբ Մեսրոպի աշակերտների և ժամանակակիցների բառերն են, որոնք խօսելով Մեսրոպեան գիւտի մասին, բաւական սակաւ են յիշում Դանիէլեան կոչված այբուբենը։ Զննելով այս տեղեկութիւնների սակաւութեան, նոցանից կարող ենք եզրափակել, որ արդարև հնագոյն կռապաշտական ժամանակը Հայերը ունեցել են իրանց սեփական այբուբեն։ Յետագա գրողները, որո՛ք մեծ յարգ ունին Հայերի աչքում, ինչպէս Յովհաննէս կաթողիկոսը (7), Ստեփանոս Ասողիկ (8), Սամուէլ Անեցին (9), Կիրակոս Գանձակեցին (10), Վարդանը և ուրիշներ, որպէս կատարված գործի անտարբեր պատմողներ, բա-

1) Կորիւն, ս. Մեսրոպի կենսագրութիւն։

2) Մովսէս Խորեն. գիրք 3, գլ 3։

5) Ղազ. Փարպ. Պատմութիւն, Վենետիկ, 1793, եր. 27։

4), 5) և 6) Նոյն տեղ, եր. 27։

7) Յովհ. Կաթողիկոսի Պատմութիւն, Մոսկվա, 1853, եր. 32։

8) . . . Սուրբն Մեսրովպ եղև նախադասող և վարդապետ ըստ հայումն նշանագրութեան և դպրութեան. . . . Թէոդոս փոքր. . . ի սորա աւուրս էր սուրբ հայրապետն Հայոց Սահակ, յորոյ աւուրս դպրութիւն Հայոց լեզուին եթ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ ասորւոց կարգեցաւ. իսկ զեօթն գրոյն պակասութիւնն Մեսրովպ երանելի տարօնեցի խնդրուածովք յաստուծոյ առնու»։ (Չամչեան, հ. I, եր. 756)։

9) Նա. Մաշտոց, որ և Մեսրոպ երանելին, և մեծն Սահակ զԴանիէլի նշանագիրս յօրինէ. ընկերօք հանդերձ, և յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք զնոյն եղանակէ, որով և դպրութիւնք և գիրք աստուածային ուղղեալ թարգմանէին»։ (Սամուէլ Անեցի, պ. Էմինի մատենադարանի ձեռագիր)։

10) «Եւ ծանուցին զխորհուրդն Վռամշապհոյ թագաւորին, և նա ասաց—թէ մինչ էի ես ի կողմանս Ասորւոց, ասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի Դանիէլ անուն. թէ ու-

ւական դռնացուցիչ լոյս են գցում այս հնագոյն այբուբենի վերա։ Այս գրողներից հաղորդած տեղեկութիւնների մէջ Վարդանի տեղեկութիւնը անկասկած առաջին տեղ ունի։ Առաջ բերենք այստեղ նորա Պատմութենից այս տեղը, որի վերա հիմնուելով գլխաւորապէս մեր կարծիքը հայկական հնագոյն այբուբենի լինելութեան մասին։

—«Սորա (Վռամշապուհի) եօթներորդ տարին և Արտաշիրի, Շապուհի որդու առաջին տարին, սուրբ Մեսրոպը յօրինում է հայկական գրեր։ Ասորի Դանիէլի մօտ հին ժամանակներից գտնուած 22 գրեր, մեր լեզուի ընդարձակութիւնը չպարզելու (արտայայտել չկարողանալու) պատճառով, մոռացուած են եղել հներից, բաւականանալով յոյն, ասորի և պարսիկ գրերով։ Եւ Մեսրոպը չէր կարողանում նոցանով թարգմանել աստուածաշունչ մատեանը հայերէն լեզուով, ուստի իւր անձը տալով աղօթքին, սուրբ Սահակի գործակցութեամբ, տալիս է նորան Աստուած 14 գրեր, իւր Աջով գրոշմելով նորա առաջ, ինչպէս մեծ Մովսէսին Սինա սարի վերա, այնպէս և սորան Բալուա սարի վերա. . . . . Եւ թէ եղած է հայերէն գիրը հնուց, ապացուցվեցաւ Լևոն Թագաւորի ժամանակներում, որովհետև մի դրամ գտնվեցաւ հայերէն գրով, որ դրոշմած ունէր հայկազեան կռապաշտ թագաւորների անունը։ Սորա (հին գրի) թերութիւնը լցրեց աստուածախառն շնորհով լցված մեր Մեսրոպը (1)»։

Այս հատուածի մէջ մե՛նք գտնումենք այբուբենի հնութեան և նորա լինելութեան ապացոյցը Հայաստանում Մեսրոպից առաջ։ Բացի նորանից, որ Ուսումնական Վարդանը Դանիէլեան այբուբենի տառերի թիւը որոշելու ժամանակը ասում է նոցա հնութեան մասին—շատ նշանաւոր է և այն ապացոյցը, որ բերում է նա իւր կարծիքը հաստատելու համար, այն է—Լևոնի ժամանակ գտնված դրամը (Կիլիկիայի մէջ), դրամը հայկական տառերի այնպիսի վերնագրով, որ առաջ էր բերում կռապաշտ թագաւորի անունը հայկազեան ցեղից։ Եթէ մենք «անուն կռապաշտ թագաւորաց հայկազանց» դարձվածի մէջ «հայկազանց» բառով պիտի հասկանանք ոչ թէ «Հայկազեան, Հայկի ցեղից», ինչպէս թարգմանել ենք մենք, այլ միայն «հայկական թագաւորների», այն ժամանակն էլ «կռապաշտ» ածականը թոյլ կտայ եզրափակելու, որ հայկական այբուբենը կար 5 դարից շատ առաջ։ Յետոյ—եթէ յիշված դրամի վերնագիրը դրոշմված էր հայկական տառերով, և եթէ Լևոն Թագաւորի ժամանակը կարողացան կարդալ այն վերնագիրը և գտնել նորա մէջ «հայկական կռապաշտ թագաւորի անունը»—ուրեմն դուրս է գալիս. որ այս հին տառերի ձևը պիտի բոլորովին միատեսակ լինէր Մեսրոպեան կոչված այբուբենի տառերի ձևի հետ, այսինքն այն այբուբենի, որ գործ է ածվում և այժմ Հայերի մէջ։

Ուսումնական Վարդանի խօսքերը, որ հաղորդումէ մեզ այս թանկագին տեղեկութիւններ հին հայկական այբուբենի մասին, հաստատութիւն են գտնում ուրիշ երևելի յիշատա-

---

նիմ ես նշանագիր հայերէն լեզուի» և ես անփոյթ արարի առ ժամն. . . բայց հայեցեալ տեսին, զի ոչ էր բաւական (նշանագիրքն Դանիէլի) զամենայն սիղոբայս ողջ ածել և զկապկապս և զբառս»։ (Կիրակոս Գանձակեցի, Մոսկվա 1858, եր. 15)։

1) Վարդանի Պատմութիւն, Մոսկվա, 1861 եր. 70; Պ. Էմինի ձեռագիրը եօթներորդ թուի փոխանակ ասում է հինգերորդ տարի։

կարանով, որ գտնում ենք երբեմն հին հայկական ձեռագիրներում: Մեր խօսքը առկատառ գրվածի մասին է, որ բաղկանում է 10 կամ 12 տողերից և յատկացնվում է Դաւիթ փի-լիսոփային (5 դ.): Այստեղ հեղինակը այլաբանաբար է ներկայացնում տառը, որ դ'-մաւորվելով, թւում է բոլոր իւր յատկութիւնները: Այս իւր յատկութիւններից տառը ա-ռաջ է բերում և հետևեալը.

«Իմ հասակի չափն էր երկու անգամ տասն երկու, այժմ եմ երեք անգամ տասն եր-կու (1)»:

Ուրեմն Վարդանի կարծիքը հայկական այբուբենի հնութեան մասին հիմնված է հին աւանդութեան վերա, որ միշտ մնացել է Հայերի մէջ: Դիմաւորված տառը ասում է իւր վերա, որ նա առաջ բաղկանում էր 24 տառից, իսկ յետոյ մեծացաւ մինչև 36: Այս 24 տառերը (Վարդանի 22) նոքա են երևի, որոնք կազմում էին Դանիէլեան կոչված այբուբենը: Զանազանութիւնը երևում է միայն տառերի թւի մէջ, որ ոչինչ նշանակութիւն չու-նի. մենք կաշխատենք բացատրել այս ներքև: Կասենք նոյնպէս, որ բացի այս տեղեկութ-ներից Ստեփանոս Ասողիկի մէջ (10 դ.) մենք գտնում ենք հետևեալը.

«Թէոդոս փոքրի ժամանակ ապրում էր Հայերի սուրբ հայրապետ Սահակը, որի օրերում բոլորեցաւ հայկական լեզուի այբուբենը 29 տառերից ասորի փիլիսոփա Դանիէլից, իսկ պա-կաս 7 տառերը ստանում է երանելի Մեսրոպ տարօնեցին Աստուծուց աղօթքներով»: Այս-տեղ նշանաւոր է մեր համար ոչ այնքան Դանիէլեան այբուբենի տառերի թ ի ւ ը, որքան բ ա ժ ա ն ո ւ մ ն, որ անում է Ասողիկը յիշված այբուբենի և Մեսրոպից գտած 7 տառե-րի: Այս հանգամանքից և վերոյիշվածներից կարող ենք անել այն եզրակացութիւն, որ մենք արդէն ասացինք, այսինքն որ Վարդանի կարծիքը հնագոյն այբուբենի լինելութեան մասին Հայերի մէջ վերին աստիճանի հաւանական է և բոլորովին անհիմն չէ, ինչպէս մեծ անմասդրութեամբ կարծում է հայր Մ. Չամչեանը (2):

Դանիէլեան կոչված, իսկ մեր ասածով, հին հայկական այբուբենը, Վարդանի խօսքե-րով բաղկանում է 22, Ասողիկի խօսքերով 29, այլաբանական գրվածի խօսքերով—24 տառերից: Հարցնում ենք. քանի տառերից էր բաղկանում ուրեմն այս հին այբուբենը, ո-րոնք էին այս 22 կամ 24 տառեր, որը մութ կերպով յիշում է մի կողմից Վարդանը իսկ միւս կողմից—այլաբանական գրվածը:

(Կշարունակվի):

Ս. ՍՏԵՓԱՆԷ

---

1) Առաջ ենք բերում այստեղ ամբողջ այս փոքրիկ գրվածը.

Ձեռք ամենակալին ստեղծին զիս և բարձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս:

Չափ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան:

Կամ յարևելս և խօսիմ յարևմուտս. ի հիւսիսոյ և ի հարաւոյ բարբառիմ. յանչունչա-ձայն ածեմ և ի մեռեալս բարբառիմ:

Անուն իմ բաղկանայ երեք տառիւք, երրեակն ի միակէն, միակն ի հնգեկէն և հըն-գեակն ի հինգ հազարացն:

Ծնունդ իմ ի ջրոյ է և մահ իմ ի նմանէ:

Ի հրոյ զարհուրիմ, և ի լեմս նստեալ արհամարհեմ զնոսա:

Եթէ կարես ճաչակեա, եթէ չկարես ի զատ կաց: (Դաւթի փիլիսոփայի իմաստութիւն դ. Էմինի մատենադարանի ձեռագրից):

2) Պատմ. Չամչեան, մ. I, եր. 755—765:

# ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ.

## I.

«Հայկական Աշխարհը» ուրախութեամբ պատրաստ է գտնւած իւր իմաստուն ընթերցողներին հաղորդելու օրէնսդրութեան այն հետևանքները, որ վերջին ժամանակներում տեղի են ունեցած Ռուսիայում հոգևորականների վիճակը բարւոքելու նպատակով։ Այո, այս նոր օրէնքները ուղղապէս վերաբերվում են ռուս հոգևորականներին, բայց աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ բարեխնամ կառավարութեան առաջ հայկական հոգևորականները ռուս հոգևորականների հետ հաւասար արտօնութիւններ և առանձնաշնորհութիւն են վայելում, այդ պատճառով ռուս հոգևորականների համար հրատարակված հիմնական օրէնքները հայկական հոգևորականներին ևս պատկանում են ասելով, ամենևին սխալվելու չենք։ Այստեղ օրէնսդրութեան նպատակն է պաշտպանել հպատակ կարգերի, անձնական, բնական իրաւունքները և ապահովել նոցա վիճակը ամեն կերպով։ Ուրեմն եթէ այսօր շնորհվում է մի բարերար կարծված օրէնք մի որևիցէ դաւանութեան հոգևորականներին, հարկաւ վաղիւ պէտք շնորհվի միւս դաւանութեան հոգևորականներին, որովհետև օրէնքը խտրութիւն չէ դընում դաւանութիւնների մէջ, այլ պաշտպանելով իւրաքանչիւրի բնական իրաւունքները, պահանջում է, որ ամենքը տան «զկայսերն կայսեր» ներգործօղ օրէնքի համեմատ և «զԱստուծոյն Աստուծոյ» ներքին համոզման և ներքին ձայնի զօրութեամբ։ Օրէնքը պահպանում է մի որևիցէ տէրութեան հաւասարակշռութիւնը, ուրեմն և գոյութիւնը.

. . . . . .

«Հայկական Աշխարհը» իւր ժամանակին հրատարակեց այն վերանորոգութիւնները, որոնք անցած տարի երևեցան հոգևորականութեան վիճակին վերաբերված օրէնքների մէջ։ Հաղորդելով այս նորութիւնները, «Հայկական Աշխարհը» հարևանցի կերպով ցոյց տվեց այն արդիւնքները, որոնք բնական պայմանների մէջ կարօղ են ծնվել և հոգևորականների առաջ բարոյական ներգործութեան լայն ասպարէզ բանալ։

Ներկայ 1870 թիւը հոգևորականների համար առաւել պայծառ և փառաւոր սկիզբն ունեցաւ։ Հեռագիրը յունվարի 16-ին Պետերբուրգից հաղորդեց, թէ բարձրագոյն հրամայված է առանձին յանձնաժողով կազմել նոր հոգևոր դատաստանական դրութիւն խմբագրելու 1864 թ. դատաստանական վերանորոգութեան սկիզբների համեմատ։ Ինչպէս և երբ պիտի կատարէ յանձնաժողովը իւր վերայ դրված սրբազան պարտքը,—տակաւին յայանի չէ։ Միայն աչքի առաջ ունենալով կայսերական կառավարութեան մարդասէր և առաջադէմ ուղղութիւնը, կարելի չէ կասկածել, որ յանձնաժողովը կկատարէ իւր գործը մարդասէր կայսեր մարդասէր նպատակներին համեմատ,—շուտ և լաւ կերպով և կայսրութեան այն անկիւն մասը, ուր անձնական մարդկային իրաւունքները որոշված և սահմանված չլինելով . . . , կհովանաւորվին դատաստանական նոր ձևի տակ, որ հովանաւորում է հասարակութեան բոլոր կարգերը և անխտիր պաշտպանում է իւրաքանչիւրի սեփական իրաւունքը, եթէ անձնական կամքը յանդգնում է ոտնահարել։

Մենք այստեղ աւելորդ ենք համարում ասել, թէ այս վերանորոգութիւնները որքան փրկարար ներգործութիւն պիտի ունենան Ռուսիայի առհասարակ հոգևորականների ներքին և արտաքին կեանքի վերայ։ Ժամանակը բոլորը ցոյց կտայ։ Յանձնաժողովը իւր գործը կա-

[illegible], խմբագրվելու կանոնը բարձրագոյն հաստատվելով օրէնքի զօրութիւն կառնէ. փաստերը. երողութիւնները բազմանալով, հասարակութեան սովականութիւն կլինին,—այն ժամանակ յայտ յանդիման կտեսնենք այս վերանորոգութեան փրկարար արդասիքը։ Պատմական բերմունքը խանգարել են կղերի դրութեան բնական պայմանները և տվել են նորան, իւր կոչման օտար պայմաններ։ Բնական է, որ եթէ երբեր իւրանց բնական պայմանից հեռանումեն, անկարող են գտնվում իւրանց անմիջական նպատակները իրագործել։ . . .

. . . . Որքան ժամանակ է, որ զգալի է հոգեւորականութեան այս անբնական դրութեան վերանորոգութիւնը իմացական սկիզբներով.

. . . :

Օրէնսդրութիւնը անտարբեր չէր նայում այս հասարակական աղաղակող թերութիւնների վերայ. օրէնքի զօրութեամբ նա կամենումէր ոչնչացնել այն հիւանդութիւնը, որ կեղեքումէր այդ գործարանականքը։ Բայց հմուտ բժիշկը մի ցաւ բժշկելու ժամանակ նախապէս պիտի աշխատէ ցաւի տեղը որոշել և որակութիւնը. որոշ վեցաւ տեղը և որականութիւնը,—ճարը պատրաստ է։ Այդպէս և օրէնսդրութիւնը մի հասարակութեան խանգարված դրութիւնը բարւոքելու համար պիտի աշխատէ իւր ուշադրութիւնը և կարողութիւնը դարձնել այն տեղերին, այն հանգամանքներին, որոնք անմիջական պատճառ են հասարակական բարւոքելու խանգարման։ . . .

. . . . :

Ռուսիայում մինչև վերջին ժամանակ, ընդհանրապէս ասած, հոգեւորականների վիճակը ոչ մի յարաբերութեամբ ապահովված չէր։ Նոցա թէ նիւթական և թէ անձնական վիճակը բողդի բերմունք էին, քան թէ ներքին արժանաւորութեան հետևանք.

. . : Այսուհետև ուրեմն զարմանալի էր, որ հոգեւորականների մէջ երեւումէին այն թերութիւնները, որոնք արգելք էին լինում նոցա կատարելու իւրանց անմիջական պարտականութիւնները,—ներգործելու ժողովրդի վերայ, որպէս առաջադէմ ուսուցիչներ բարոյապէս և իմացապէս։

. . . . . . .

. . . . . . .

. . . . . .

. . . :

Ճշմարիտ ասենք, այս բոլորը աչքի առաջ ունենալով կարելի չէ չուրախանալ, որ մեր հոգեւոր հայրերի համար պատրաստվումէ մի նոր և փառաւոր ասպարէզ, որտեղ բազդաւորութիւն կունենանք նոցա տեսնել այնպէս, ինչպէս հարկաւոր էր. . .

. . . . :

Դատաստանական նոր ձևի փրկարար և արդիւնաւոր ներգործութիւնը միայն այդ չէ, որ պաշտպանումէ բռնաբարութեան առաջ մեր անձնական իրաւունքները, ոչ այլ բան է ...նում օրէնսդրի առաջ հասարակութեան բուն կարիքները, խնդրումէ նոցա ապահովութիւնը և այսպէսով բարւոքումէ նորա վիճակը ամեն կերպով։ Նոր հրատարակվելու հոգեւոր—դատաստանական դրութիւնը կատարելով իւր անմիջական պարտքը,—պաշտպանելով հոգեւորականներն. և արդար օրէնքի անունով նոցա սեփական մարդկային իրաւունքները.

. . , բանալու է հասարակութեան առաջ այդ դասի ցաւերի դեղը և

որակութիւնը և պահանջելու է կարևոր դարմանը։ Այն ժամանակ հասարակութիւնը անտարբեր նայելու չէ այդ ցաւալի դրութեանը, և կարեկիցների կարեկցութիւնը ոչ թէ խօսքով, այլ գործով է լինելու։

. . . . . . . . .

Ցաւով ենք, որ «Հայկական Աշխարհը» շուտով մանրամասնաբար կհաղորդէ իւր ընթերցողներին, թէ յանձնաժողովի գործակատարութիւնը ինչպէս վերջացաւ։ Եթէ ասված է, որ նոր խմբագրվելու հոգեւոր—դատաստանական դրութիւնը 1864 թ. դատաստանական վերանորոգութեան սկիզբների համեմատ պիտի լինի, ուրեմն կարելի է սպասել հրապարակական և երդվածների դատաստան։ Եթէ զանազան հանգամանքների պատճառով երդվածների դատաստանը անպատեհ համարվեցաւ, այնու ամենայնիւ ցանկալի էր, որ գոնէ հրապարակական լինի դատաստանը։ . . . . . .

Աւարտելով համառօտ այս խօսքս վերջին անգամ շնորհաւորում եմ մեր սիրելի հոգեւոր հայրերին, ցանկանալով նոցա բարիք և ամենակատար բաղդաւորութիւնը. հայրերի բաղդաւորութիւնը անբաժին որդիներից։ Մտնեն թող նոքա առաջնացութեան ասպարէզ։

Գնան առաջ մեր հոգեւոր հայրերը. հետևելու են անշուշտ և նոցա հոգեւոր որդիները։

Մոսկվա, յունվարի 20. ՀԱՅ—ԲԱՐԵԿԱՄ։

## ՀԱՐՍԱՆԻՔ (Նեկրասովից)։

Մտնում եմ ես տաճար։ Վառված են կանթեղներ։
Եւ կարծես ակամայ տխուր լոյս են տալի,
Մթին են անհագին տաճարի անկիւններ։
Բարձրը լուսամուտներ կամ խաւարով են լի,
Կամ յանկարծ լոյս առնում կանթեղների լոյսով.
Կամ թէ չէ, դողդոջուն ձայն տալով են շարժում,
Իսկ գմբէթ ծածկված է այնպիսի խոր մթնով,
Որ այնտեղ նայելիս դողում ես, սարսափում. . .
Եւ սառն քարերից, կիսամութ պատերից
Խոնաւ հոտ է փչում, իսկ միւս կողմ յետեւից
Սիրտ ծակող ձայն հանող դռներ են կախարած. . .
Դատարկ է, մարդ չկայ։ Ջկայ և պատարագ—
Հարսանիք է այժմ։ Եւ մարդիկ հասարակ
Պսակվում։ Եւ ահա կանգնած է խիստ բանւորն.
Ձեռք դրած նա մէջքին դէպի ինձ է նայում,
Իսկ երեսն կարմրած նա երբեմն ցածացնում—
Երևի այլ կարգի որդի է նա եղել։
Եւ ահա նորահարսն։ Այնպիսի դառներես,
Դեղնագոյն դէմքին ինձ շատ ծանր է նայել. . .
Խեղճ աղջիկ, արդեօք ինչ մօտեցրեց ձեզ այդպէս։

Տեսնումեմ գերութիւնդ է մի փոքր աւելի
Քան թէ որ. . . Հասկացայ։ Ամօթից, սիրելի,
Քո երկար թաշկինակ, դու ձեռքդ պարզելով
Նորա վրայ քաշեցիր. . , . Երևի քեզ խաբեց
Մարդ ոք մին անամօթ։ Գգւլանքով, նվէրներով,
Երգով և գիտառով, քո պատիւ նա խլեց։
Եւ սիրտդ դու նորան շուտ ընծայ բերեցիր. .
Բայց քանի մութ գիշեր դու յետոյ չքնեցիր,
Ո՜հ ինչքան լաց եղար. . . Բայց նա քեզ չթողեց,
Իւր կամքով էր թէ ոչ, այլ նա գործ շուտ ուղղեց—
Աստուած քեզ ևս խղճաց, դու նոյնպէս ազատ ես. .
Բայց ինչի այդպէս լուռ դու անյոյս տրտում ես։
Քեզ շատ դառն և սաստիկ նախատինք են սպասում,
Եւ դժուար շատ օրեր և՛ մենակ գիշերներ։
Եւ հիւանդ քո մանուկ կսկսես օրօրել,
Ջեր հոգի ամուսնիդ տուն գալուն ըսպասել,
Լաց լինել, աշխատել, այլև միշտ մտածել,
Թէ կեանքը նորահաս արդեօք ինչ է տաւել,
Կամ ինչ է պարգևել, կամ պիտի ինչ տայ քեզ.
Խեղճ ստեղծված, լաւ կլինի ապագան չնայես. . .

ԿՈՄՍ դԸ ԼԱՏՈՒՐ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԼԱՑԸ («Дѣтскій Садъ» ժուռնալից)։

Իւրաքանչիւր տանը, որտեղ երեխաներ կան, երբեմն կլսես շատ թէ քիչ բարձր աղաղակ։ Մեծերը մեծ մասամբ ասումեն, որ մանուկները կամապաշտութիւն են անում և թէ արդէն այնպէս է մանկական բնութիւնը, որ մանուկները իւրանք չեն իմանում, թէ ինչ են կամենում։ Այս պատճառով շատ հետաքրքրական է ցոյց տալ լալու նշանակութիւնը երեխայական կեանքի մէջ և պարզել այն համապատասխան պատճառները, որոնք պէտքէ մեծերի ուշքը դրաւեն լացող մանուկների վերաբերութեամբ նոցա զանազան հասակներում։

Սկսենք նորածին մանուկից։

Մանուկի առաջին աշխարհ գալը աջակցումէ լալու հետ։ Լալու ձայնից տնաւորները իմանումեն, որ մի անգամ աւելացաւ իւրանց գերդաստանի մէջ։ Այս լալը հետևանք է այն բանի, որ մանուկը մանումէ նորա համար բոլորովին նոր միջոցի (սրեդա) մէջ, որ առաւել խիտ է և առաւել ցուրտ, քան թէ առաջվան միջոցը, առաջին լացը անճանաչողական է, որովհետև առաւել ցուրտ օդը—քան թէ մայրական արգանդն էր,—գրգռումէ մանուկը և գլխաւորապէս նորա կաշին և թոքերը. այս գրգռման ընդդիմադրութիւնը առաջին լացն է։ Առաջին երկու օրում արգանդից դուրս գալուց յետոյ՝ համարեա մանուկը չէ լալիս, միայն երբոր նորան լուանումեն կամ լողացնում, նա լալիս է, եթէ ցուրտ օդը կպչումէ։ Շուտով նորա ախորժակը բացվումէ, և եթէ նո-

ցեան ծիծ չէին տայ, նա լալիս է և այս լացը միմիայն մի անձանաչողական ընդդիմադրութիւն է։ Նորածինը զգալով մի նոր, և նորան անհաճոյ զգացմունք, որ մինչև այն ժամանակ չէր կրել, սկսում է լալ. նորան տալիս են կաթ ծծել,—նա ծծում է. ծիծ ստանալու նոր զգացմունքը ոչնչացնումեն անհաճոյութիւնը,—նա հանդարտվում է։ Մայրը բռնակալաբար ցրեց մանուկին ծիծ տալով. բայց մանուկը ծիծ չէր կամենում. ինչպէս սովորաբար կարծումեն, նա վարվում էր այնպէս համար որ նորան անհաճոյ էր մի բան։

Այնուհետև երբ մանուկի զգացած անհաճոյութիւնը իւր ընդդիմադրութեամբ,—լացով, վերանում է շատ ու շատ անգամ ծիծ տալու հետ, այն ժամանակ միայն մանուկը խմանում է, որ մօր կամ ծծմօր կաթը ծծելով, անհետանում են նորա անհաճոյ զգացմունքը։ - Այնուհետև մանուկը սկսում է լալ, ինչ է, որ նորան ծիծ տան։ Այժմ նա արդէն խնդրում է տալ։ Կդնենք թէ չէ այսպէս լացող մանուկը մօր ծնկի վերա,-նա իսկոյն կլռէ։ Նա նստելով մօր ծնկի վերա,-տակաւին չէ ծծում, բայց սպասում է (զգում), որ ծիծը շուտով նորա բերանում կլինի։ Առաջ նա լռում էր, երբ կաթը նորա բերանը լցնում էր իսկ այժմ լռում է և այն ժամանակ, երբ նա տեսնում է կամ զգում է, որ շուտով նորան բաւականութիւն կտան։ Այս լացը արդէն հասարակ ընդդիմադրութիւն չէ, այս լացը մանուկի առաջին, սկզբնական լեզուն է։ Նորանով նա յայտնում է իւր ցանկութիւնները։

Երբոր մանուկը թաց է անում տեղը, նա շուտով ստանում է, նորա կոշտ զգացած ցրտի զգացմունքը ստիպումեն նորան նախապէս ընդդիմադրելու մանուկը լալիս է, չիմանալով թէ ինչ է կամենում, - նա լալիս է միայն այնոր համար, որ նորան անհաճոյ է թաց ու ցուրտ տեղը պառկել։ Մեծերը փոխումեն նորա շորերը, փաթաթումեն չոր պատատակելով։ Այսպէս շատ անգամ կրկնվելով այս գործողութիւնները, որտեղ միանումեն թացութիւնը և լացը չոր շորերից ստացած զգացմունքի հետ, մանուկը սկսում է ճանաչել որ եթէ նա տեղը թաց է անում, հարկաւոր է նորան լալ և փոխելու նորա խանձարուրը կատարելի և շորերը կփոխեն։ Յուլիսն մինչև լինի տեսակաւ հասակը մանուկի լացը յայտնում է խնդիր այսինքն մանուկը խօսում է լացով։

Եւ այսպէս մենք կրկնումենք, որ մանկական լացը մինչև լինելիս լեզուի գործ է կատարում, որով մանուկը արտայայտում է իւր ցանկութիւնները։ Այսպիսի մանուկներին ինամատարութիւն անող մեծը պիտի իմանայ այս լեզուն, որպէս թէ ոչ նա չի իմանայ թէ ինչ է կամենում մանուկը, - մանուկը երկար ժամանակ լաց կլինի և որովով կորստական անհանգստութիւն մեծին, իսկ իւրան վնաս։ Նորածին մանուկները վերին աստիճան շատ են լալիս այն իսկ հասարակ պատճառով, որ նորան պատճառումեն շատ անհաճոյ զգացմունքներ։ - Երբ նորան ծիծ են տալիս ոչ իւր ժամանակին, լողացնումեն կամ լվանումեն ոչ իւր ժամանակին կամ անտանելի ջրի մէջ, արգելումեն նորան քնելու և այլն, մայրերը չունենալով դաստիարակութեան մէջ, տնտեսները հարուստ հասարակութեան մէջ, չեն իմանում ինչ անեն, որովհետև չեն հասկանում մանուկի լեզուն։ Իւրաքանչիւր լաց, որ խնամատարները նկատել չկարողանալով չեն հասկանում, ասումեն թէ փոքր ցաւից է առաջանում։ Եւ ասումեն բոլորովին անօգուտ ռեւեզանները, դեղեր։ — Այս սորա համար շատ հարկաւոր է մեծերին գիտենալ թէ արդեօք որ դէպքերում մանուկը լալիս է որ նորա կարիքները կարելի լինի լաւ կատարել։

Մի՛ք կե՛ցէք լոյսի միմիայն երկու դէպքը, քաղցը և թացութիւնը ։ Մեզ կրկին հարկաւոր է միւս դէպքերին ևս նայել ։

Մանուկը սնդվում է մոր կամ սնտուի կաթով, սնտուի ընդունած կերակուրը կաթ դառնալով՝ անգամին ներգործութիւն ունի մանուկի վերա ։ Երբ որ սնտուն գործ է դնում զանազան դժվարամարս կերակուրներ — և այս պատահում է շատ անգամ, այն ժամանակ մանուկի քնքոյշ ստամոքսը դժվարութեամբ կամ ամենևին չէ մարսում մոր կամ սնտուի կաթը ։ Մայրը նաև երբեմն չէ զգում ևս այս բանը, նորա ստամոքսը, եթէ սովոր է, հեշտութեամբ մարսում է նաև ամենաբիրտ կերակուրը, բայց այս բիրտ կերակրից գոյացած կաթը դժվարութեամբ է մարսում մանուկի նուրբ ստամոքսը ։ Երբեմն ևս մոր գործածած անմաքուր կերակուրներից մանուկի աղիքների մէջ հաւաքվում են քամիներ և պատճառում են ցաւ, որ նոյնպէս յայտնվում է լացով ։

Սկզբում մանուկն բռնում են հորիզոնական դրութեամբ ։ Երբ որ նորա անդամները սկսում են հաստատվել (ամրանալ) և ողնաշարը ստանում է սակաւ ինչ հաստատութիւն և պատշաճաւոր առանձնականութիւն, մանուկին հարկաւոր է, որ նորան փոքր ինչ ևս բռնել ուղղորդ դրութեամբ ։ Հարկաւ նա սկզբում չէ իմանում, որ նորան հարկաւոր է այնպիսի դրութիւն ունենալ, որ առաւել մերձ լինի ուղղորդ դրութեան, նա այս բանը յետոյ է իմանում ։ Եթէ ձանձրանում է մանուկը երկար ժամանակ մէջքի կամ կողքի վերայ պառկելուց, նա լալիս է, որովհետև խնդրում է (ասում է), որ նորան հանեն հորիզոնական դրութենից և բռնեն ուղղորդ կամ ուղղորդի մօտ դրութեան մէջ ։

Եւ ահա, դուք բռնում էք մանուկը ուղղորդ դրութեամբ, նա երբեմն վեր վեր է թռչում, նա ոտի վերայ կանգնելու առաջին փորձերն է անում, նա ուրախանում է, զվարճանում է, նայում է շրջապատող առարկաներին ։ Նաև այս դրութեան մէջ ևս կարող եք քնել՝ ինչպէս շատ անգամ պատահում է, բայց դուք նորան շատ էք գրգռում շարժողութեամբ կամ շրջակայ առարկաները գրգռում են նորան — և ահա երեխան լալիս է, նա կամենում է պառկել, քնելու կամ կամենում է հորիզոնական դրութիւն ունենալ ։

Եւ այսպէս, երբոր մանուկը (մինչև 8 կամ 9 ամիս) լալիս է, դուք պէտքէ իմանաք և աչքի առաջ ունենաք վերոյիշեալ պարագաները ։ Եթէ նա լալիս է քաղցած լինելու համար — կաթ տվէք նորան, եթէ թացութենից է — փոխեցէք նորան չոր շորերով՝ եթէ փորի ցաւից է — հանգստացրէք նորան պատշաճաւոր ճարերով, եթէ երկար ժամանակ պառկելուց է — բռնեցէք նորան ուղղորդ դրութեամբ, եթէ յոգնածութենից է դրէք նորան օրօրոց ։ Ունեցէք այս նախազգուշութիւնները աչքի առաջ, և ձեր մանուկը երբեք չպիտի լաց լինի չարաճճիութեամբ ։ Բոլոր աշխարհի մէջ մեզ մանկաբարժներ համոզված են որ փոքր մանուկները երբեմն ևս լալիս են կամապաշտութենից, սորա համար նոքա խորհուրդ են տալիս ծեծել մանուկը, բայց սա բարբարոսութիւն է և հարկաւոր չէ սորա վերայ մի բան ասել ։ Մենք նոցա նկատողութիւններին հակառակ այս բանին բոլորովին հերքում ենք 8 և 9 ամսական մանուկների այս կարծեցեալ կամապաշտութիւնը, ինչպէս որ կարծում են այդ մանկաբարժները, և դայակներին, խնամատարներին խորհուրդ ենք տալիս առաւել մօտ և ուշադրութեամբ հետևել լացի պատճառը, քան թէ կամապաշտութեան պատճառը կարծել ։ Վերջինը ինարկէ դայեակի համար շատ առաւել դիւրին է, բայց դա անգութ է և ոչ մարդի ։

Շրջապատող միջոցի հետ ծանօթանալով, մանուկը սկսում է ճանաչողաբար գործածել իւր զգայարանները։ Սոցա մէջ առաջին տեղն ունին ձեռները, որովհետև դոքա ամենից առաւել հարմար են։ Ձեռները ոչ միայն շօշափման գործիք են դառնում, այլ և ցանկութիւն արտայայտելու գործիք։ Եթէ մանուկը կամենում է մի բան, նա մեկնում է իւր ձեռը և ցոյց է տալիս նոյն բանը մատով։ Թէև արդէն այս հասակից լեզուն սկսում է զանազան ձայներ հանել, բայց այս ձայները տակաւին անկապ և անգիտակցաբար են, այս ձայները աջակցումն ձեռը մեկնելուն, բայց լեզուի (խօսելու, կամեցողութեան) գլխաւոր գործիքը ձեռն է։ Այս շրջանում, 9 ամսականից յետոյ, մանուկը շատ քիչ է լալիս կամ ամենևին չէ լալիս, եթէ նորան արժանավայել խնամատար լինէին։ Լացը տեղի է տալիս ձեռներին և նոցա շարժողութեան, բայց ոչ ամեն դէպքերում։ Առաջվան պատահմունքը տակաւին ունին իւրանց զօրութիւնը և մանուկը յայտնում է այդ բոլորը իւր լացով, բայց սոցա հետ միանում է լեզուի մի նոր տարրը արտաքին միջոցի հետ ծանօթանալու համար, սա ցուցամատն է։

Այս շրջանում մանուկի համար շատ հարկաւոր է, որ նորան բոլորովին անձնատուր եղած մի անձն լինէր։ Եթէ մանուկը մի բան կամենալիս և նորա վերայ մատով ցոյց տալու ժամանակ մնում է անբաւական, նա սկսում է հեծկլտալ և երկար հեծկլտալուց յետոյ լալ։ Առաջ հեծկլտալը և յետոյ լացը միև նոյն նպատակն ունին—զօրացնել և դարձնել մեծերի ուշքը նորա խնդրածին։ Մանուկը, որ արդէն ձանձրացրել էր մեծերին մի առարկայից միւս առարկան դիմելով, այսուամենայնիւ կարողանում է իւր շարունակ հեծկլտալով և լացով ողոքել մեծերը և ստանալ իւր պահանջած բանը։ Ահա այս ժամանակ մեծերի վարմունքի մէջ մանուկի հետ անպայման հարկաւոր է չափակշռութիւն (տակտ) որ մանուկը կամապաշտ չլինի։ Երկու, երեք, չորս անգամ չլսեցէք և չտվէք նորա ցանկացած բանը, որի վերայ մատով ցոյց էր տալիս, բայց եթէ նորան բաւականացնումէք երկար հեծկլտալուց և լացից յետոյ, գիտենաք, որ դուք ինքներդ էք մեղաւոր, որ ձեր համար ձեր մանուկը պատճառում է ձանձրութիւն և տհաճութիւն, գիտենաք որ եթէ դուք ձեր վարմունքի ժամանակ մանուկի հետ լինիք թեթևամիտ և անհաստատ, դուք ձեր որդին կլինէք բռնաւոր — ինքնակամ, որին դուք ինքներդ վերջում խաղալիկ կլինիք։ Այս ժամանակ արդէն ստացել է երկու զգացմունքի միաւորութիւնը.—նորա լացը և ձեր շուտափոյթ բաւականութիւն տալը։ Այն ինչ մանուկը ճանաչեց ձեր տկար կողմը, որ դուք չէք կարողանում տանել նորա լացը, և բաւական է նորան մի ձայն ձգել—լալ, որ բաւարարութիւն ստանայ, այնուհետև դուք բոլորովին գտնվումէք ձեր մանուկի ձեռին։ Նա կամենումէ մի բան. դուք մի պատճառով չէք կամենում տալ այդ. նա իսկոյն սկսում է լալ—դուք յաղթվումէք և նորա կամեցած բանը նորա ձեռին է։ Եթէ դուք բացի այս առաջ այնքան անզգոյշ էիք (երբոր չգիտէիք նորա լալու պատճառը), որ նորան լռեցնելու համար տալիս էիք զանազան քաղցր բաներ, այժմ ձեր մանուկը յանկարծ սկսում է լալ—կամապաշտութիւն անել և այս չէ թէ ցանկացած և ցոյց տված բանը ստանալու համար է, ոչ,—նա կամենում է քաղցրեղէններ, շաքար, հաց և այլն։

Մանուկը ձեր ձեռին է, դուք խաղումէք նորա ձեռներով. մտնումէ ձեր մօտ ձեր ծանօթներից կամ բարեկամներից մինը և դուք սկսումէք խօսել մի հարկաւոր և ծանր գործի վերայ. Դուք բոլորովին մոռանումէք ձեր մանուկը, նորա ձեռները, ոտները. դուք խոր էք

մանում ։ Մանուկը խնդրում է, որ դուք նորա հետ խաղաք․ դուք ի հարկէ չէք լսում նորան։ Նա սկսում է հեծկլտալ, կարծես դուք ուշք չէք դարձնում նորա վերա․ նա սկսում է լալ — դուք իսկոյն ընդհատում էք խօսակցութիւնը և դարձնում էք ձեր ուշքը բոլորովին նորա վերա ։ Այստեղ նա պատահմամբ ձեզ յաղթեց առաջին անգամ ։ Բայց եթէ այսպիսի դէպքը կրկնուի երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն անգամ, ձեր մանուկը կիմանայ, երբ որ ցանկանում է, ձեզ ընդհատելու հնարքը։ Դուք, խօսելու ժամանակ մի ուրիշի հետ նորա ներկայութեամբ, չէք թողնում նաև նորան առանց ուշադրութեան ։ Դուք կանչեցնում էք նորա մօտ դայեակ, որ խաղայ մանուկի հետ․ բայց մանուկը քաջ գիտէ, որ եթէ սկսէ թէ չէ լալ, ձեր խօսակցութիւնը կընդհատուի ։ Դուք բոլորովին ձեր մանուկի իշխանութեան տակն էք ։

Մանուկին մինչև կամապաշտութիւն չհասցնելու համար, հարկաւոր է ուշք դարձնել նորա ցանկութեանը բաւականացնել, եթէ կարելի է, և ժխտել ամենևին, եթէ անկարելի է կատարել ։ Եթէ արդէն ձեր մանուկը կարողանում է մատով ցոյց տալ (մինչև 9 ամսականը) կամ արդէն խօսում է, թէև հազագներով (1 և 2 տարեկան), դուք պէտք հաստատապէս վճռէք, թէ ձեր սենեակի որ բաներով կարող է մանուկը խաղալ և որով — ոչ ։ Եթէ ձեր մանուկը խնդրում է ձեզանից մի բան, եղէք դուք նորան ուշադիր, տուէք նորան նոյն իսկ առաջին նշանից թոյլատրելի բանը, և մի տուէք արգելուածը նաև այն ժամանակ, երբ նա լաց լինի ։ Աշխատեցէք նոյն ինքն լացի ժամանակ դարձնել մանուկի ուշքը այդ բանից, եթէ դուք կարող չէք տանել, բայց ոչ ամենևին քաղցրաւենիքներով ։ Գլխաւորապէս մանուկը ամենևին չպէտք է իմանայ, որ դուք կատարում էք այս բանը — այնոր համար, որ դուք չէք կարողանում տանել նորա լացը, առաջ էք բերում որպէս թէ մի պատահական բան․ նա իսկոյն կգրաւէ դորանով ։ Մանուկը այն ժամանակ ինքն կտեսնէ որ նորա լացը անօգուտ է․ և կսկսէ այդ նոր բանից օգուտ քաղել ։ Մի բան ստանալու համար նա ունի և ձեռներ և բերան․ նա լալիս է այն դիպուածում, երբ դուք թեթևահոգի էք և նեղանում էք նորա լալով, բայց եթէ նա համոզուած է, որ լացը նորան ոչ մի օգուտ չէ բերում, նա չի դիմի այնուհետև այդ հնարը գործածելու, — մանուկը կամապաշտ չի լինի ։

Եթէ ձեր մանուկը ձեր գրկումն է, երբ որ դուք խօսում էք ուրիշի հետ, եթէ նա խնդրում է ձեզանից խաղալ նորա հետ, մի հասցնէք նորան այն տեղը, որ նա լայ, կամ ընդհատեցէք խօսակցութիւնը և խաղացէք նորա հետ, կամ տուէք նորան դայեակին կամ մի ուրիշին և շարունակեցէք ձեր խօսակցութիւնը ։ Եթէ արդէն հասցրել էք այն տեղը, որ մանուկը լալիս է, մի նայէք նորան, շարունակեցէք ձեր գործը, նա կտեսնէ որ անօգուտ է իւր լացը և կդադարէ ։

Դուք լողացնում էք ձեր մանուկը ջրում․ նա կայտառում է ջրի մէջ և ուրախանում է։ Բայց ահա դուք հանում էք նորան տաշտից, փաթաթում էք և սկսում էք չորացնել նորան ։ Մանուկը խնդրում է, որ կրկին թողնէք նորան տաշտում ։ Դուք նորան չէք լսում և շարունակում էք ձեր գործը։ Նա սկսում է լալ . . . . Այստեղ երկու ճանապարհ կայ — եթէ դուք թեթևահոգի չէք, կտանէք մանկական լացը, կհագցնէք նորան․ լալուց կդադարեցնէք նորան մի ուրիշ բանով (բայց ոչ քաղցրաւենիններով), որը նորա համար աւելի հետաքրքրական է քան թէ ջրով լի տաշտը․ այն ժամանակ ձեր մանուկը, այսպիսի մի քանի դէպքերից յետոյ, կսովորէ տաշտից դուրս գալ առանց լալու ։ Բայց եթէ դուք թեթևա

ձայն էք և կրկին նորան կոխէք լռացնել տաշտում, մանաւանդ եթէ բարկութեամբ կասէք նորան «գնա, գնա, քո սատկի անպիտան,» իմացէք, որ այնուհետև լռանալուց յետոյ անդադար այսպիսի տհաճութիւն պիտի լինի — մանուկը սկսի բարձր ձայնով լալ և յետոյ ձեզ յաղթէ:

Եթէ կամենումէք մի տարեկան և կէս, երկու կամ երեք տարեկան մանուկին մոռացնել տալ կամակորութիւնը, գործ մի դնէք երկար աթոռը և բարակ ջոխինները, ինչպէս որ խորհուրդ են տալիս մեքանի մանկավարժներ գերմանացիներ և ինչպէս որ առաջ էր: Ամենալաւ միջոցը նա է, որ մենք ասացինք և որ առաջարկած է Ռուսսօն: Այդ միջոցը, ինչպէս ասած ենք, այն է, որ դուք ամենափոքր անգամ ուշադրութիւն չպէտք դարձնէք կամակոր մանուկի լացին, եթէ ձեր մանուկը ձգվի գետնի վերայ, չուռումուռ գայ, ոտները գետնին խփէ, կոկորդը պատռէ, ձայնը կտրվի, ձեր ետևից վազայ, գոչէ, գոռայ, կանչէ և հազարու մէկ ուրիշ բաներ անէ, դուք ամենևին ուշադրութիւն մի դարձնէք, որպէս թէ ամենևին ոչինչ չէք իմանում: Եթէ կարծումէք, որ ձեր մանուկը չէ կարող տանել երկար լալը որ յետոյ յետ չառնումէ, ուրեմն հանդարտացրէք նորան լալուց այնպէս, որ նա ամենևին չիմանայ, թէ դուք անումէք այս կամ այն բանը նորա համար, դուրս հանեցէք մի ուրիշ նոր բան և նորանով խաղացրէք միւս ներկայ եղողների հետ. եթէ նա սկսէ մերձենալ ձեզ և դադարէ լալուց, ընդունեցէք նորան ձեր խաղի մէջ, բայց ամենևին մի յիշէք առաջվան դէպքի մասին: Եթէ նա փոքր ժամանակից յետոյ կրկին սկսէ լալ, շարունակեցէք դուք ձեր բանը, որպէս թէ նա այնտեղ չէ և դուք չէք լսում նորա լացի ձայնը: Երբ որ կսկսէ լռել, բաւականացրէք նորան: Եթէ դուք մեքանի ժամանակ այսպէս կվարվէք առանց թեթևանդութեան և պատշաճաւոր դիմացկունութեամբ, — դուք հաւատացած եղէք որ ձեր մանուկը հասկանալով որ լալը անօգուտ է կդադարի ամենևին լալուց իւր նպատակին հասնելու համար:

Եթէ մանուկը ընկաւ և սկսեց լալ, դուք այս բանին առանձին, շատ մեծ ուշք մի դարձնէք: Եթէ նա մատը կտրելէ, պատշաճաւոր ճարը հասցրէք. եթէ կտրված չէ, այլ մի միայն ցաւեցրելէ, թող մի խառնվէք նորա լալուց, լացկունի, և — կհանգստանայ:

Եթէ կսկսէք նորան գուրգուրելու ձայնել, պտոյտ գալ նորա շուրջը և ցոյց տալ ձեր վիշտը, կամ որ աւելի վատն է, կսկսէք նորան զանազան քաղցր բաներ առաջարկել, այն ժամանակ կսովորէ լալ նաև այն ժամանակ, երբոր նորան ոչ մատը չէ ցաւում, այլ միայն այն նպատակով, որ դուք տաք նորան զանազան անոյշ բաներ ուտելու, կամ քաղցր խօսքեր: Եթէ կրթողը կարող չէ յետ պահել կամակոր մանուկի անդիմադրելի լացը, այն ժամանակ նա այս վերջնի իշխանութեան տակ կընկնի և այսպէսով կրթողը ինքը կսատէ մանուկի մէջ բռնաւորութեան զարգացման: Ունեցէք զօրութեան, համբերութեան և դիմացկունութեան ոգի, եթէ կամենումէք կրթող լինել:

Ուրեմն թող ցանկան մեր բոլոր Հայերը որ մի առաջ հոգատար լինել այն սուրբ իմացական կրթութեան, որի գլխաւոր պարտքն է մանկական կրթութեամբ պարապելը, թող մեր օրիորդական ուսումնարանները պատրաստեն զօրութեամբ, համբերութեամբ և դիմացկունութեամբ ոգևորված ազնիւ մայրեր — և ամէնի գաղափար ճանաչող մեր կեանքը կլինի իւական: Այսուհետ բաց է ճանապարհը դէպի բարոյական փրկութիւն, դէպի երջանկութիւն: Հետևացնենք ալգելքներ — կսատելութիւնը կհասնէ. Նկզանդօ մալօ, րօնում ալեղուցիմուս (եր չալը կհետացնենք, բարին կվաստակենք):

ՀԱՅ— ԲԱՐՆԿԱՄ:

Գործող անձինք՝ պ. Տիգրանեան, Աբգար — նորա 10 տարեկան որդի. Ցոլոք — աղքատ մարդու; Վարդուհի — նորա 15 տարեկան աղջիկ ։

Գործողութիւնը կատարւում է պ. Տիգրանեանի տանը զալում

Երեւոյթ 1.

Աբգար (մենակ, կանգնած է սեղանի մօտ և գիրք է կարդում) «Չքաւորներին օգնելն ամեն մարդի պարտքն է»։ (խօսում է)։ Ես կասէի չքաւորներին օգնել ամեն մարդի համար վայելչութիւն է ։ Ինչպէս ուրախ է լինում մարդս, եթէ կարողանում է մի չքաւոր մարդի արտասուքը սրբել, ինչպէս ասում է ինձ իմ հայրը, այսինքն եթէ կարող է ինչով եւիցէ չքաւորին օգնել։ Այո, բարի հայր իմ, դուք ինքդ օգնում էք չքաւորներին չունեւորներին, դուք աշխատում էք ձեր օրինակով իմ մէջ բարի սիրտ արմատացնել և ես, ոչ եթէ միայն կմեծանամ, եթէ միայն կկարողանամ փող ձեռք բերել, ես յոյս ունիմ, որ չքաւորը ինձանից միշտ օգնութիւն կգտնէ։ Ես կաշխատեմ միշտ և իմ աշխատանքով կօգնեմ չունեւորներին։ Հայրս ասում է, որ աշխատանքը մեծ բան է։ (Թերթում է գիրքը)։ Ես շատ հաւանում եմ այս ոտանաւորը, (կարդում է).

Լուսանում է, ընկեր . . . .
Աշխատել սկսենք . . . .
Աշխատանք սաստկացած
Պահանջում է աշխարհ . . . .
Աշխատիր ձեռներով,
Աշխատիր իմաստով,
Աշխատիր անդադար,
Ե՛ւ գիշեր և ցերեկ ։
Մի կարծեր թէ մեր գործ
Աննշան կու անցնէ,
Մի վախենար թէ մեր միտք
Չի հասկանա աշխարհ . . . .

Աշխատիր օգուտով
Մարդիկների դաշտում,
Ես ցանիր դու այնտեղ
Միայն ազնիւ մտքեր . . . .
Թէ յետոյ ինչ կլինի—
Թող լինի, ինչ լինի . . . .
Սիրենք աշխատել,
Բարեկամ, սկսենք։
Աշխատենք ձեռներով,
Աշխատենք իմաստով,
Աշխատենք անդադար
Թէ գիշեր թէ ցերեկ։

(Վերջը դնում է գիրքը)։ Գեղեցիկ գրված է։ Մարդի հոգին ուրախանում է և նոյն ժամ կամենում ես աշխատել սկսել, որ ուրիշներին օգնես ։

Երեւոյթ 2.

Նոյն և Տիգրանեանը (մտնում է ձեռքին թղթեր, նորա ետեւից Ցոլոք ։ Աբգարը քաշւը

(1) Այս մանկական պիեսը Աւագին Մարիամեան ուսումնարանի մանուկներն խաղացին առաջին տարեդարձի օրը։ Որովհետեւ առարկան մանկական կեանքից է և բոլորովին բնական, ուստի առաջարկում ենք մանուկներին օգուտ քաղել այս պիեսից իւրանց խաղերի ժամանակ, երբ կկամենան օգտաւէտը վայելչականի հետ խառնել ։ Խմբ.

ողջունում է Յակոբին և գիրք է կարդում, երբեմն լսում խօսակցութիւնը և հայում Յակոբին)․
Տիգրանեան (Թղթեր փառաբանի վերա դնելով. յետ է դառնում)։ Ահա, դու այստեղ ես միթէ, իմ բարի Յակոբ։ Ինչ է, դու առողջացել ես։

Յակոբ. Ոչ բոլորովին, պարոն իմ, ջերմը չէ թողնում ինձ . . . Եւ ես անգամ զօրով վեր եմ կացել անկողնից, որ գամ շնորհակալութիւն անեմ ձեզ ձեր ողորմութիւնների համար։ Առանց ձեր օգնութեանը հաց ծախողը այլ ևս չէր կամենում ոչ ինձ, ոչ իմ խեղճ ընտանիքին հաց տալ։ Իսկ դուք ողորմութիւն արիք, նորան վճարեցիք մեր պարտքը ։

Տիգր. Սա դեռ մեծ ողորմութիւն չէ, իմ բարի Յակոբ։ Ասա ինչպէս է քո կինը։

Յակոբ. Դեռ հիւանդ է, պարոն իմ, և ես շատ վախենում եմ, որ նա կարելի է չվերկենա տեղից։

Տիգր. Ունիք արդեօք բոլոր ինչ որ հարկաւոր է նորան ։

Յակ. Այո . . . . համարեա թէ . . . .

Տիգր. Ես հոգամ դորա մասին։

Յակոբ. Ո՛հ պարոն, դուք առանց դորան էլ շատ էք արել մեզ համար։ Առանց ձեզ նա, ես և բոլոր իմ հինգ մանուկները կմեռնէինք սովից։ Այժմ հացը այնչափ թանկ է, և ես դեռ հիւանդ եմ։ Իմ աղջիկը շատ փոքր է, որ աշխատել կարողանա . . . . . Խեղճը շատ է ցանկանում, որ մեզ օգնէ, բայց ինչ կարող է անել։

Տիգր. Հա ես կաշխատեմ քեզ օգնել։ Մինչդեռ այս օրիցս.

Յակ. (խորին ողջոյնով) Ոչինչ փառը չմտածէք իմ մասին, պարոն . . . . Ես նորա համար չեկայ, որ ձեզ նեղացնեմ իմ խնդիրներով։ Ես եկայ որ ձեզ շնորհակալութիւնս յայտնեմ ձեր բարերարութիւնների համար և հարցնելու թէ բաւական էք արդեօք Վարդուհուս գործով։

Տիգր. Այո ես նորանից շատ բաւական եմ ։ Գնա, հանգիստ եղիր և աշխատիր շուտ առողջանալու։

Յակոբ. Շնորհակալ եմ, պարոն։ շատ կցանկայի այդ։ Այս րոպէիս կգայ ձեզ մօտ Վարդուհին յատակը սրբելու։ Ես նորան այսօր առաւօտն ևս կրկնում էի, որ նա լաւ կատարէ իւր գործը։ Որպէս երևում ես չգիտեմ ևս ինչպէս ձեզ շնորհակալութիւն անեմ։ Մնացէք բարով, մեր բարերար։ Կգնամ կպառկեմ, զգում եմ, որ ջերմը նորէն բռնում է ինձ։

Տիգր. Գնա, գնա, բարի Յակոբ իմ, յոյսդ Աստուծու վերա դիր. Աստուած օգնում է անբաղդներին, երբ որ նոքա նոյնպէս ազնիւ և աշխատասէր մարդիկ են, ինչպէս դու ։

Յակ. Թող Աստուած ինքն ձեզ օրհնէ։ Մնացէք բարով, պարոն (ողջունում է գնում է)։

Երևոյթ 3

Տիգր. Աբգար և յետոյ Վարդուհի։

Տիգ. . Ահա, Աբգար, դու տեսար և լսեցիր այս րոպէիս անբաղդութեան բաւական մեծ նակ։ Ինչ կասես սորա մասին։

Աբգ. Խեղճ Յակոբ, ես նորա մասին շատ ցաւում եմ։

Տիգ. Այդ լաւ է, սիրելի, դա ցոյց է տալիս, որ դու բարի և կարեկցող սիրտ ունիս, Պահիր նոյն զգացմունքը դէպի չքաւորներն։ Դու բարեգործ մարդ կլինիս, երբ կմեծանաս ուրեմն և բաղդաւոր կլինիս։

Աբգ. Բայց, սիրելի հայրիկ միթէ այժմ ոչինչ չեմ կարող նոցա համար անել։

Տէր Գր. Նաև շատ մեծ փորձ, զոր կարծում ես գործածել տալու վերայ այն փողը, որը և տալիս եմ քեզ քո մայրիկի թէյինների համար:

Աբգար (փոքր մտածելով) Բայց, հայր իմ, ասացէք ինձ. չէ որ շատ հարուստներ կան, որոնք չգիտեն էլ թէ ինչ անեն իւրեանց փողերը: Ինչի նոքա այդչափ սակաւ են մտածում չքաւորների մասին:

Տէր Գ. Իմ հոգիս, դա նշանակէ որ այդպիսի մարդիկ քարէ և կարծեցող սիրտ ունին,— այդ պատճառով ուրիշների անբաղդութիւնը նոցա չէ հեղացնում: Նա այս շատ անգամ լինում է կամ վատ օրինակից կամ վատ կրթութենից:

Աբգ. Ուրեմն նոքա շատ վատ մարդիկ են, այնպէս չէ: Եթէ ամենքը մտածէին այնպէս, ինչպէս դուք, հայր իմ, ես հաւատացած եմ, որ չքաւորներն ամենևին չէին լինի:

Տէր Գ. Ոչ, դա դեռ բոլորովին այդպէս չէ, իմ հոգիս: Աղքատութիւնը, ինչպէս հիւանդութիւնը կամ Աստուած ինքն է ուղարկում մարդիկներին նոցա ուղղելու համար, կամ նա ինքն է գալիս մարդու սեփական անհոգութենից և անելի անմիտ շռայլութենից: Բայց չնայելով սորան, մենք այնու ամենայնիւ պէտք միմեանց օգնենք:

Աբգ. Այդպէս է, հայր: Եթէ ես մի օր կամենայի հարուստ լինել և եթէ հարուստ կդառնամ, դա միայն նորա համար կլինի, որ օգնեմ չքաւորներին: Դուք կտեսնէք:

Տէր Գր. Գոհութիւն Աստուծուն, որ Նա տուել է քեզ այդպիսի ցանկութիւն: Որպէս պարգև ես կամենում եմ քեզ համար նոր շոր շինել սիրուն արծաթեա կոճակներով: Դու բաւական ես արդէն սորանով:

Աբգ. Քաղցր հայր իմ, դուք շատ բարի էք, և ես սրտանց շնորհակալ եմ ձեզանից: Բայց ես մտածում եմ դարձեալ մի բանի վերայ, բարի հայր իմ:

Տէր Գ. Ինչ բանի վերայ:

Աբգ. Դուք ինքդ երբէք չունիք ձեր շորերի վերա արծաթեա կոճակներ, ես և նոցա սէր չունիմ: Եթէ դուք կամենումէք ինձ պարգևել, փոխանակ այնպիսի կոճակներ գնելու, տուէք ինձ նոյնչափ փողը, որչափ դուք նոցա համար պիտի տաք:

Տէր Գ. Ինչիդ պէտք է քեզ այդ, միթէ դու այլ ևս չունիս փող այն երկու մանէթից, որ տուի ես քեզ ծախսելու համար:

Աբգ. Ոչ, հայր իմ:

Տէր Գ. Որտեղ է այն փողը:

Աբգ. (ակամա) Ես . . . տեսնումէք, հայր իմ, ես . . . (ուրախ) ոհ քաղցր հայր իմ, մի վախենաք: Ես լաւ բանի գործդրի այն երկու մանէթը: Ես խնդրում եմ ձեզ, եթէ դուք արդէն անշուշտ կամենումէք իմանալ, թէ ես ինչ արի այն փողը—սորա մասին հարցրէք ինձ անից վերջ:

Տէր Գ. Լաւ, եթէ կամենումես թողնենք վաղուան: Եւ եթէ, ինչպէս դու ասումես, նոցա լաւ գործածեցիր, ես քեզ կտամ այն փողն էլ, որով կամենումէիր արծաթեա կոճակներ գնել: Եւ կամենումեմ, որ դու միշտ փող ունենաս, եթէ դու կարող ես նորան լաւ գործածել:

Աբգ. Հաւատացնումեմ ձեզ, հայր իմ, դուք ինձանից բաւական կլինիք: (Ինքն իւրան) Իմ երկու մանէթը դեռ էլ իմ մօտ են, բայց ես գիտեմ—նոցա ինչին գործածեմ: (Բարձր): Ահա, ահա և Վարդենիկը գալիս է յատակը մաքրելու:

Երևոյթ 4. Նոյնք և Վարդենիկ։

Տէր․ (Բաղցր) Ողջոյն, ողջոյն քեզ, Վարդենիկ. սիրելի դուստր, հոգիս։ Այս ծաղիկս ես քեզ գտնումեմ հոգիդ առաջ։ Աշխատիր, հոգիս, Աստուած քեզ չի թողնի (դուրս է գնում)։

Երևոյթ 5. Արգար և Վարդենիկ։

Վարդ․ (Ողջունելով դուրս գնացող Տիրացուենին)․ Ես ամեն կերպով կաշխատեմ ձեր սէրը շահելու, պարոն։ (Բռնում է իր ձեռքը, յետոյ առնում է աւելը և աւելում է յատակը՝ Արգարին)․ Գնացէք այստեղից, պարոն, որ ձեզ չփոշոտեմ։

Ար․ Ոչինչ, փոյթ չէ. ես չեմ վախենում փոշուց։ (Փոշու) Քո մայրը դեռ ես կարծում եմ հիւանդ է։

Վարդ․ (հառաչ․) Այո, բարի պարոն իմ, շատ հիւանդ է։

Ար․ Եւ դու այլ ևս հինգ եղբայրներ ունիս, կամ ոչ, ես սխալվումեմ, կարծում եմ չորս.....

Վարդ․ Այդպէս է, հինգ են և ես վեցերորդ որդին եմ, բայց հայրս հինգ է համարում, որովհետև ես կարող եմ ինքս փոքրինչ աշխատել։

Ար․ Այդպէս է, բայց դու չես կարող աշխատել այնքան, որքան հարկաւոր է քո հօրը, քո մօրը և քո եղբայրներին։

Վարդ․ Ինչ պէտք անեմ, պարոն։ Ես աշխատումեմ այնքան գործել, որքան այժմ տալիս եմ։ Իսկ յետոյ կարելի է ինձ Աստուած կօգնէ աւելի ես գործելու։

Ար․ Դու աղքատ ես. Աստուած և բարի մարդիկ չեն թողնում աշխատասէրներին։ (Տալիս է նրան փող)։ Ահա վեր առ այս ելկու մանէթը և տար նրա քո մօրը։

Վարդ․ Ինչ.... ելկու մանէթ... չէ, բարի պարոն իմ, ես դրա չեմ վեր առնի։

Ար․ Վեր առ և մի նեղանար ոչինչի մասին։ Այս ելկու մանէթը այն փողեր են, որը տալիս են ինձ միսելու համար։ Եւ հայրս ասում է, որ ես կարող եմ գործածել նրա ինչպէս կամենումեմ։ Եւ ահա ես կամենումեմ պարգևել այս փողը քեզ, հասկանումես... ուրեմն վեր առ։

Վարդ․ Ոչ, պարոն, դուք դեռ փոքր էք և ես ոչինչ չպիտի ընդունեմ ձեզանից, և իմ հայրս և մայրս կբարկանային իմ վերայ դրա համար։

Ար․ Դու տար նրան, որ ես ինքս տվի քեզ այս փողը նոյն ինքն նրա համար։

Վարդ․ Այդ բոլորը ճշմարիտ է, բայց ձեր հայրը երբ այս կիմանա, անշուշտ կբարկանա իմ վերայ, իսկ ես, կամքը ձերն է, ես չեմ կարող վերառնել որ նրան չասեմ։

Ար․ Դու ինձ չես հաւատում և փոքր ես կարծում։ Տես կանեմ ինչ կամենումեմ այս փողը։ Ահա եթէ չես վերառնի, ես դուրս կգցեմ և ով գլուխ ով կվերառնէ սորան (մօտենում է պատուհանին)։ Մի խօսք. վեր ես առնում թէ չէ։

Վարդ․ (Մտածելով) Չէ, ավելի լաւ է ես կվերառնեմ դորան քան թէ դուք դցէք փողոցում։

Ար․ (Տալիս է)։ Իսկ դու այս միթէ կասես հօրս։

Վարդ․ Անշուշտ։

Ար․ Իսկ եթէ դու կասես, ես այնուհետև չեմ սիրի քեզ ինչպէս այժմ։ Դու այդ կանե՞ս։

Երևոյթ 6. Տէր․ Ար․ Վարդ․ (նա մտնում է յանկարծ)։

Տէգր. Աբգար, քեզ սպասումէ վայելչագրութեան ուսուցիչդ. Գնա շուտ։

Աբգ. Այս վայրկեանիս գնումեմ, հայր։ Նա փողոցում է պատրաստեցի տետրակներս (դուրս գնալով նշան է տալիս Վարդենիկին, որ ոչինչ չասէ)։

Երևոյթ 7. Տէգ. Վարդենիկ.

Տէգր. (Մօտենալով վառարանին) Ահա, ահա այն թղթերը, որ ես այնչափ պտռումէի։

Վարդ. (Վախով մօտենալով Տիգրանեանին) Թոյլ տվէք, պարոն, ձեզ այն երկու մանէթը տամ, որը տուեց ինձ վերադառնելու ձեր որդին, թէև ես ամեն կերպով հրաժարվումէի։

Տէգր. Իմ որդիս տուեց քեզ միթէ երկու մանէթը վեր առնելու։ Ինչի համար։

Վարդ. Նա ասաց, որ մեզ տալիս է իբր թէ նորա համար, որ մենք չքաւոր ենք, որ մայրս շատ հիւանդ է և հայրս նոյնպէս և որ ծնողներս հինգ փոքր որդիներ ունին։ Այս բոլորը նա ինձանից հարցնումէր։

Տէգր. Եթէ որդիս տվեց քեզ փողը այդ հարցերից յետ, ես շատ ուրախ եմ, որ լաւ է գործածել փողը։ Այժմ մի վախենար, վեր առ այս երկու մանէթը և տուր մօրդ կամ հօրդ։ Ես շատ բաւական եմ, որ դու այդ ինձ ասացիր։

Վարդ. Ո՛չ, պարոն, դուք ևս թոյլ եք տալիս ինձ այս փողը վեր առնելու։ Չգիտեմ — ինչպէս շնորհակալութիւն անեմ։ Սա այնպիսի մեծ օգնութիւն է մեր ընտանիքի համար։ Միայն թէ, պարոն, խնդրումեմ, ասացէք հօրս, որ դուք ինքդ թոյլ տվիք ինձ այս փողը վեր առնելու։

Տէգր. Լաւ, հոգիս, շատ լաւ . . . Հանգիստ եղիր, հայրդ ամեն բան կիմանա և չի բարկանա քո վերա։

Վարդ. Ո՜, մայրս ինչպէս կսկսէ աղօթք անել ձեր և ձեր որդու համար, ինչպէս կսկսէ աղաղակել Աստուծուն . . . .

Տէգր. Լսիր, Վարդենիկ . . . Եթէ որդիս քեզ դարձեալ փող կտայ, վեր առ առանց ընդդիմանալու, ես քեզ այսպէս եմ պատվիրում։

Վարդ. Բայց, պարոն, նա հրամայեց, որ բան չասեմ այս երկու մանէթի մասին և ասաց, որ եթէ ես կասեմ ձեզ սորա մասին, նա այնուհետև չի սիրի ինձ։

Տէգր. Մի նեղանար, նա հանաք է անում, իսկ ես աւելի ուրախ եմ, որ նա արգելել է քեզ իւր վարմունքի մասին ինձ ասելու։ Սա ցոյց է տալիս, որ նա չէ պարծենում բարի գործով։ Ուստի ես ևս արգելումեմ քեզ նորան մեր խօսակցութիւնը ասելու։ Հասկանումես տղեկս։

Վարդ. Հասկանումեմ, պարոն։

Տէգր. Ուրեմն երբ նա քեզ փող կտայ, դու վեր առ և ես չեմ ցոյց տա թէ գիտեմ այս գործը։

Վարդ. Լաւ, պարոն։ (Շարունակումէ յատակը մաքրել)։

Տէգր. (Ինքն իւրան, թղթերը զննելով)։ Իմ որդիս իւր բարեսրտութեամբ արեց այն, ինչ որ ես կամենումէի այս բարի մարդիկների համար . սա ինձ շատ ուրախացնումէ, և որքան քաղցրանք կլինէր, եթէ որդիս չցանկանար արծաթեա կոճակներ իւր շորի համար։

Երևոյթ 8. Տիգր. Արգ. Վարդ. (Վարդ. շարունակում է իր գործը խօսակցութեան ժամանակ)։

Արգ. Հայր, ձեր մօտ եկել է դերձակը և սպասում ձեզ նախասենեակում։

Տիգր. Թող սպասէ։ Եկ մօտս Արգ, դու վաղուց կասես ինձ, թէ ինչ բարի գործ արեր քո փողով, այնպէս չէ։

Արգ. Այո, հայր, եթէ միայն դուք կամենումէք այդ իմանալ։

Տիգ. Ես էս վաղուան գցեցի իմ ցանկութիւնը քեզ փող տալու քո արծաթեա կոճակների համար։

Արգ. (Ծիծաղելով) Հայր, դուք ինձ այդպէս չխոստացաք . . .

Տիգ. Այո, ճշմարիտ է, անցա տարին, ես քեզ աւելի հաւատում եմ։ Վերցրու առ 20 մանէթ, քո կոճակների գինը։ Քեզ աւելի երեխա չեմ համարում։ Դու կասես ինձ, երբ կկամենաս թէ ինչ արիր քո փողը։

Արգ. Ո՜հ քաղցր հայր իմ, եթէ վատ էի գործ ածել իմ փողը, ես կխոստովանէի, դուք այնքան բարի էք, որ ինձ կներէիք։

Տիգ. Յոյս ունիմ, հոգիս, որ դու գիտես, որ քեզ սիրում եմ ես։ (Ուշադրութեամբ նայում է թղթերին, ուշք դարձնելով երեխաներին։ Մի և նոյն ժամանակը Արգ. ծանր շրջում է սենեակի մէջ և քիչ աչք դարձնելով հօր վերա, փոքր առ փոքր մօտենում է Վարդ.)։

Արգ. (Մօտենալով Վարդ. տալիս է նորան թղթով փող) Վեր առ, վեր առ . . . (Վարդ. առաջուց չէ կամենում և ապա առնում է։ Արգ. արագ հեռանում է նորանից և դառնում դէպի Տիգ.)։ Հայր. կհրամայէք ինձ, որ ասեմ դերձակին, որ դուք կգաք, կամ դուք կամենումէք, որ նա այստեղ գայ։

Տիգ. Սպասիր։ Թող դեռ Վարդենիկը իւր գործը վերջացնէ։

Արգ. (Մօտենում է բաց արած պատուհանին ու նայում է)։

Վարդ. (Վերջացնում է իւր գործը)։ Ահա, պարոն, ես բոլորը վերջացրի (կանչեց Տիգրանեանին, ցոյց տալով նորան փողերը)։ Ահա այս վայրկեանիս տվեց նա ինձ դարձեալ։

Տիգ. Ինչպէս, այս բոլոր փողերը։

Վարդ. Այո, պարոն։

Տիգ. Աւելի լաւ։ Ես հաւանում եմ այդ։ Տուր նոցա հօրդ և մօրդ, որ այդ ես թոյլ տվի։ Այժմ, բարեկամ, գնա աշխատիր նորէն հօրդ և մօրդ համար։ Նոքա աշխատել են քեզ համար, երբ դու փոքր երեխա էիր։

Վարդ. Ո՜հ պարոն, ես չեմ ծուլանում աշխատելում, միայն թէ ոյժ ունենամ։ Դուք ինքդ տեսնումէք, որ Աստուած չէ թողնում մեզ։ (Ողջունում է)։

Տիգ. Այո Աստուած երբէք չէ թողնում աշխատասէրները։ Մնաս բարով, բարեկամ։ Գնա, քեզ սպասումեն քո ծնողները։ (Նորան նշան է տալիս գնալու։ Վարդ.— ողջունում է և հեռանում է)։

Երևոյթ 9. Տիգ. Արգ.

Տիգ. (Ծիծաղելով ասում է նորան)։ Որբեմ, սիրելի իմ Արգար, ես ամենևին չեմ կա-

քեզ իմանալ մինչև վաղը՝ թէ ինչ տեսակ փողերն։ Ես շատ կամենումեմ այդ իմանալ։

Արդ. Ով, թողեք հայր իմ, խնդրումեմ ձեզանից . . . Իսկ եթէ դուք կամենումէք այժմ իսկ իմանալ . . .

Տէր. Եթէ ես կամենայի, ես այնպէս կանէի, որ դու տխրված կլինէիր ինձ տեսնելու, թէ ինչ ես տուել փողը։

Արդ. Հապա ինչպէս, հայր։

Տէր. (Ծիծաղելով) Ինչպէս . . . Ուրեմն դրել ես այն 20 մանէթը, որ այս առաւօտ տուի քեզ։

Արդ. Քսան մանէթը . . . Նրանք . . . Նրանք այժմ առաջվան երկու մանէթից էլ են միասին, (ծիծաղում է)։ Այո, հայր, ես համոզված եմ, դուք տեսաք, որ ես այն օրը փողը Վարդենիկին, կամ նա տուաց ձեզ այդ . . . (Գրկում է հօրը) Ով, թողեք հայր իմ, դուք ինքներդ ասացէք ցանկանումէիք, որ ես լաւ գործ անէի փողերը. այնպէս չէ։ Ահա ես և ձեր ցանկութիւնը կատարեցի։ Ես օգնեցի չքաւոր ընտանիքին. միթէ արծաթեա կոճակներով չորս կարող էր աւելի ուրախացնել քան թէ բարի գործը . .

Տէր. Ճշմարիտ ես ասում, սիրելի որդի իմ։ Շնորհակալ եմ մեզ այդպէս վարվելու, և ես միշտ կսիրեմ քեզ . . . Այդպէս, սիրելի իմ, ես աւելի ուրախ եմ կուրծքիդ մէջ բարի սիրտ տեսնելու, քան թէ կուրծքիդ վերա արծաթեա կոճակները։( Գրկում է որդին և համբուրում։ Վարագոյրը ընկնում է)։

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ։

Ուսանողական ճանապարհորդութիւն խմբագրութեան (Մանձիկից — ուղարկ. Աղբ. №2)

Իմ սենեակս փոքր ինչ ուղղանկիւն, բայց արհեստական սարերի երկարութ յարկի մի մասն է բռնում։ Կրթված մարդիկ այդ սարերը շինումեն ուղղագծաց փողոցի երկու կողմում և նոցա տներ են անուանում։

Սենեակիս լայնութիւնը 5 մետր է, երկայնութիւնը 7 և 35 քառակուսի մետր տարածութիւն ունի. հիւսիսից և հարաւից սահմանափակվում պատերով, որոնք բաղկանում են քարի և կայծաքարի խառնուրդ ց պատրաստված ուղղանկ կտորներից և միացած են կրով, այն, եթէ անկիւնաւոր մարգիկներ լեռնով խուղ ք. նոքա շինված են կրով շաղախված աղիւսներով։

Այդ բանը ես տանը ձեզ չեմ ասում, որովհետև փորձի համար քանի մի անգամ պատը փորփրել եմ։ Արեւմտեան կողմից սահմանափակող պատը անկատարած է, որ կրե զանգվածից է կազմված, երկու միջակ լուսամուտ նայումեն մի փոքր պարտիզի մէջ որ երկու կողմից սահմանափակված է երկու կարգ տներով, իսկ լուսամուտների դիմացը — փողոցի կողմից ծա կշնափակված է հաստ ձողափակապատով։ Իմ չորրորդ պատի վերայ, որ սենեակիս արեւելեան սահմանն է որոշում, մի դուռն է բացված դէպի բակը և այդ բակից մի դուռ դուրս է տանում տան պանդուխտների վերայ։

Սահմանների այս նկարագրութիւնից երևում է, որ ոչ մի եվրոպական պետութիւն չունի այսպիսի չորս բնական սահմաններ, որոնք տանից անկոխելի և հրաշէնքի, պատերազմներն ցած դրացի տէրութիւնների թշնամական յարձակմունքից և իրաւ ես իմ դրացիներիս հետ ոչ մի խառնակութիւն դեռևս չեմ ունեցել։ Որովհետև իմ սենեակս դառնի վերայ բաւարար է

սև հողի նշան չէ գտնվում, այդ պատճառով հովկի բոյսերը ողորմելի դրութիւն կունենային, եթէ աւազին պատի տակ սենեակի երկայնութեանը հաւասար և մի փոքր լայնութեամբ հողակոյտ, մէջ ծախսով դարձրած չլինէր փոքրիկ պարտէզ, որ Շամիրամ Թագուհու այգիներն է յիշեցնում։ Սենեակի մօտ բարձրանումեն կանաչ ներկած փայտէ վանդակապատեր· հողակոյտի երեք կողմն դասւած են 35 սանտիմետր երկայնութեամբ և նոյնքան սանտիմետր խորութեամբ կանաչ արկղներ։ Նոցա մէջ գտնված հողի մէջ բուսնումեն կոտեմ, հասակասիսեռ և պատատուկ, որ վեր բարձրանալով փաթաթուածէ վանդակապատը և լուսամուտների առաջ կանաչից և ծաղիկներից պատուարներ է կազմում։

Յիշված պատի շուրջ բուսնումեն յաբրուկ, գեղանխում, քանի մի ուրիշ բոյսեր և երկու փոքրիկ ծառ հողակոյտի երկու կողմն են բռնում։ Ազատութեան մէջ այդ ծառերը մեծ բարձրութեան կհասնէին, իսկ այս տեղ խղճալի թզուկներ են նոքա և երբ համարձակեն իւրանց բնութեան սահմանած բարձրութեանը հասնել, ես պարտաւորված կլէի իմ նոցա հեռացնել այս տեղից· այդ երկու ծառից մինը վայրենի շագանակ է, իսկ միւսը—կաղամախի, երկուսն էլ մի հասակի տէր են և շուտով տասներեք տարեկան կդառնան։ Ես տխրութեամբ նախագուշակումեմ, որ դոցա հետ բաժանվելու ժամը մօտ է։ Կարդացողը կարող է տեղեկանալ նոցա պատմութեանը, եթէ ներողութիւն կըէ և մինչև վերջը կարդայ իմ այս ճանապարհորդութիւնս։ Երկրիս կենդանիների տեսակը աւելի պակաս է, քան թէ տունկերինը։ Կենդանիների դասի ներկայացուցիչն է միայն մի կենդանի կաթնակերների կարգից, մսակերների սեռից, կատուներու ցեղից, մի խօսքով, եթէ հարկաւոր է նորան իւր անունը տալ—հասարակ մի կատու (ֆէլիս կատու) ընտանի կենդանիներից մի սիրուն հաւիկ—բոլորովին պատւի ալժանի, թէ իւր համեստութեան ու կանոնաւոր կենցաղավարութեան և թէ մարմնի պարարտութեան սև ու փափուկ մազերի գեղեցկութեան համար։ Երկրիս մէջ բնակող կենդանիներից չեմ յիշում ամառը այցելութիւն անող անտանելի ճանճեր և սարդիներ, որոնք շատ անգամ տեղաւորվումեն սենեակիս հեռի և մութ անկիւններում, ուր դըժվար են հասնում սրբիչը և աւելը ։ Իմ երկրիս կլիման շատ ախորժելի է և աւելի տաք է քան թէ բալխառն, որովհետև սենեակի բարեյաջող պատերը ամենայն կողմից պատսպարումեն նորան քամուց և արուեստական միջոցներով նա պաշտպանվումէ ձմեռի սաստկութենից։ Անձրև գալիս է միայն այն ժամանակ, երբ վատ եղանակին մոռանումեն լուսամուտները ծածկել։ Բնակիչների թիւը, վերջին ստատիստիքական հաշուատեսութեան համեմատ, մի անձից է բաղկանում։ Դորանով իսկ բացատրվումէ, թէ ինչի այստեղ կառավարութեան ձեւը միապետական է և մի և նոյն ժամանակը անպայման հասարակապետական, Նորա միայնակ բնակիչը անսահման իրաւունքի տէր է իւր երկրի մէջ։ Նա փափագում ազատութեամբ չափվումէ օրէնսդրական և օրինակատար իշխանութեամբ, յարակցութիւն ունի օտար երկրային տէրութիւնների հետ։ Թագաւորի, հպատակի և ազգային պահապան զօրքի (նա չունի ոչ զօրք և ոչ նաւատորմիղ) պարտաւորութիւնները և արտօնութիւնները իւր մէջ է պարունակում։ Հաստատումեմ, որ կառավարութեան ձևերից ամենալաւը դա է և թէ այդպիսի տէրութեան մէջ ոչ յեղափոխութենից և ոչ խառնակութիւններից երկիւղ կայ· յեղափոխութիւն չէ կարելի անել անհնազանդութեան այն մի քանի տկար փորձերը, որ երբեմն ցոյց է տալի իմ միայնակ գերիս, արդէն վերևում յիշածս մեխս անունով կատուն։

Արուեստագիտութիւնը և վաճառականութիւնը ծաղկումեն, գրականութիւնը, գիտութիւնները և ճարտարութիւնները ծաղկումեն մինչ այն աստիճան, որքան ներումեն երկրին անձնական միջոցները։ Դուրս տանելու առարկաներ են գլխաւորապէս թղթեր, իսկ ներս եկողները սպիտակ թուղթ, թանաք, գրիչներ, գրքեր և ընտանեկան հարկաւոր պաշարներ, ինչպէս շաքար, կաֆէ, չօկօլադ, քարէ ածուխ, ծխախոտ եւայլն։ Դրամի, կշռի և չափի համար նորա մէջ ընդունված է տասնորդական հաշուատեսութիւնը։ Մաքսատուն ամենեւին չկայ, օտար երկրացիներ ընդունվումեն քաղցր հիւրասիրութեամբ. և նոցանից ոչ մի անցաթուղթ (պասպորտ) չէ պահանջվում։

Նոքա այցելութիւն են անում արձաններին և եկեղեցի տեղերին, օրինակ 450 հատորանոց գրատանը, պատկերների և արձանների գանձարանին, որը գնահատված է մինչ 50 ֆրանկ, բնական պատմութեան մուզէումին, որ ունի իւր մէջ վեց հատ խեցի, նոյնքան հանքային իրեր, երեք հատ թռչունների լցված խրտուիլակ և մի սպիրտի մէջ պահված օձ։ Կարդացող, դուք տեսնումէք, որ իմ սիրեցեալս բաւականին մեծ տէրութիւն է կազմում և բաւական հետաքրքիր բան է պարծենալ նորա իշխանի կամ քաղաքացու անունը կրելով. (Եւ ձեզ եմ յանձնում ինձ համար ընտրել այս անուններից այն, որը աւելի ինձ յարմար է համեմատ ձեր պոլիտիքական հայեացքին)։

Իմ ազգասիրական վեհանձնութիւնս գլխաւորապէս սառեցաւ այն ժամանակը, երբ ես ճանապարհորդութիւն արի իմ երկրիս մէջ և այդ ճանապարհորդութիւնը բաց արեց շատ այնպիսի բաներ, որոնց գոյութիւնը նորա մէջ ամենեւին չէի կարծում։ Իմ բարեկամներս յայտնեցին, թէ այդ հետաքրքիր ճանապարհորդութեան նկարագրութիւնը շատ օգտաւէտ կարող էր լինել կրթված հասարակութեանը։

Նոցա թախանձանքից ստիպված, վճռեցի այս ճանապարհորդութիւնը նկարագրել և ի լոյս ընծայել։

Ես մխիթարումեմ ինձ այն յոյսով, թէ ժամանակակիցներս բաւական կգտնեն ինձանից, իսկ ապագայ սերունդը չի ձանձրանայ ինձ մի տեղ նշանակել մարդկային ազգի բարերարների դասի մէջ։ (Կ շ ա ր ու ն ա կ վ ի)։

Կ. ՋԱԼԱԼԵԱՆ

## ՄՏՔԵՐ ՅԱՅՏՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ (1)

### I

«Ինչքան որ կընդարձակէք մտածելու և գրելու իրաւունքը,—այնքան կըկատարեցնէք ազատամտութեան զօրութիւնը։ Էմիլ դը Ժիրարդէն»։

Ինչ է պատիժ. Պատիժը մի վնասակար գործ սանձահարելու միջոց է, կամ աւելի լաւ ասեմ, մի վնասակար գործողութեան առաջքը դնելու իրաւունք է։

Ինչ է վնասակար գործ, գործողութիւն . . . . Ինչ է վնասակար պաշտօնակատարութիւն, ինչ է յանցանք։

---

(1) Այս յօդուածը համառօտութիւնն է այն ճառերի, որ խօսեցին պաշտօնակիցները ֆրանսիական օրէնսդիր ժողովում, տպագրական օրէնքի մասին վիճաբանութիւնների ժամին պ. Լուիզոն, Պելլետան և Ժիւլ Սիմոն. Գ. Ա.

Սա մի գործողութիւն է, որը ձեռնամուխ է լինում ուրիշի գործողութեանը, որը առաջ է գնում, կամ ամենեւին յափշտակում է մի որ և իցէ պաշտօնակատարութիւն.

Սպանելը յանցանք է, որովհետեւ սպանելով մի մարդ, ես յափշտակում եմ նորանից նորա մարմնի ֆիզիոլոգիական պաշտօնակատարութիւնը։

Մի արինահեղ յեղափոխութիւն, մի ապստամբութիւն անել, ընդդէմ ընդունված (հասարակութենից ընդունված) և հաստատված տէրութեան ձեւի, մի յանցանք է, որովհետեւ ես գործով, զօրով, բռնի յափշտակում եմ այն տէրութենից (և ուրեմն և հասարակութենից, որովհետեւ հասարակութիւնը ճանաչել է տէրութիւնը) նորա հասարակական կազմվածքի պաշտօնակատարութիւնը։—Նա մանաւանդ որ ոչ մի մարդ իրաւունք չունի իւր անձը բռնի դատաւոր կացուցանել հասարակութեան և տէրութեան յարաբերութիւններում։

Եթէ սա յանցանք է, մենք պահանջում ենք պատիժ, այսինքն յանցաւորը հասարակութենից որ և իցէ միջոցով հեռացնելը։

Կարելի է արդեօք գործի հետ համեմատել խօսքը։

Կարելի է յանցանք համարել այն միտքը, որ ես յայտնում եմ օրագրի կամ գրքի միջոցով։

Բոլոր ինչ որ մարդիկ գրով յայտնում են, մարդիկների բոլոր մտքերը, կարելի է երկու բաժանել.—տեսական և գործնական մտքեր։

2.

Տեսական կերպով գրելով ես կարող եմ կամ մի նոր ուսում յայտնել, կամ հաստատված մի ուսման դէմ խօսել։

Մի նոր ուսում յայտնելով ես կարող եմ կամ ուղիղ կամ ծուռ, կամ օգտաւէտ կամ վնասակար գաղափարներ յայտնել։—Բայց և վնասակար, ծուռ մի ուսում յայտնելով, ես ոչ ոքից իրաւունք չեմ յափշտակում, իրաւեւս արգելք չեմ դնում պաշտպանել հակառակ գաղափարները։

Կարելի է արդեօք յանցանք համարել այն, ինչ որ ուրիշից չէ խլում գործողութեան իրաւունք։

Մի հաստատված ուսման դէմ խօսելով, ես նմանապէս կարող եմ կամ ծուռ կամ ուղիղ մտքերը յայտնել. ես կարող եմ հին ուսման սխալութիւնները ցոյց տալ, կամ իմ սահմանափակված զարգացման պատճառով ծուռ կերպով հասկանալ մարդիկներից ընդունված մի պատուական ուսում, և ի զուր յարձակվել նորա դէմ։

Դարձեալ այս դէպքում կարելի է արդեօք իմ գործողութիւնը որ և իցէ յանցանքի հետ համեմատել։

Միթէ տեսական կերպով յարձակվելով մի հաստատված ուսման, մի ճշմարտութեան դէմ, ես ոչնչացնում եմ նորան, միթէ այս իմ գործողութեամբ ես այն ճշմարտութենից խլում եմ կենդանութեան իրաւունքը։

Եթէ նա ճշմարտութիւն է, թող ինքն իրան պաշտպանէ։

Մի ճշմարտութեան դէմ յարձակողը պատժել նշանակում է այն աստիճանին թոյլ համարել այն ճշմարտութիւնը, որ նա լոկ խօսքից անզօր, բանաւոր յարձակումից քանդվում է,—նշանակում է վիրաւորել այն ճշմարտութիւնը։

### 3.

Ամերիկա և Զվիցերիա ինչպէս յայտնի է հասարակապետութիւններ են. Բայց ոչ Ամերիկա ոչ էլ Զվիցերիա յանցանք չեն համարում երբ որ մի հեղինակ գործնական մի փոփոխութիւն կառաջարկէ Զվիցերիայի կամ Ամերիկայի սահմանադրութիւններում, կամ վերջապէս այն հասարակապետութիւններից թագաւորութիւններ կազմել կառաջարկէ. (1)

Յայտնելով մի ծուռ գործնական միտք ես ոչ ոք չեմ ստիպում ընդունել նորան....
Յայտնելով մի նոր գործնական միտք, ես հին մի հիմնարկութիւն չեմ ոչնչացնում իրապէս, թէև խօսքով առաջարկէի ոչնչացնել նորան.

Իսկ եթէ հասարակութիւնը մի հեղինակ է պատժում նորա խօսքի համար, մի գործնական յանցանքի հաւասար,—նա սորանով ապացուցանում է որ ինքն մեծ հաւատ չէ ընծայում իւր հիմնարկութիւնների հաստատութեանը.

### 4.

Առհասարակ երբ մի հասարակութիւն կանչում է, վախենում է, աղաղակում է, պատժում է մի նոր գաղափարի և սկզբի երևելու ժամանակ,—նա սորանով ապացուցանում է որ կամ անընդունակ է հետևաբար մտախորհութեամբ, ապացոյցներով և քննադատութեամբ հերքել վնասակար մի վարդապետութեան ուսումը,—կամ անզօր է վնասակար և ծուռ մի գաղափարին կատարեալ արհամարհանքով պատասխանել. (2)

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ.

## ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«Հայկ. Աշխ—ի» 1868 թուին վերջին տետրակներում տպվեցան առաջին անգամ թէ Հայաստանի վերաբերութեամբ Եւրոպայում մշակող գրականութեան ամենանշանաւոր երևոյթների մասին տեղեկութիւնները, թէ առհասարակ Հայերի վերաբերութեամբ արտասահմանից տեղեկութիւնները.

Իմ նպատակս չէ այստեղ ձեր օրագրի «Մեր Ներքին գործերի» այս բաժնի օգուտը ապացուցանել. Ես շատ լաւ եմ հասկանում թէ մի տարի այսպիսի տեղեկութիւնները հաղորդելով մեծ օգուտ չէ կարելի բերել—Ակներև է նմանապէս, թէ ինձ թէ ուրիշներին այս տեսակ առաջին փորձի բոլոր պակասութիւնը.

Այսպիսի տեղեկութիւնները, իմ կարծիքով, կարող են միայն այն ժամանակ օգուտ բերել, եթէ շարունակաբար կհաղորդվին օրագրին.—Հասարակութիւնը այն ժամանակ միջոց կունենայ անդադար հետևել օտար երկիրների մէջ ազգային գրականութեան մշակութեանը.

Ինչ և իցէ. Հեյդելբերգի մէջ ապրելով ես միջոց ունէի հետևել մեր երկրին և ազգին վերաբերեալ Եւրոպայում մշակող գրականութեան առաջադիմութեանը.

---

(1) Նորերումս (1870) Իտալիայի մէջ յայտնեցին մի օրէնքը, որով «կեցցէ հասարակապետութիւն» աղաղակը յանցանք չէ համարվում, և չէ պատժվում, եթէ նորան բանի մի գործ չէ հետևում, եթէ նա միայն մասնաւոր կարծիքի արտայայտութիւն է.

(2) Պ. Ժիւլ Սիմօն, ապրիլի 6 ասած ճառը յետագայ խօսքով աւարտեց. «Ես կառաջարկեմ տպագրութեան յանցանքների վերաբերութեամբ յետագայ միակ յօդվածից բաղկացած օրէնքը.—Չկայ տպագրութեան յանցանք» (1870).

Հեյդելբերգի մէջ, ինչպէս հարաւային Գերմանիայի ամէն համալսարանական քաղաքների մէջ (և նմանապէս Զուիցերիայի քաղաքների մէջ) հիմնված է քաղաքային և հասարակութենից հարուստ մի ընթերցարանը «Մուզէում» անունով։

Հարաւային Գերմանիայի համալսարանական քաղաքները, մեծ մասով, փոքր քաղաքներ լինելով, այս «մուզէումներ» քաղաքի բոլոր ընթերցող և պարապող հասարակութեան կենտրոն են դառնում։ Այս պատճառով այսպիսի մի ընթերցարանը պէտք է ներկայացնէ գիտութեան և գրականութեան պարապելու, կամ աւելի լաւ ասեմ Եւրոպայի մտաւոր կեանքի ամէն ճիւղերին հետևելու միջոցները։

Ուսանողի համար շատ հեշտ է որպէս անդամ ընդունված լինել այսպիսի մի հասարակութեան մէջ։

Մեծ քաղաքում, ընդհակառակն, միջոցները պարապելու և գիտութեան զանազան ճիւղերին հետևելու, ցրված են, կենտրոնացած չեն։ Աշխատանքի բաժանումն հասցրած է մեծ քաղաքում մինչև վերջին աստիճանը . . . . Գրականական, գիտնական և քաղաքական ընկերութիւնները և ընթերցարանները բազմաթիւ են այստեղ, բայց նոցանից ամէն մէկը սահմանափակում է իւր միջոցները մի տեսակ գիտութեան ճիւղին։ Եւ մեծ քաղաքում աւելի դժվար է այսպիսի ընթերցարանի անդամ դառնալ։

Բացի սորանից փոքր մի համալսարանական քաղաքում աւելի հասանելի է լինում մարդին մտերիկ յարաբերութիւններ ունենալ գիտնական շրջանի հետ։

Այս պատճառով, այժմ Վիեննայում ապրելով և ոչ Հեյդելբերգում, ես չեմ կարծում թէ կարողանամ շարունակել օրագրին տեղեկութիւնները հաղորդել։

Այնու ամենայնիւ ես չեմ յուսահատվում և կաշխատեմ բոլոր միջոցները ձեռք բերել այս տեսակ աշխատանքը շարունակել կարողանալու համար։

Բայց դարձեալ, որովհետև խօսք չեմ կարող տալ թէ իմ այս գործի վերաբերեալ ջանքը կյաջողվին,—ինձ կներվի այստեղ մի ցանկութիւն յայտնել. այն է որ հայրենակից ուսանողները արտասահմանում, որոնք յաջողակ հանգամանքներում են գտնվում այս կողմից,—շարունակէին այս աշխատանքը, և իմ հաղորդած տեղեկութիւններից աւելի կատարեալ աշխատանքը առաջարկէին ձեր օրագրին։

Վիեննա. 18 յունվ. 1870. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ։

## ԵՐԱԶ (Լերմոնտովից)։

Դաղստանի հովիտում,
Միջօրէի տաք ժամին
Ընկած էի ես անշարժ
Գնդակ խրված իմ կուրծքին։
Դժուարատար իմ վէրքից
Ծուխ էր ելնում դեռ ևս,
Կաթիլ կաթիլ ինձանից
Քամվում էր իմ արիւնս։
Հովիտի մէջ աւազուտ
Ընկած էի անշնչեր.
Չորս կողմից միայնակ
Պատումէին ինձ ժայռեր։
Արեգակը այրումէր
Նոցա դեղին գագաթներ,
Այրումէր ինձ, բայց վրաս
Եկել էր քուն մահաբեր։
Տեսնումէի երազում
Իմ մայրենի իմ երկրում

Գիշերհանդէս մի ուրախ,
Որ բոցի պէս էր փայլում
Մատաղահաս ծաղկազարդ
Բազմաթիւ կանայք այնտեղ
Ուրախ ուրախ իմ վերաս
Խօսումէին միասին։
Խօսակցութեան այն ուրախ
Չկամեցաւ լինել կից,
Մինն մենակ նստած էր,
Տխուր տրտում վշտալից։
Թէ ինչ էր եկել միտքը
Մատաղահաս այն հոգուն,
Որ մտել էր տխուր քուն—
Գիտէր է Աստուծուն։
Նա տեսնումէր երազում
Հովիտը Դաղըստանի,
Եւ այն հովտի մէջ ընկած
Իւրան ծանօթ դիակ մի։
Դիակի կուրծքին կար վէրք,
Ծուխ կար սեւացած վէրքից,
Եւ իբրեւ սառն վտակ
Հոսումէր արիւն մէջից։

ԳՐ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

---

## ԿՈՄՍ ԴԸ ՄՕՆՏԱԼԱՄԲԷՐ

Մարտ ամսի 14-ին մեռաւ երեւելի ֆրանսիացի գրողը և քաղաքական կեանքում մեծ անուն ունեցող կոմս Կարլ դը Մօնտալամբէր։

Նա ծնվեց 1810 թւին Լօնդօնում անգլիացի մօրից, իսկ նորա հայրը Ֆրանսիայի հին ազնուականների ցեղից էր։

Դեռ երիտասարդութեան ժամանակ Մօնտալամբէրը յափշտակվեցաւ ազատամիտ կաթօլիկութեան գաղափարով։

Աստուածապաշտ և հին ազնուական ծագումից լինելով, իւր հօրից ժառանգելով Լուդովիկ—Ֆիլիպի թագաւորութեան ժամանակ Ֆրանսիայի Ազնուական—Պալատի պատգամաւորութեան իրաւունքը, պաշտպանելով ազատամիտ սահմանադրութեան կուսակցութիւնը,—Մօնտալամբէրը չէր համակրում ծայրայեղ կուսակցութիւններին։

Նա ատումէր հասարակապետութեան գաղափարը, և մի և նոյն ժամանակ չէր համակրում և հնամոլ կաթօլիկ կղերին, թէև կաթօլիկութիւնը սիրումէր և նորա տենչած գաղափարը հասարակութեան համար գիտութեան և առաջադիմութեան հաշտութիւնն էր կաթօլիկութեան հետ, իսկ տէրութեան կառավարութիւնը, նորա կարծիքով, ազատամիտ սահմանադրութիւնն էր ազնուապետութեան (արիստոկրատի) և կաթօլիկութեան վերա հիմնված։

Նա միջնադարեան մարդ էր, և ինքն եւս այս խոստովանեց բացագանչելով իւր մի ճառի մէջ «. . . . . Մենք խաչակիրների որդիներ ենք, և չենք յաղթվիլ Վօլտէրի աշակերտներից։»

Շատ անգամ պատմագրական երեւոյթների նշանակութեան եւս ուշք չդարձնելով նա պաշտպանումէր կաթօլիկ ազգերը և կուսակցութիւնները . . . . . միայն այն պատճառով, որ նոքա կաթօլիկ են։ Նա պաշտպանումէր իրլանդացիներ (ինքն Անգլիային համակրելով) և մի և նոյն ժամանակ պաշտպանումէր և այն հնամոլ Զվիցերիայի կանտօնները, որոնք կաթօլիկ լինելով փորձեցին, Զ օ ն դ ը ր բ ո ւ ն դ անունով բաժանվել բողոքական Զվիցերիայից . . . . Բաւական էր մի ազգին կաթօլիկ լինել, Մօնտալամբէրից պաշտպանված

լինելու համար . . . . . . .

Կոմս Մօնտալամբէրը երկու Լամընէի կուսակցութենից էր և Լամընէից ոչ պակաս երևելի հոգևորական Լակօրդէրի նման աշխատումէր իւր ճառերով (մանաւանդ նորա երեք ճառեր Ֆրանսիական Ակադեմիան — Պալատի մէջ ասված, 1844) և գրվածներով, որոնցից նշանաւորներն են «Սուրբ Եղիսաբէթի Ունգարացու կեանքը, — Փարիզ, 1836» և Արևմուտքի Աբեղաներ (1860), հաշտութիւն քարոզել ազատական մարդկային հասարակութեան և կաթոլիկութեան մէջ, — և Լակօրդէրի պէս եա իւր նպատակին չհասած, յուսահատված մեռաւ։

Նա համոզվեցաւ որ նորա առաջարկած հաշտութիւնը անկարելի է։ — «Ես չեմ վախենում խոստովանել, գրումէր նա փոքր ինչ մահից առաջ իւր մի բարեկամին, թէ ես այժմ Գալիկաններին (Հռոմի անմիջապէս ազդեցութենից անկախ Ֆրանսիական հոգևորական կուսակցութիւնը) առաւել եմ համակրում քան թէ «Ուլտրամոնտաններին» (Հռոմից, որպէս կաթոլիկութեան կենտրոնից անմիջապէս կախված եկեղեցին)։

Մարդը որ երեխայի պէս ջերմ և անվախ սրտով տասնևութ տարի շարունակ գրելով և խօսելով պաշտպանումէր կաթոլիկութեան և ազատութեան առաջադիմութեան մէջ հաշտութեան մեծ գաղափարը քարոզելով, — մի ծանր և վտանգաւոր հիւանդութենից չարչարված բարոյական ցաւի հարվածների տակ . . . . ստիպված է յուսահատված ճանաչել թէ նա սխալվել է, թէ նա դէպի ցնորք է ձգտում, դէպի անկարելի գաղափարը. ստիպված է ներքին զգացմունքով ճանաչել թէ իւր կեանքի բոլոր գործունէութիւնը ի զուր էր . . . . ։ Թէև ոչ, բայց վերջապէս համոզվեցաւ նա այդ կողմ, թէ Հռոմը անընդունակ է այդ հասարակութեան հետ հաշտվելու, թէ նա անշարժ է, թէ պապութիւնը անիծեց առաջադիմութիւն, շարժում, ազատութիւն, լոյս, գիտութիւն . . . անիծեց կրթված ազգերի կեանքի դարևոր մտաւոր և բարոյական ձեռնարկները . . . թէ կաթոլիկութիւնը այն աստիճանի . . . . է հասել, որ պահանջումէ մարդի (պապի) համար Աստուծու յատկութիւնը . . . . պահանջումէ Հռոմի այս վերջին ժողովի ընդունել Պապի անսխալականութեան վարդապետութեան հաստատութիւնը։

Վենեցիա, Մայիս, 1870. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

## ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ Բագուից (Նամակագր. պատասխան.)

Յոյսով եմ որ այս քանի մի տող խօսքերս կբարեհաճէք ձեր օրագրի թերթերում տպել ի գիտութիւն և ուրախութիւն մեր հեռաւոր եղբայրների։

Ինչպէս քաջ յայտնի է Բագուի «Մարդասիրական ընկերութիւնը» 1864 թւ. մայիսի 21-ին հաստատված է բարձրագոյն հրամանով։

Ընկերութիւնը 1864 թւին քաղաքումս հաստատեց ազգային ընթերցարան և ուսումնարան տղաների, ինչպէս որ հրատարակվեցաւ իւր ժամանակին, Ընթերցարանն ստանումէր ամեն տեսակ օրագրեր և լրագրեր, նմանապէս ռուսերէն և ուսումնարանն օրըստօրէ յառաջ էր գնում մեծապատիւ անդամների աշխատութեամբ և անդամներն ազգային սիրով լցված ընկերութեան բոլոր գործերն յառաջ էին տանում։ Այս ընթերցարանի և

ուսումնարանի, նմանապէս ընկերութեան բոլոր գործերի ազատ յառաջ գնալը շարունակվե-ցաւ մինչև 1867 թիւ յունիս ամիսը։ Այն ժամանակից յետ ընկերութեան նախագահի և անդամների անհոգութենից դադարեց ուսումնարանի և ընթերցարանի շարունակութիւնը։ 1864 թւից մինչև 1869 թիւ սեպտեմբեր ամիսը ընկերութեան նախագահն էր հանգուցեալ դոկտոր Դաւիթ Ռոստոմեանն։ Անցեալ 1869 թիւ յունիս ամսում քաղաքացոց հաստատե-ցին օրիորդների ուսումնարան «Սուրբ Գրիգոր Լուսաւորչի» անունով, որն այժմս յառա-ջադիմութեամբ շարունակվում է։ Անցեալ 1869 թիւ սեպտեմբեր ամսում ընկերութեան նախագահ Դաւիթ Ռոստոմեանն փոխվեցաւ առ Ցէր։ Անդամներն խորհուրդ արին, որ 1870 թիւ յունվարի 15-ին ժողով լինի ընկերութեան անդամների։ Յունվարի 15-ին ընկերութեան բոլոր անդամներն ժողովվեցան օրիորդների ուսումնարան։ Գիմնազիայի աշա-կերտ Ալեք. Գրիգորեանը ընտրեցին առաջ կարգաց, յետոյ ընտրեցին ընկերութեան նախա-գահ և խորհրդակից անդամներ, որոնց անուններն մի ստորև դրած եմ ներքև և յետոյ խորհեցին ընկերութեան բոլոր ներքին և արտաքին գործերի վերայ և ամէն բան կանոնի դրին, որ այժմ ընկերութեան բոլոր գործերն բարեկարգութեան մէջ են գտնվում։ Բացի սորանից նոյն ժողովում ընկերութիւնը վճռեց որ մի դպրոց և ընթերցարան հաստատէ, և առանց ամէն տեսակ ազգային լրագրեր (1)։ Այս վճռեց. և կարճ ժամանակի մէջ կա-տարեց։ Ընկերութիւնը դպրոցը արդէն գնել է և մի քանի օրից յետ կպատրաստվէ ընթերցարանն և դպրոցն։ Վերջապէս այս նորընտիր նախագահի և անդամների ջերմեռանդ շնորհով համարեա ընկերութիւնը նոր կենդանութիւն և նոր կեանք ստացաւ։ Այժմս ընկերութեան բոլոր գործերն և օրիորդների ուսումնարանն բարեկարգութեան մէջ են գտնվում և աղա յառաջ են քայլում և այսուհետև աւելի քաջալերեալ լինին, որովհետև հիմը հաստատ է, և յոյս ունինք, որ ընկերութեան այս նորընտիր գերապատիւ անդամները այսուհետև անհոգ չեն լինի ընկերութեան գործերն անդադար շարունակ տանելու։ Ցոյց Աստուած որ այսուհետև յառաջա-դիմութեամբ շարունակվի հայաստանեայց կերպով «Մարդասիրական ընկերութիւնը», նմանապէս և ազգային ամէն բարենպատակ գործերն։ Ընկերութեան նախագահն է մեծ. Մովսէս Ջոհրա-բեան (Գուբերնայի գաւառապետ)։ Ատենադպիր—Յովհաննէս Տէր Յակոբեան։ Գանձապետ— Գրիգոր Թումայեան։ Խորհրդակից անդամներ—Նիկողոս Կյուլինիկեան, Յակոբ Այրեսեան, Խաչատուր Քանանեան (հաշտարար դատաւոր), Իւան Ղասաբեան։ Մէ անդամ ևս կայ, որի անունն անծանօթ է ինձ։

Բագու, 26 փետրվարի. 1870։ ՋԱՒԱՏ ՂԱԶԻԵԱՆ գործակատար։

---

## ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ ԵՐՆՋԱԿԻՑ (Նամակագր. պատասխ.)։

Հայրենի գրականութեանն ծառայութիւն մի մատուցանելը անհրաժեշտ պարտակա-նութիւն համարելով, քանի ժամանակ է վեր, կարողութեանս ներածին չափ ինչպէս այս

---

(1) Ընկերութիւնը այժմ շարունակ ստանում է ռուսերէն լրագիր, բայց հայերէն դեռ ևս ոչ մեկն ազգային նմերն ևս չէ ստացել։ Ընկերութեան անդամների մեկից լսեցի, որ ընկերութիւնը փող ուղարկել է, որ արտասահմանից հայերէն և ռուսերէն լեզուով լրագրեր բերել տայ։

ցնուագոյ, նոյնպէս և ուրիշ մի քանի աշխատասիրութեանց դիմա եղած եմ. վասն զի չէ որ զանազան միջոցներով աշխատեցի և ոգևեցի իմ քրտանց գնէ մէկ պտուղն էլ տպագրութեամբ ի լոյս աշխարհի հանել, բայց անգութ ժամանակն միշտ դէմ դրեց իմ նպատակիս. վերջին միջոց ճանաչելով Լրագիր մի միջոցաւ այդ մասնաւոր աշխատասիրութեանց անուանքն հրատարակել այն մտօք, որ գուցէ գտնուին սատարողք մեր բարեմիտ ազգայիններէն, ես այս տարի փետրուար ամսոյ մէջ աղաչանք ի բերան անձամբ անձին Ս. Էջմիածին գտնուած ժամանակս դիմեցի «Արարատայ» խմբագրութեանն որ բարեհաճի կատարումն տալ իմ նպատակիս. բայց դժբաղդաբար արդէն խմբագրութիւնն ինձ պատասխանեց, որ մինչև այդ աշխատասիրութիւնքն չկարդացուին, չէ կարելի նոցա անուանքն հրատարակել, ես ամենևին չէի կարծեր թէ այդպիսի մի արգելական օրէնք գտնուէր մի քանի գրոց անուանք տպագրելու համար, այլ թէ ոչ այնքան մեծ վստահութեամբ ամենևին չպիտի դիմէի մի պաշտօնական պատկառելի ամսագրոյ խմբագրութեանն։ Այժմ նոյն ցուցակն սորա հետ միասին ուղարկելով Ձեզ, մեծապատիւ Տէր, կաղաչեմ դուք յանձն առնէք Ձեր ամսագրոյ էջերի մէկի մէջ տեղաւորել։ Տէր մի արասցէ թէ Ձեր կողմանէ ևս նոյն պատասխանն ինձ տրուի. գուցէ միայն անհաւանութիւնն դէպի այդ երկասիրութիւնն թոյլ չտայ տպագրելու, սակայն ես բնաւ չեմ կարող մտքէ անցնել որ Դուք իմ քրտինքը մինչև այն աստիճան արհամարհէք, որ քրտնալատակ երկոցս անուններն մի թերթի մէջ զետեղել դժուարանաք։

Ցարգոյ խմբագիր, տպագրել այս մի քանի երկոցս անուանքն խնդրելուս նպատակն այս միայն գիտացէք հաւատաւ, ինչոր վերևն ներկացայ և ոչ պարծանք կամ գովեստ վաստակել, քանի որ ամենից լաւն ես կշռած եմ իմ աշխատասիրութեանց այնքան նշանաւոր և օգտաւէտ չլինելը, որով բնականապէս կարող է խնդամտել մի աշխատասիրող կամ քըրտունք թափող։

Ահա այս են իմ տպագրելի երկոց անուանք.

I. Ճանապարհորդութիւն յոյսկոյս կովկասու, այն է ի Հայս և ի Վիրս, դիտողութիւնք ի վերայ առանին և ընկերական կենաց, բարուց, և բնաւորութեանց ազգաց բնակելոց ընդ մէջ սևու ծովու և կասպիականին. Բ. Օ. Ֆոն Հակստհաուզենայ. Թարգմ. ի վերջն զանազան ծանօթութիւնք Հայ թարգմանչին. գրեթ 1867 ամի։

2. Երնեստոյ Հանէկլայ, Ճենեվայի փիլիսոփայութեան նախկին պրոֆեսորի «Յաւիտենական կեանք» աշխ. Թարգմ. (ոգաւոր հայ թարգմանչի արտասուագին նուէր տարաժամ փոխմանն յանմեռագ սիրելւոյ Հարազատի, Ագաթարայ Սեդլալեան Արշարունեայ)։

3. Սաթենիկ Հայ դիւցազնուհի, թատերգութիւն յէլիս արարուածս (Երևանայ վերջին Սարդարի ժամանակ պատահած առասպելնասէր և ազնուամիտ հայ աղջկան մի անցք) աշխարհաբառ։

4. Պանդխտութիւն, կամ ճանապարհորդութիւն ի զանազան անկիւնս աշխ։

5. Տաղերգութիւնք, զանազան գրաբառ և աշխարհ. քերթուածք։

6. Քնար Մշեցի ազգայնոց, (ժողոված Ազգ. եղգոց Մշեցւոց և Վանեցւոց մինչև ցայժմ ոչ մի երգարանի մէջ հրատարակուածներ)։

Յուսով եմ թէ կգտնուին այնպիսիք, որք սատար լինին այս ինչ կամ այն ինչ երկասիրութեան տպագրութեան, որով և երկուքս ալ այրի կնոջ լումայն միայն ձգած կլինիմք ազգային գրականութեան արկղը։

Այս երկու տարի է, որ մի ընկերութիւն ունիմք, յանձնած դեռ անյայտութեան. որոյ անդամներէն և մեծապատիւ Ա. Տ. Ռուբէն Ջալալեանց, և Պ. Պաշեանց, այդտեղ գտնուողներն։ Ընկերութեան անունն է «Արարատեան ուսումնասիրաց ընկերութիւն» ունի այժմ և գումար մինչև մօտ 60 մէթ։ Այդ ընկերութեան կանոններն ինձ յանձնած լինելով պատրաստել, կուզեմ տպագրութիւն ի լոյս աշխարհի հանել, որպէս զի նախ բոլոր բանագէտ ազգայնոց կարծիքներն ժողովեմ յօդուածոց արժանաւորութեանց վերայ, և երկրորդ մի քանի անդամակիցներ ևս գտնելով կարողանալ առաջարկել իշխանութեանն ի հաստատութիւն։ Եթէ յանձն կառնուք, կամ կարելի է գրաքննչի թոյլտուութիւնն գտնել կուզարկեմ տպագրել, եթէ կամք տաք, ինչպէս «Հայկական Աշխարհի» մէջ, նոյնպէս և առանձին տետրակաւ մի քանի հարիւր օր. ամէն տեղ տարածելու համար։

Նոյնպէս ես մտադիր եմ մի քանի աշխատութիւններ ուղարկել ինչպէս այլոց նոյնպէս և Ձեզ տպագրելու։ Զգիտեմ յանձն կառնուք նախ փոքր ինչ մեծադիր տառերով տպագրել, և երկրորդ ամսագրոյ մէջ տպագրածն առանձին գրքոյկներ ևս յօրինել մի քանի հարիւրներ։ Աշխատութիւնքն պիտի լինին. «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու» — Հայաստանի վանորայք» և «Ժողովրդական նախապաշարմունք»։ Այս մասին Ձեր բարեհաճութիւն կխնդրեմ։

Ի Վ. Ս. Կարապետին Երնջակու. 13 ապրիլ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ՍԵԴՐԱԿԵԱՆ։

## ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ.

Կամենում եմ յայտնել այն հետաքրքիր անցքերը, որոնք պատահում են Կ. Պոլսում Հայերի մէջ։ Կ. Պոլսի թղթակցի խօսքերից երևում է (նամակը ուղղված է ռուս լրագիր «Москов. Вѣдомости», № 47 և 49, 1870), որ հայ—կաթոլիկները սկսել են հասկանալ իրանց դրութիւնը, որ դարևոր դատերը ցոյց տուին պապին եկեղեցու գլուխ ընդունելու ոչ միայն անօգտաւէտ, այլ և վնասակար լինելը։ Դոքա, գոնէ այսպէս է մեր կարծիքը, այս անկարգութիւններից յետոյ լաւ կմտածեն, կկշռեն արդարութեամբ և կվճռեն բոլորը ընդհանուրի օգտին։ Թող իմանան, որ 19 դարում «արտաքոյ Հռոմի չիք փրկութիւնը» դարձել է արտաքոյ Հռոմի չիք գերութիւն։ Ահա այսպէս է գրում թղթակիցը։

«Այստեղի հայ—կաթոլիկների մէջ մինչև այժմ դեռ չեն դադարել երկպառակութիւնները, և շատ քիչ յոյսեր են տալիս շուտով բաւականութիւն գտնելու։ Վախենալով նոր անկարգութիւններից, Թիւրքերի պօլիտիկան վարչութիւնը վայելուչ գտաւ անցեալ կիւրակէ, կախել տալ Պէրայի Սուրբ Յովհան Ոսկեբերանի եկեղեցու դռանը վերին աստիճանի հետաքրքիր յայտարարութիւն. «Վերին կառավարութեան տնօրէնութեամբ, խստիւ արգելլում է այր և կին մարդիկներին աղօթք անել բարձրաձայն կամ աղաղակ բարձրացնել եկեղեցում սպասաւորութեան ժամանակ։ Իւրաքանչիւրը, համաձայն իւր կրօնի կանոններին, պարտ է լսել սուրբ պատարագն և բարձրացնել իւր աղօթքը հոգու հեզու-

թեամբ և միտքը ժողոված ։ Ով կխանգարէ վերև յիշվածը և կսկսէ աղօթել բարձր
ձայնով, չպիտի մտնէ եկեղեցի, որ չ ընկնի սորա համար սահմանված պահանջողութեան տակ ։

«Այն ինչ հերձուածողները (диссиденты), թւով 4000 հոգի, կտրեցին ամեն
տեսակ կապակցութիւն Հասունի կողմնակիցների հետ, շինեցին առանձին ժամանակաւոր ե-
կեղեցի և ուղարկեցին պապին մի երկար թուղթ, որի մէջ բացատրվելով, որ չեն ցան-
կանում այլ ևս ունենալ որպէս պատրիարք վերոյիշեալ Հասունը, արևելեան կաթոլիկների
այն թանկագին անկախ իրաւունքները խանգարողը, խնդրում են բաժանել նոցա միւս միա-
կրօններից, տալով նոցա պատկանած եկեղեցիների և հասարակաց Երկրից բաղկացած սեպ-
հականութիւնների բաժինը։ Այսպէս ուրեմն այստեղի հայ—կաթոլիկների մէջ երկպառա-
կութիւնը համարվում է արդէն գլուխ բերած, և կարող է նշան դառնալ մի այդպիսի ան-
ջատման ևս Ասորիների և Պաղեստինայի Արաբների մէջ, եթէ պապը չի դադարի վեր-
ջապէս արևելեան կաթոլիկներին միւս լատինացիների հետ հաւասարեցնելու փորձերից, և ե-
թէ նա նորից չի հաստատի յօգուտ նոցա անարգել գործ դնել սկզբում պարգևած իրաւ-
ունքները, որ է եպիսկոպոսների ընտրութիւնը և հասարակաց գործերին սահմանադրապէ-
հոգացումն ։ Պատրիարք Հասունը միշտ գործունեայ գործիք էր պապի այս փորձառու-
թիւնների մէջ և միևնոյն ժամանակ կաթոլիկական պրօպագանդայի եռանդոտ պաշտպան
Թիւրքիայի ուղղափառ բնակիչների մէջ ։ — Այժմ ծագած այստեղի հայ—կաթոլիկների
մէջ անցքերը թող լինին խրատ այն սակաւաթիւ Բուլղարների կազմված ամբոխին, որոնք
մինչև այժմ դեռ ևս տեսնումեն պապի գլխաւորութեան մէջ միակ փրկութիւն յունական
տիրապետութիւնից ։

Սարանից յետ շարունակում է նոյն թղթակիցը. «Այսօր այստեղ ստացած Հռոմից
պաշտօնական հեռագիրը, յայտնելով, որ պապը երբէք և ոչինչ կերպով չէ ընդունում
հերձուածողները, որոնք անդանդաղ պարտական են հնազանդել իւրանց վերայ նշանակած
իշխանութեանը, այսինքն է "պատրիարք Հասունի տեղապահին, այս թէ ոչ Հռոմի գահը
սպառնում է նոցա ա մ ե ն ա ն ո ղ ո ր մ մ ի ջ ո ց ն ե ր (ինչպէս ասված է հեռագրում, որ
ուղղված է այստեղ Պիոս 9ի հրամանով)։ Այս վերջին խօսքերով, ինչպէս երևում է, պապը
կամենում է հասկացնել եկեղեցական բանադրանք, որովհետև ուրիշ միջոցներ չէ կարող գործ
դնել հերձուածողների դէմ, որովհետև ոչինչ պայման չկայ Ստամբուլի և Վատիկանի մէջ։
Օսմանեան կառավարութիւնը ունի կատարեալ իրաւունք, առանց Հռոմից հարցնելու ընդու-
նել հերձուածողների գոյութիւնը և տալ նոցա հասարակաց և ուրիշ իրաւունքներ»։

Նոյն թղթակիցը իւր հետևեալ նամակում այսպէս է գրում. «Այստեղ հայ—կա-
թոլիկական հասարակութեան մէջ վէճերը աւելանում են օրէցօր, աւելի խիստ բնաւորութիւն
են ընդունում ։ Որովհետև հերձուածողների համառ պահանջողութիւնը պահպանելու իւրանց
իրաւունքները և առանձնաշնորհութիւնները, և միւս կողմից պապի անթեքելի վստահութիւ-
նը խլելու նոցանից բոլոր այս արտօնութիւնները, քիչ յոյս են տալիս երկու վիճող կողմերի
մի որևիցէ փոխադարձ համաձայնութեանը ։ Ինչպէս ձեզ յայտնի է, հայ—կաթոլիկները
ոչնչով չեն զանազանվում հայ—առաքելականներից (լուսաւորչականներից), հաւատի վար-
դապետութիւնը, եկեղեցական ծէսերը և արարողութիւնները, թւականը, երկուսին ևս մի-

ւ նոյն են. թէ մինը, թէ միւսը իրաւունք ունին իւրանց սեպհական ցանկութեամբ ընտրել պատրիարքներ և համայնական կառավարութեան անդամներ, որոնք առանց մի որև իցէ պապի մասնակցութեան, վերահասու են լինում և կառավարումեն համայնութեան և եկեղեցուն պատկանած կայանքները։ Հայ—կաթոլիկները զանազանվումեն լուսաւորչականներից միայն նորանով, որ ընդունումեն պապը հոգևոր գլուխ, որին միայն իրաւունք են տալիս օծել իւրանց ընտրած պատրիարքներ։ Պապը Հասունի միջնորդութեամբ, վաղուց արդէն աշխատումէ փոխել այժմեան կանոնադրութիւնը, կամ տալ Հայերի գլխից կաթոլիկական վարդապետութիւնները և ծէսերը, մտցնել նոցա մէջ արևմտեան տօմարը, և խառնվել անմիջապէս նոցա համայնական գործերի կառավարութեան մէջ։ Այս փորձերն էին գլխաւոր առիթ, որ կազմվեցաւ այստեղ մի զօրեղ կուսակցութիւն հաւատարիմ արևելեան դաւանութեանը և հակառակ ամեն տեսակ նորաձևութիւններին։

Հերձուածողների հետ միացած քահանաները, պապի տնօրէնութեամբ, արդէն մերժված են եկեղեցուց. հետևեալ շաբաթին այստեղ սպասումեն սորա մասին Հռոմից ուղարկված լատին եպիսկոպոս, որին յանձնված է խաղաղացնել համայնութիւնը։ Այսու ամենայնիւ, հերձուածողները իմանալով, որ Հռոմի գահը վճռել է ներգործել ա ն խ ն ա յ օ ր է ն, ձայնումեն բարձր, որ պատրաստ են աւելի շուտով միանալ Լուսաւորչականներին, քան թէ Հռոմին թոյլ տալ գոնէ մի ամենաչնչին զիջումն։

«Որքան կարելի է դատել, Բ. Դուռն այժմ թեքվումէ հերձուածողների կողմը. Թողնելով խնդրի կրօնական մասը, նա, ինչպէս ասումեն, յայտնեց որ չի թողնի օտար իշխանին այսինքն է պապին, խառնվել Հայերի քաղաքական, համայնական գործերի մէջ, որոնք Հայերի համար ապահովացրած են նոյն ինքն Բ. Դրանից և անմատչելի են։ Բ. Դուռն, Հռոմի պալատին և Հասունի կողմնակիցների ցանկութիւններին հակառակ վերջապէս թոյլ տուեց հերձուածողներին կատարել աստուածպաշտութիւնը սուրբ Յովհան Ոսկեբերանի եկեղեցում, Պերայի մէջ։»

Սորան հարկաւոր է աւելացնել «Бирж. Вѣдомости» ռուս լրագրի խօսքերը (№ 104, 1870), որ քաղելով Վիեննայի «Պրեսսէ» լրագրից, գրումէ. «Բ. Դուռն յայտնեց պապի դեսպանին, որ պատրիարք Հասունը չունէր իրաւունք հրաժարվել վիճակից առանց Սուլտանի վճռի, իսկ Սուլտանը մտադիր չէ ձեռից թողնել իւր իրաւունքները»։

Միևնոյն ռուս լրագիրը (№ 105) քաղելով «Մօնդ» լրագրի Կ. Պօլսից հաղորդված լուրերից, գրումէ այսպէս «Կ. Պօլսի հայ—կաթոլիկ հերձուածողները ներկայացել են խնդրով ռուս դեսպանին ժէնէրալ ադիւտանտ Իգնատիէվին պաշտպանելու նոցա Հռոմի գահից, որը կամենումէ խլել նոցա իրաւունքները»։

«Москов. Вѣдомости» ռուս լրագրի թղթակիցը իւր նամակի մէջ այս ես գրումէ. «Ձայն է տարածվել իբր Օսմանեան կառավարութիւնը մտադիր է գցել զինաժողովէ հպատակութեան տակ փոքր Ասիայի հայ բնակիչներ, Կ. Պօլսի կէս պաշտօնական «Թիւրքի» օրագիրը, շարունակումէ թղթակիցը, շտապումէ իւրան յայտնել համաձայն այդ դիտաւորութեանը և խորհուրդ է տալիս կառավարութեանը որչափ կարելի է շուտով գործդնել այդ միտքը, որ հաւատարմացնէ Թիւրքիայի Հայերը Ռուսիայի սահմաններում բնակողների

ների հետ, որանց նոքա, ինչպէս խոստովանումէ ինքն խմբագրողը, աչառ ընդունվումեն ամենաբարձր կառավարչական և ուրիշ պաշտօնների մէջ։ Իւր եզրակացութեան մէջ այդ օրագրի խմբագրողը խորհուրդ է տալի նոյնպէս աչքի տակ ունենալ Բուլգարներ, որոնք նոքա կարծիքով ընդունակ են տալ Թիւրքիային հաստատուն, հնազանդ և հաւատարիմ զինուորներ։ Ինչ և իցէ, դժուար թէ օսմանեան կառավարութիւնը վճռէ շատ շուտով գցել զինաժողովի հպատակութիւնը կայսրութեան քրիստոնեայ բնակիչների վերայ. նա նախադասումէ տալ նոցանից այդ հպատակութիւնը ոչ էութեամբ, այլ փողով, որ Բ. Դրանը աւելի շահաւէտ է և հանգիստ։

Ռուս լրագիրները (Մոսկով. Վեդոմ. № 65 1870, Բիրժեվ. Վեդ. № 131) շարունակումեն հաղորդել, որ Կ. պոլսում հայ—կաթոլիկների մէջ խռովութիւնները շարունակումեն։ Հռոմից ուղարկված դեսպան մօնսինեօր Պլիւմը արդէն Կ. պոլսումն է, և Սա գործ է ածում բոլոր իւր ջանքը խաղաղցնելու այն երկպառակութիւնները, բայց դորա աշխատանքները շատ քիչ յոյս են տալի իւր ցանկացած վախճանին հասնելու։ Հերձուածողները, որ 35 հոգևորականներ իւրանց գլուխ ունին, հաստատ կանգնած են իւրանց ցանկութեանը, այն է հեռացնել պատրիարքութենից Հասունին և պահպանել իւրանց սահմանադրական իրաւունքները, որը ունին և պահպանումեն առ հասարակ բոլոր քրիստոնեայ հասարակութիւնը Արևելքում։ Պապի տնօրէնութեանը մի այդպիսի հակառակութիւն յայտնի բան չէր կարող մի քանի կաթոլիկ տէրութիւնների ուշքը չդարձնել տալ. առաւմեն, որ Փրանսիական և Իտալական կառավարութիւնները կամենալով խափանել հայ—կաթոլիկների միանալը լուսաւորչական եկեղեցու հետ, հրամանագրեցին այստեղի իւրանց դեսպաններին պաշտպանել Թիւրքերի և մօնսինեօր Պլիւմի առաջ հերձուածողների պահանջողութիւնները։

Սորան չնայելով, այդ խռովութիւնները ընդունումեն զարհուրելի կերպարանք։ Նոցանից մեծ մասը—ասումեն — բաժանվել են կրօնամոլ պատրիարք Հասունից և Հռոմի գահին յայտնի թշնամի են. այս բաժանվելու պատճառն այն էր, գրումէ ռուս լրագիրներից մինը, որ կաթոլիկական հասարակութիւնները չկամեցան ընդունել Արկէլեան (Առաքելեան) եպիսկոպոս պատրիարքի պաշտօնակատար։ Երկու անգամ, երբ Արկէլեան եպիսկոպոսը սկսումէր պատարագը, նորան ընդհատումէին աղաղակներով և գոչիւններով և ստիպումէին դուրս գալ եկեղեցուց։ Օսմանեան կառավարութիւնը շատ քիչ ուշք է դարձնում այս անհամաձայնութիւններին, բայց Հռոմին վերին աստիճանի անախորժ են, որովհետև կարող են հասցնել այն տեղը, որ հայ—կաթոլիկները կբաժանվէին բոլորովին պապի գահից։ Սորանից յետոյ մօնսինեօր Պլիւմը դժուար թէ կարողանայ խաղաղացնել թշնամի կուսակցութիւնները, որովհետև նա պահանջումէ անպայման հնազանդութիւն, բայց հերձուածողները առաւել ևս չեն կամենում կատարել այդ պահանջողութիւնը, որովհետև գտան պաշտպանութիւն Փրանսիական կառավարութեան կողմից։

27 Մարտի. 1870.

Ց. Տ. Ց.

---

## ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ։ (Նամակ. պատասխան.)

Ձեր օրագրի «Մեր Ներքին Գործերի» մէջ մի Նամակագրի հետաքրքրութիւնը լցու-

ցանելու համար յօգուտ իմ կառավարութեան ներքոյ գտնուած Ս. Գայիանեան օրիորդաց ուսումնարանի ներկայացուած թատրոնի մուտքի մասին, ահա այս կարճ պատասխանն է իմ կողմից, որը խնդրեմ հաղորդելն ի լուր ամենքի չյլանաք.

Բոլոր զուտ մնացած առ ձեռն պատրաստի դրամն եղել է ոչ թէ հարիւր հիսուն (150) այլ 114 ռթ. այս գումարից 70 ռթ. տրուել է երեք ամսեայ մնացած տան վարձը և ծառայի ու ջրի մի քանի ժամանակուան պարտքը. 15 ռթ. յետ է տրուել մի ժամացուցի գին, որի անշուշտ կարևորութիւնը նոյն իսկ ուսուցիչների նախատես պահանջմունքն է եղել:

12 մանէթ տրուել է մի քանի ժամանակուան ապառիկ բերած ուսումնարանի չքաւոր աշակերտուհիներին բաժանելու համար թղթի, գրչի, թելի և այլ մանր պիտոյքներին, բոլորը կանի 97 ռթ. մնում է 17 ռթ. Բացի այս փողից ապառիկ եղել է 69, որից տուած է 30 ռթ. իսկ ապառիկ դեռ ևս մնում է 89 ռթ,

Թէ այդ զուտ մնացած 47 ռթը. և թէ ուսումնարանից եկած զուտ եկամուտը, որ հասնում է մինչև տասնևութ ռթի. վճարվել է տան այս ներկայ 2 ամսեայ վարձը և այլ մանր ծախքերը.

Գուցէ ամենայն իրաւունքով պարոն նամակագիրը կհարցանէ մեզ, թէ ինչ պատճառաւ պէտք է երեք ամսեայ տան վարձը մնար, այն ինչ ուսումնարանի եկամուտը արդէն ծածկում է ծախքը.

Այդ կարծիքը փարատելու համար, ես ակամայից ստիպուած եմ պարզ կերպիւ խոստովանել իմ համոզմունքս, թէ մեր Հայերի մէջ կանոնաւորապէս վարժուելը մի փոքր դժուար է, չասեմ անհնարին.

Թէպէտ մեր ուսումնարանի եկամուտը այնքան սակաւ է, որ հազիւ թէ ծածկում է իւր ծախքը, բայց ի հարկէ եթէ ճշդապէս ամէն ծնողք և բարերարք կատարէին իւրեանց խոստմունքը և պարտքը և ուսումնարանի կանոններին համաձայն ամէն ամսի վերջին անխափան վճարէին իւրեանց որդւոց կամ որդեգրաց թոշակը, մենք կարևորութիւն չէինք ունենալ թատրոնով լրացնել ուսումնարանի պակասութիւնքը և եթէ ունենայինք ևս այն գումարը վստահօրէն կարելի էր ի գործ դնել ոչ թէ միայն, ինչպէս նամակագիրն ասում է, հարկաւոր գրքեր և իրեղեններ գնելու այլև մինչև անգամ աճեցնել և այն մի քանի աղքատ աշակերտուհիներին գոնէ կօշկագին յետ պահելու համար, որոնց ուսումնարանս պարտաւորեալ է զանազան հանգամանքներով ընդունել և կրթել.

Նոյն իսկ անկարգութեան պատճառաւն էր, որ անցեալ 1869 նոյեմբեր ամսի տարեհանդէսի օրը ներկայացրած հաշիւս համաձայն, որը տպուեցաւ «Մեղու Հայաստանի» լրագրի անցեալ տարուան վերջին համարներից մէկի մէջ, մնաց ուսումնարանի տարեկան ընթացքի մէջ պարտք 40 ռթ. Ով որ հարց անող չեղաւ, վճարուեցաւ արդեօք ցայսօր այն պարտքը թէ ոչ. — Այո, վճարուեցաւ. բայց ոչ ուսումնարանի եկամուտից, կամ մի անծանօթ ձեռքով, այլ նոյն իսկ ուսումնարանի պահողը հարկադրուեցաւ իւր օրական ապրուստից պակասեցնելով, չարատաւորել ուսումնարանի անունը, աչքի առաջ ունենալով այն ապառիկները, որ պիտի ստացուէին և որոնցից կարելի էր յետ տալ այդ փողը, որը մինչ այժմ և կարծեմ յուսահատ եթէ ստանալու չէ, պակասն էլ ես երկմտելու է:

Հետևաբար պիտի կարճատեսութիւն համարուի մեր կողմից այս գործի շարունակութիւնը, այն ինչ փորձը մեզ ցոյց է տալիս մեր ազգի մէջ կարգաւորապէս յառաջադիմութեան անհնարաւորութիւնը. բայց ասացէք ինձ, խմբագրող և ձեզանով պ. Նամակագիր, եթէ ամէնքս վհատվինք և ճանապարհի կէսից յետ դառնանք, ընչով կամ երբ կարող ենք մեր մանուկներին կանգնացնել ճշմարտութեան ճանապարհի վերայ:

Այս համոզմանց վերայ լինելով մեր ուսումնարանի բոլոր աշխատակիցներս, չենք խնայում ուրաքանչիւրս ըստ մեր կարողութեան գործելը, մեր վարձը ստացած համարելով մեր ուսումնարանի անմեղ աշակերտուհիների օր աւուր արած յառաջադիմութեամբը:

Այս իմ և բոլոր ինձ հետ աշխատակից ուսուցիչների պատասխանը, որի համար ամէն ոք ազատ է իւր դատողութիւնը անել:

Թիֆլիս, 1870, ապրիլ 3. ՕՐԻՈՐԴ ԱՇԽԷՆ ԴՕԼԳԵԱՆ

---

## ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ: (Նամակագրողի պատասխանը):

Արգոյ հրատարակիչ «Հայկական Աշխարհ» օրագրի:

Արդէն Ձեզ ես իբրև ճշմարտաքարոզ խմբագրի, և Հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի ներքին և արտաքին, անցեալ և ներկայ հանգամանաց տեղեակ անձի յայտնի կլինի այն տետրակը, որ քաղաքումս հրատարակվեցաւ այս տարի այս օրինակ վերտառութեամբ «Ճառախօսութիւն և համառօտութիւն Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի հանդիսաւոր գործողութեան մէջ, 1869 թուականի հոկտեմբերի 12-ին.»

Այս տետրակը կարդալով առ ի սրտէ ուրախ եմ նոյն ուսումնարանի ներկայ և ապագայ բարեկարգութեան մասին, ուրախ եմ, ըստ որում Հայ եմ և հայկական հիմնարկութեանց բարեյաջող յառաջադիմութեանց առ ի սրտէ ցանկացող, ուրախ եմ, ըստ որում իմ մանկական մտաց զարգացումն ստացել եմ նոյն ուսումնարանի մէջ, որով նա իմ վերջակէս բարեկեցութեան բարերար դարձաւ, և ես նրան ըստ կարեացս երախտագէտ: Այլ ուրախ եմ, ըստ որում իմ և իմ ընկերների տասնամեայ հոգաբարձական պաշտօնիւ երկեր արկած սերմերը ներկայ մեծապատիւ հոգաբարձուաց բազմաջան հոգացողութեամբը սկսել են պտուղ բերել: Ճշմարիտը խօսելով, շատ անխիղճ և նախանձաբեկ մարդը միայն կարող է առանց սրտով մխիկ տալ այժմեան մեծապատիւ հոգաբարձուաց բազմաթիւ հոգատարութեանները տնտեսական և կառավարչական մասին, և ընդդէմ արդարութեան կլինի գոնէ երախտագէտ մտօք շնորհակալ չլինել նոցա անվարձ և արդիւնաւոր գործակատարութիւնից: Բայց ազգային մեծագումար դրամոց գործադրութիւնը և մեծապատիւ հոգաբարձուաց ջանքը համապատասխան են նոյն ուսումնարանի հիմնադրի նպատակին, այդ հարցը կարեն լուծանել ինձանից առաւել փորձառու և իմաստուն անձինք, ես առաւել սրտանց հայեացք մեր Վեհափառ Հայրապետին: Նմանապէս ես չեմ վստահանում քննութեան տակ դնել մեծապատիւ հոգաբարձուաց համառօտութիւնը, հաւատալի գիտելով նոցա անշահասիրութիւնը: Զարմանում եմ, ինչ է պատճառը, որ համառօտութեան մէջ չեն դուրս բերած տեսչի և 17 ուսուցիչների ռոճիկներն, երևում է, որ այս ծախսի մէջ աչքի դիպչելու տարաձայնութիւն լինելով, լռութեամբ են անցել համառօտութեան մէջ:

Միայն մի քանի խօսք կամենումեմ խօսել մեծապատիւ Ստեփաննոս Նազարեանցի ճառախօսութեան մէջ պարունակուած անորոշ քարոզութիւնների վերայ, խնդրելով Նորա ներողամտութիւնը, նախընթացաբար յայտնելով, որ պ. Նազարեանցը ներկայ չլինելով ուսումնարանի անցեալ անցքերին, վեր է առել իրա բամբասանաց նիւթը չգիտեմ որպիսի աղբիւրներից։

Մեծապատիւ ատենախօսը իւր ճառի սկզբումը գրումէ. «Ես այս բոլորից բաղդաւոր եմ համարում իմ անձը ճշմարտութեան հաւատարիմ թարգմանիչ լինել ձեր արժանապատիւ ժողովի մէջ»։ Շատ ուրախ եմ, որ պ. Նազարեանցը յանձն է առել ճշմարտութեան հաւատարիմ թարգմանիչ լինելու սուրբ պարտաւորութիւնը, բայց տեսնենք, նա այդ սուրբ պարտքը կատարել է արդարութեամբ, թէ այս կամ անձին կրկցը ծառայելով կամեցել է ներկայ հոգաբարձուաց իւր երախտագիտութիւնը յայտնելու համար, այլոց վաստակն և պատիւն ոտնակոխ առնել, և ահա պ. Նազարեանցի նշանաւոր խօսքերը։

«Ներսիսեան ուսումնարանը զանազան յաջող և անյաջող սրաժամների մէջ յառաջ և յետս խաղալով, երբեմն անփորձ մարդկերի ձեռքում, անղեկավար նաւի պէս այս կողմ այն կողմ տարուբերելով ժամանակի հոսանքի մէջ, երբեմն փառամոլ և անձնախնդիր իշխանների կառավարութեան ներքոյ խաղալիկ դառնալով սորա կամ նորա կամքին և գլխաւորութեանը, ցաւալի է ասել, որ իւր քառասուն և հինգ տարի կացութեան մէջ օրէցօր անշքանալով մի տխուր կերպարանք փոխած է մի ուրիշ տխուր կերպարանքի հետ»։

Ես այնպէս համոզուածեմ, որ ճշմարտութեան հաւատարիմ թարգմանիչը պէտք է բացայայտ և պարզ գրէ, ինչոր ունի մտքումը և իւր խօսքերին օգնական ունենայ հաւատարիմ և անհերքելի փաստեր։ Ճշմարտութիւնը լոյս է, և նորա մէջ խաւարի մաս չպէտք է լինի. ուրեմն հարցնումենք պ. Նազարեանցին, ովքեր էին Ներսիսեան ուսումնարանի կառավարութեան մէջ անփորձ մարդիկը, ովքեր էին փառամոլ և անձնախնդիր իշխանները, որոնց կառավարութեան ներքոյ ուսումնարանը անշքանալով մի տխուր կերպարանք փոխած է մի ուրիշ տխուր կերպարանքի հետ։

Ճշմարտարան ատենախօս, ձեր քարոզութիւնքը ի հարկէ ըստ մասին, դուցէ և բոլորովին ուղղած են դէպի մեր տասնամեայ հոգաբարձական պաշտօնակատարութիւնը։ Եթէ այդպէս է, ճշմարտութիւնը կպահանջէր հետազօտել մեր տասնամեայ գործողութեան հաշիւը, սկսեալ ի 1861 թուին, և տեսնել, թէ մենք ուսումնարանի անշքանալու առիթ ենք եղել թէ պայծառանալու։ Ճշմարտութիւնը կպահանջէր հետազօտել ուսումնարանի դիւանական թղթերի մէջ և տեսնել, թէ քանի քանի շնորհակալեաց թղթեր կան հանգուցեալ մեծ հայրապետ Ներսէսից մեր արդիւնաւոր գործողութեանց մասին՝ նոյն դիւանի գրագրութեանց մէջ պէտք էր նկատել, որ հանգուցեալ մեծ հայրապետը և յետ վախճանի նորա բազմարդիւն Սարգիս արքեպիսկոպոսը մեզ համար թև ու թիկունք են եղել ուսումնարանի կալուածները և եկամուտ աղբիւրները աւելացնելու, ուսումնարանը ըստ տնտեսական և ըստ ուսումնական մասին բարեկարգելու, և ուսումնարանի հիմնադրի նպատակէն չհեռանալու։

Ճշմարտութեան թարգմանի պարտքն էր, ուսումնարանի գիւղի և Էջմիածնի Սինոդի գործերից քաղել տեղեկութիւն, թէ երբ յարեաւ այլ թագաւոր, որ ոչ ճանաչէր զՅովսէփ. որից յետ կրկին չարժեալ անձինք գտան ասպարէզ, և մեր գործողութեանց վերայ կարգուեցաւ քննութիւն նմանապէս սաստիկ հետազօտութեամբ, արդեօք ինչ և որպիսի արատ երևեցաւ մեր տասնամեայ գործողութեանց մէջ, թէև մեծ ջանք եղաւ քննիչների կողմից արատաւորելու մեր վաստակը։ Էջմիածնի սինոդը վերաքննելով քննիչների առաջարկած գործը, ահա ինչ է եզրակացնում ի 20-ն մարտի 1861 ամի. «Որովհետև վերոյգրեալ հաշուէքննութիւնն վարեալ է ըստ նկատողութեան սորին ճիշտ կանոնապահութեամբ և չերևի ի նմա կարծիքական ինչ, վասնորոյ զգրագրութիւն շարունակեալ ի մէջ Սինոդիս կոնսիստորին և Հոգաբարձութեան հոգևոր դպրոցի տեղւոյդ կարճել բոլորովին և զհաշուեգնիական ցուցակն կցել ընդ գործոյն, և զի վեհափառ տեսչապետ սորին որպէս ծանոյց ի զեկուցանելն զայսմանէ հաստատմացեալ ի ջերմեռանդ և յարգելնասեր ծառայութիւն տ. Հոգաբարձուացդ, արդէն առանձին հայրապետական կոնդակաւ հրաւիրեալ զձեզ ի շարունակութիւն այնպիսի պարտաւորութեանց ձերոց ցառանձին տնօրէնութիւն, ուստի և յՍինոդ սինոդիս առնել ինչ ըստ այն»։ Ճշմարտութիւնը լոյս է, և խաւարը նորան չի կարող յաղթել. թէև կան մարդիկ, որոնց կրքից թանձրամած խաւարով կուրացնելով իրանց մտաց աչքերը, պարզ միջօրեայ արեգական ճառագայթների մէջ անգամ ի խաւարի շրջին, . . . . . . .

Տեսաք, տ. տեսնախոս, որ մեր տասնամեայ գործողութիւնը այս ճիշտ վերաքննութեան ենթարկելից և այն իշխանութենից, որին միայն պարտական էինք, ըստ կամաց հիմնադրի դպրոցին տալ հաշիւ, այսպիսի ապահովագիր ստանալից յետոյ, թէև մենք պարտական չէինք այլ ոմեք հաշիւ տալու, բայց մի քանի վայր ի վերոյ խօսողների և գրողների դէմ հրատարակեցինք առանձին տետրակով մեր տասնամեայ հաշիւը։ Նոյն առաւել պարտական չէինք ոչ ոքի հաշիւ տալու, որովհետև համաձայն կամաց հիմնադրի դպրոցին, ամէն չորս ամսում և ամէն տարու վերջում լիակատար հաշիւ էինք ուղարկում կոնսիստորին և սինոդին։

Մեր երախտագէտ Փրկիչը կամենալով երախտագիտութեան սուրբ հոգին տպաւորելու հաւատացելոց սրտի մէջ, քարոզում է. «Եթէ ոք արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ, ոչ կորուսցէ զվարձս իւր.» Ցաւալի չէ արդեօք, որ երկնային ճշմարտութեան թարգմանիչ տ. Նազարեանցը, մեր, մեր նախորդ և մեր յետագայ ուսումնարանի պաշտօնակալքը կշիռքի մի թաթի մէջ դնելով և ներկայ հոգաբարձուաց առաջը խունկ ծխելով կոչում է առաջինները ա ն փ ո ր ձ, փ ա ռ ա մ ո լ, ա ն ձ ն ա խ ն դ ի ր ները. գոնեա չմոռնալով, որ ես և իմ ընկերքը տասը տարի մեր սեպհական բազմազբաղ գործերից նախադասելով ուսումնարանի հոգսը, չխնայելով գիշերային աշխատութիւնը, ցերեկուայ ցուրտը և տօթը, նաև մեր անձնական ծախսը, ոչ միայն մի աշակերտանայ մինչև եօթանասուն որդեգրի և հարիւր յիսուն երթևեկ աշակերտների մտաւոր և նիւթական կարիքը հոգացել ենք, 55 Ռբ. և 47 կպկ. մայր գումար ստանալով մեր հոգաբարձու կարգուած օրը, և ուսումնարանի յատկացեալ եկամտից աղբիւրները, տասն տարուայ միջոցում նոյա եկամուտքը հասցրել ենք մինչև քսան հազար Ռբ. և նոյն կէտի վերայ

կանգնեցրինք շնորհիւ բարերարաց ազգին, որ մինչև երկրորդ տասնամեայ շրջանը քառասուն հազարի պէտք հասնէր, իսկ բարերարաց օժանդակութեամբ մեր կառուցեալ ուսումնարանի եկեղեցեաց, կրպակաց և այլ շինուածոց և բնակարանաց, նաև նոր գնած կալուածոց և Նիւթեղինաց գինը երկու հարիւր հազար ՄՆԹից աւելի արժէ։ Այս ամէնը մենք անուամէնք սաղմոսերգուին հետ ասելով, «Մի մեզ տէր, մի մեզ, այլ անուան քում տուր մեզ զփառս քո»։ Եւ ահա այս է դառնաճաշակ պտուղը, որ քաղումենք ճշմարտութեան թարգմանչի գրչից։

Թէև ճշմարիտն ասելով, ազգային գործերի մէջ վաստակաւորքը, մանաւանդ մեր ազգի մէջ, միշտ այս օրինակ վիճակի են հանդիպել և պիտի հանդիպեն, սակայն եթէ նոքա խաժամուժ ամբոխի կողմից հալածանքներ են կրել, գոնէ հոգևոր և մարմնաւոր իշխանաւորների կողմից պաշտպանութիւն են գտել, այլ այժմ մի յարգոյապատիւ ժողով, որոյ անդամներին և մանաւանդ ատենապետին քաջ յայտնի է մեր վաստակը, թոյլ կուտայ իւր փաստաբանին անբուժելի հարուածներ տալ իրանց նախորդներին. չմտածելով գոնէ հասարակաց առածը, զոր ինչ սերմանես, զնոյն և հնձեսցես։

Ես այս խօսքերը գրումեմ, և պ. Նազարեանցից ատենեններին ապացոյցներ պահանջումեմ, ոչ թէ այն մասը, որ մարդկանցից փառք որսամ, քաւ լիցի, ես ունիմ ինձ առաջնորդ իմ Փրկչի սուրբ պատգամը. «Եւ յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք ծառայք անպիտանք եմք, զոր պարտն էր առնել արարաք»։ Մենք ազգի և եկեղեցու ծառաներ էինք, և ինչքան մեր կարողութիւնը կտանէր չխնայեցինք ազգին ծառայելու առանց ամենայն ակնկալութեան, և գիտենալով ստուգիւ, որ Աստուծոյ ամենատես աչքը և ազգին բարեմիտ մասը գիտեն և կճանաչեն մեր վաստակը, առ ոչինչ էինք համարում մի քանի մոլորեալ անձանց մեր դէմ յարուցած գրաւոր և բանաւոր զրպարտութիւնքը և պատերազմը, և նոցա դէմ չգրելով ինչ, իբրև հերքումն նոցա բոլոր զրպարտութեանց հրատարակեցինք մեր տասնամեայ գործողութեան հաշիւը, որով ամօթապարտ ափի բերան եղան մեր բամբասողները։ Սակայն երբէք չէինք կարծում, թէ մի արհիապատիւ ժողով թոյլ կուտայ ներկայ լուսաւորեալ դարու մէջ իւր փաստաբան ատենախօսին արատաւորել Ներսիսեան ուսումնարանի անցեալ վաստակաւորքը, հոգևորականք և աշխարհականքը, հանգուցեալքը և կենդանիքը, ուսումնականքը և արդիւնատուքը, մեծը և փոքրը, կոչելով նորանց ա ն փ ո ր ձ, փ ա ռ ա մ ո լ, ա ն ձ ն ա խ ն դ ի ր եայլն, և այս է պատճառը, որ ազգային տուրքերը օրէցօր պակասումեն, և ազգային գործերի մէջ մտնելու արժանաւոր անձինքը ճրագով ման գալու են դառնում։ Ուստի հրաւիրումենք պ. Նազարեանցին, որ կամ հրապարակաւ յետ կոչէ գրածները, կամ յականէ յանուանէ նշանակէ ա ն փ ո ր ձ, փ ա ռ ա մ ո լ և ա ն ձ ն ա խ ն դ ի ր անձինքը հանդերձ նոցա վնասակար գործողութեամբ, որպէս զի ազգը պարզապէս ճանաչէ իւր օգտակար և վնասակար անդամները։

24 ապրիլի, 1870 ամ. ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՀԻՐԵԱՆ։

## ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ.

Այս անգամ ևս ուշացաւ «Հայկական Աշխարհը» իւր ցանկութեան հակառակ։ Թէև

բազմիցս խոստացած իւր ժամանակին հրատարակել, շատ սակաւ հաստատ ենք եղել մեր խօսքին հրատարակման կողմից, բայց ոչ անյաղթ հանգամանքներից է եղել։ Այս անգամ խմբագրութիւնը սպասումէր № 12 տառեր, որ վերջապէս առացաւ։ Սիմֆէրոպոլ քաղաքից յարգելի ստորագրող մի յետագա տողեր է ուղղում խմբագրողին. «Շատ փափաքելի էր որ ձեր պատուական ամսագրի տառերը փոքր ինչ խոշոր լինէին այսուհետեւ, որ ընթերցողները չդժուարանային կարդալու։ Ասկէց զատ եթէ ամսաթերթերը ժամանակին հրատարակուելու և յուղարկուելու ըլլան, ձեր օրագիրը մինչև ցարդ հրատարակուածներէն ամենալաւը պիտի համարուի։»

Այս այսուհետեւ կաշխատենք լրացնել ազնիւ ստորագրողներիս փափագները։

Այս ձմեռը ցուրտ օրեր երկար շարունակվեցան, այնպէս որ մարտի 27-ին ձիւն եկաւ և նոր ծլած խոտեղէնը սառեցրեց, ձիւն եկաւ նոյնպէս ապրիլի 3-ին։ Լսեցի, որ ոմանց գիւղների մրգերը սառել էին և չյայտնվեցան։ Ես այս կողմից հանգիստ էի, որովհետև տնաս պտուղը միայն կծնասվի ցրտից։ Այժմ ես երկար ժամանակ լռելուց յետ շատ ինչ կցանկայի հաղորդել ընթերցողներիս և զրոյց անել, բայց ժամանակը անցնումէ և խմբագրողը շտապեցնումէ։ Ուստի նորէն հարկադրված եմ կարճ խօսքով շատի մասին խօսելով անցնել։

Մեծ պասն անցաւ վաղուց, մեր քաղաքների քարոզներն ու դադարեցին, մեծ պասի կոնսերտներն ևս վերջացան։ Ցաւումեմ, որ մեր արժ. հայրերը

. . . կարծումեն թէ քարոզը միայն մեծ պասին պիտի տալ էր. . . .

. . . . .

Ուստի այն ժամանակ ես ևս առիթ կունենամ քարոզների մասին աւելի ընդհանրապէս գանի մի խօսք։ Իսկ կոնսերտները լինելու չեն մինչև միւս մեծ պասը, իսկ այն կոնսերտի մասին, որ եղաւ Ներսիսեան ուսումնարանի դահլիճում մարտի 12-ին, համոզուած եմ, որ նորէն երբէք լինելու չէ, ուստի մի խօսք նորա մասին։ Ներս. ուսումնարանի հոգաբարձուներն թոյլ տվին, որ դահլիճում լինի կոնսերտ բարեգործական նպատակով յօգուտ Պէտերբուրգի չունևոր ուսանողների։ Կոնսերտի տնօրինողն էր պատանեակ պ. Յովհաննիսեանի։

Թատրոնական վայելչութիւններից թոյլ են տված մեծ պասին — աղօթքի և ապաշխարութեան օրերին — միայն կոնսերտներ, ուրեմն կատարված միւզիքը և երգը լինելով անշուշտ խորին հոյակապ վսեմ և խորհրդաւոր, պիտի արտայայտեն մարդկային մտքի և ոգու թռիչք երկրաւորից դէպի երկնայինը։ Գրեթէ բոլոր կոնսերտի միւզիքը և երգը պիտի ծնեցնեն ունկնդրի մէջ ձգտումն դէպի խորին բարեպաշտ մտածմունք և աղօթք։ Երևի այս մտքերով համաձայնեցին Ներս. ուսումնարանի հոգաբարձուներն տալ հոգևոր ուսումնարանի դահլիճը մեծ պասին կոնսերտի համար։ Բայց ինչ կոնսերտ. . . . Թող ոչ ինչ ասեմ արտաքին կարգի մասին, որ ա մ ե ն և ի ն չկար։ Կոնսերտը հրապարակախաղ դարձաւ, որտեղ վերջը սկսեցին լեզգինկա պարել. . . . Միթէ աւելի վայելուչ չէր լինի, եթէ այդ բարեգործական նպատակով Թիֆլիսի ընտանիքներից բանիմաց օրիորդներ և երիտասարդներ պատրաստել էին արդարև կոնսերտը իւրանց խաղով և երգով։ Բայց այս

դէպքում էլ կօնսէրտը պիտի պատրաստէին երիտասարդները իմաստով և պատուաւորութեամբ։ Որովհետև վերջերէն «Դրօէբա» օրագիրը (№ 14) ասա ինչ է պատմում. «Ապրիլ ամսին յօգուտ պ. Կարապետեանի կար կօնսէրտ Արհեստաւորական կլուբում. Հասարակութիւնը հաւաքվել էր պ. Կարապետեանին նպաստելու մտքով։ Հաւաքված փողով պ. Կարապետեանը մի զինք և երգը պիտի ուսումնասիրէ, Թիֆլիսի իտալական թատրոնի. խումբը ընդունված լինելով արդէն։ Պ. Կարապետեանի քաղցր ձայնը (տէնոր) հասարակութեան ուշքը գրաւեց, նոյնպէս իշխանուհի օրիորդ Արղութեանի պիանօի վերա ածելը։ Ուրիշ նշանաւոր ոչինչ չկար։ Պ. Ցովհաննիսեանին կարդաց Նէկրասովի բանաստեղծութիւն «Осторожность» և հասարակութեան ուշքը այն ժամանակ միայն դարձրեց իւր վերա, երբ ասաց. «И съ какимъ то армяниномъ обвѣнчалась, не спросясь (և մի Հայի հետ պսակվեցաւ առանց հարցնելու), որովհետև առանձին . . . ձևով մի ասաց «армяниномъ» (Հայի հետ) բառը։»

Ուրախալի է, որ բարեգործական նպատակով եղած կօնսէրտները յաճախում է հասարակութիւնը։ Թող յուսանք, որ բարեգործական ուսումնարաններն էլ առանց ուշադրութեան չեն մնա նոյն հասարակութեան կողմից։

Հաղորդումեն, որ Դուշեթում հայ օրիորդների ուսումնարան է հիմնվել, որը սկըզբում յաջողվեցաւ, բայց այժմ կարծես անյաջող է։ Պատճառը այն են հաղորդում, որ վրացի օրիորդներ չեն ընդունվում հայկական ուսումնարան։

Թիֆլիսում կա բարեգործական ընկերութիւն, որ ունի բաւական գումար և պահպանում է 6 օրիորդական և 1 տղաների ուսումնարաններ։ Ընկերութեան տարեկան գլխաւոր մուտքը բարերարներից է և ալլէգրիներից։ 1869 թւին բոլոր 6 ուսումնարաններում եղել են 62 հայ օրիորդներ։ Տղաներից ոչ մի հայ։ Տարեկան հաշիւը տպված է «Кавказъ»ում (№ 41)։ Ուսումնարանի հոգաբարձուհիներն ականաւոր տիկիններ են։

Զարմանում յայտնել, որ «Հայկական Աշխարհը» մի մեծ յանցանք է գործել (տես Մեղ. Հ-ի», № 5). չէ հաղորդել իւր ընթերցողներին Ներսիսեան ուսումնարանի ներքին ուսուցչական կազմվածքի ամենամեծ և չափազանց երևելի գործը, որ սա է. «ՏՊՎԵԼ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔԱՆԻ ՄԻ ԵՐԿԱՐԱԽՕՍ ՃԱՌԵՐ ԵՒ ՀԱՏՈՒՑՎԵԼ Է ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳԱՆՁԱՐԱՆԻՑ Գ. ԷՆՖԻԱՃԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԻՆ ԲԱՒԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ....» Իմ սիրելի Թօփալ Լրագրի հանճարեղ և շնորհալի ֆէլիէտօնիստ, դեռ էլ սովորեցէք գոնէ բառերը լօժիկաբար (տրամաբանօրէն) դասաւորել, ապա գրեցէք։ Լօժիկի ընդդէմ է ասել «մեծապատիւ Ներսիսեան ուսումնարանի տեսուչ» («Մեղ. Հ-ի» № 5, եր. 37, էջ 3, տող 9)։ Միւս անգամ գրեցէք այսպէս «Ներսիսեան ուսումնարանի մեծ. տեսուչ»։ Լեզու, ուսում և գրել չիմանալով, դիցուք թէ ասումէք որ աշխարհաբար խօսելիս կամ գրելիս հարկաւոր չէ ոչինչ գիտականութիւն իմանալ, և գրումէք ինչպէս որ Աստված ազդումէ։ Իսկ իմաստը... Իմաստը ամեն լեզուն և ամեն մէկը ունին, եթէ չինարէն էլ գրէիք։ Ուրեմն պահպանեցէք գոնէ իմաստ։ Ուրիշ գեղեցկութիւններդ թէ մտքի և թէ ոճի-կողմից բաց եմ թողնում այս անգամ, Տեղ չունիմ։

Կ. Պօլսում համալսարան հիմնվեցաւ ։ Համալսարանը պիտի ֆրանսիական ձեւով լինի և պրօֆէսօրներով ։ Առաջին դժվարութիւնները պիտի յաղթեն ֆրանսիացի ուսուցիչներ և շուտ կմօտենան իւրանց Թիւրք աշակերտներին և կհարստացնեն նոցա ։ Կան մարդիկ, որոնք մանկավարժութիւն այնպէս են հասկանում, իբր թէ ուսուցչի բարեկամական յարաբերութիւններն աշակերտների հետ վնասակար կերպով են ներգործում, այնպիսի ուսուցիչը վտանգաւոր է, Կարելի է, Բայց վտանգաւոր է այն կողմից, որ այնպիսի ուսուցիչը շատ են սիրում աշակերտները, նորա լոկ ակնարկութիւններն անգամ երբեմն աւելի շուտ և ճիշդ են կատարում քան թէ մեծաւորի հրամաններ ։

Շամիլը այժմ Թիւրքիայի մէջ է և Մեկկա պիտի գնայ։ Ծերութեան օրերը երևի այնտեղ է կամենում անցկացնել։ Երբ Շամիլին ասացին թէ փարիզի նոր պրեֆեկտը պ. Պիէտրին խնջոյք շինեց, հրաւիրելով 8000 հոգի, որտեղ տիկին Պիէտրին մինչև գիշերւան 12 ժամ չէ հեռացել գրանից, հիւրեր ընդունելով և թէ այդ խնջոյքը 1 միլիօն 214 հազ. 725 ֆր. ծախս է պատճառել, չէր հաւատացել։ Չգիտեմ ինչ կմտածէ սորա մասին իմ ընթերցողը ։

«Հայկական Աշխարհում» պատահումեն շատ անգամ այնպիսի նամակներ, որոնց ճակատին հաստատ գրված է «Նամակագրողի պատասխանատվութեամբ»։ Քանի մի անգամ լսեցի որ կարճատես մարդիկ ասումեն թէ ինչի է տպում խմբագրողը, եթէ գրվածին չէ համակրում ։ Սակայն վերոգրված բառով չէ հարկաւոր եզրակացնել միայն որպէս թէ խմբագրողը չէ համակրում գրվածին. այլ շատ անգամ պատահումեն ստորագրված այնպիսի հանգամանքներ, որոնց անտեղեակ է խմբագրութիւնը ։ Շատ պարզ է, որ այս դէպքում պատասխանատու պիտի լինի հեղինակն, որը տեղեակ է բոլոր հանգամանքներին ։ Նամակների ոճի համար մանաւանդ խմբագրողը չի յանձն առնի պատասխանատվութիւն։ Ասված է. ոճով կիմացվի հեղինակը։ Երբեմն այնպիսի անկանոն, անճոռնի ոճով նամակներ է ըստանում խմբագրողը, որ միտքն անգամ դժվարանումէ հասկանալ կամ կրկնութիւններով լցված։ Միևնոյն ժամանակ հեղինակը մասնաւոր նամակով խնդրումէ ոճը անփոփոխ թողնել ։ Այնպիսի նամակներ անտիպ թողնելը անիրաւութիւն է համարում խմբագրութիւն, մանաւանդ որ պարտաւորված է երբեմն տպել այնպիսի նամակներ, որոնց բովանդակութեան ևս ամենևին չէ համակրում ։ Բայց որովհետև Հայերիս մէջ ոչ միայն առանձին կուսակցական օրագիրներ չկան, ինչպէս լինումեն քաղաքակրթված երկիրներում, այլ բոլոր Ռուսիայում երեք պարբերական օրագիրներ կան միայն, ուստի հարկադրված է խմբագրողը տպել այնպիսի նամակներն ևս, հրատարակելով հակառակ մտքերն անգամ, և պատասխանատվութիւնը անշուշտ թողնել ամեն անգամ թէ բովանդակութեան և թէ անկանոն ոճի վերաբերութեամբ հեղինակի վերա ։ Եթէ հեղինակ մի մտքերի կողմից հետևումէ «Հայկական Աշխարհին» դժվար թէ ոճի կողմից նա հեռու մնայ։ Խմբագրողը ունի ի հարկէ իւր քերականական կանոններ, որոնք յայտնի պիտի լինին ուշադիր ընթերցողին, և դեռ հրատարակված չլինելով, կհրատարակվին անշուշտ շուտ միջոցում ։

Թիֆլիսում լուր է պտտում իբր թէ պարսկական շահը մտադիր է տեսնել Կովկասը և աշնան գալու է Թիֆլիս ։

Կայսր Աղեքսանդր II-ը արդէն սկսեց իւր ճանապարհորդութիւնը։ Իմանում ենք, որ օգոստոսի վերջը Կայսրը կկարենայ բաղդաւորել Թիֆլիսը իւր ողորմած այցելութեամբ։

Ապրիլի 26-ին պ. Բուտկովի տեղ Լազարեան ճեմարանի գլխաւոր կառավարիչ նշանակվեցաւ ազգային լուսաւորութեան նախարար կոմս Տօլստոյ։ «Գոլոսը» աւելացնում, որ պ. Լազարեանի, այժմեան հոգաբարձուի մահից յետ, ինչպէս յայտնի է, ճեմարանը պէտք է ենթարկվի ազգ. լուսաւոր. նախարար. տեսչութեանը։

Քաղաքակրթութիւնը օրէցօր նոր նվաճմունք է անում Թիւրքիայում։ Երբ Օմարը նվաճեց Աղեքսանդրիա քաղաքը, հրամայեց այնտեղի հարուստ գրադարանը այրել ասելով որ եթէ Յոյների գրքերը Ղուրանին համաձայն են, աւելորդ են, եթէ համաձայն չեն— վնասակար են, ուստի պէտք է ոչնչացնել։ Հասարակական բաղնիքները 6 ամսական ընթացքում թանկագին ձեռագիրներով էին տաքանում։ Իսկ Թիւրքիայի այժմեան կառավարութիւնը հրամայեց հաւաքել Ստամբուլի բոլոր մզկիթներից նշանաւոր գրքեր և միասին ժողովել մի գեղեցիկ տան մէջ։ Սա առաջին հրապարակական գրքատուն է Թիւրքիայում, և քրիստոնեաների համար ևս բաց պիտի լինի։

Ելիզավետպոլում հացը բաւական աժանացել է. փութը 95 կոպէկով է։ Ապրիլի վերջը Շուշի քաղաքում շատ մեծ կարկուտ է եկել, 3 վայրկեանում քանի մի հազար ապակիներ է կոտրել։ Պարտէզները բոլորովին վնասվել են, նոյնպէս և բոլոր ցանած տեղերը։ Քանի մի կարկուտներ հաւի ձուի չափ են եղել։ Վերջին տարիներս Շուշի քաղաքը, առաւելն—բարոյական ընկաւ. սնանկութիւններ շատացան, հաւատարմութիւնը վերացաւ և մեծ անփոյթութիւն թագաւորեց։

Մեծ. դոկտոր Գր. Արծրունու կողմից յետագայ տեղեկութիւններ հաղորդումենք ընթերցողին։

—«Մասիս շաբաթաթերթը (1869, 27 դեկտ.) հրատարակեց Ցիւրիխից ուղարկված մի գեղեցիկ յօդված Բազէլի և Վինտէրտուրի մէջ եղած գիւղէական ուսուցչական ժողովների մասին։ Յօդվածը մինչև այն աստիճան հետաքրքիր է, որ նորա երկարութեան ևս չնայելով ցանկալի կլինէր, որ «Հայկ. Աշխարհը» իւր ընթերցողներին ներկայացնէր։ Քանի մի հայ երիտասարդներ ևս մասնակցումէին այս ուսուցչական ժողովներին։ Հայերից մինը մի փոքր ճառ ասաց «յանուն Նոյի, որի թոռան թոռները իրենց մէջ կդաստիարակուին ու կզարգանան, շնորհակալութիւն առաւ Ցիւրիխեայի դաստիարակներին, և մի երկու խօսքով յիշելով նոցա մարդասիրական վարմունքը օտարականների հետ, պարպեց իւր բաժակը հանդիսականների կենացը։»

«Ալտդորֆի դպրոցի դիրեկտորը այնչափ ոգևորեցաւ, որ տեղէն բարձրանալով կոչեց հասարակութեան. «Պարոնայք, դարձնենք մեր բաժակները մեր երիտասարդ Հայ եղբայրների կենացը, որոնք դիւրութեամբ կլիմայախոս (փոխաբերութեամբ) կը լինին և կոչխանն մեր մէջ զարգանալ մարդկութեան հին լուսաւորութեան աւերակներէն մինը (Հայաստան) բարոյապէս վերանորոգելու նպատակաւ։ Ցանկանք որ նոցա թիւը մեր շրջանի մէջ շատանայ։ Այս «կեցցեն» աղաղակելով, Հայերի կենացը կպարպեին։ Երանի թէ Ալտդորֆի դպրոցի դիրեկտորի ցանկութեան ձայնը, շարունակումէ հեղինակը, արձագանք

գանէր մեր երիտասարդների մէջ, և փոխանակ Փարիզ յաճախելու, գերմանական թէ համալսարանական կրթութիւնը և թէ տարրական զարգացումը նախադասէին, և Գերմանիոյ համալսարանները ու Զուիցերիոյ դպրոցները յաճախէին ։»

Նոյն յարգելի գիտնականից ստացել եմ հայ—կաթոլիկների մասին շարունակ հետաքրքիր տեղեկութիւններ արտասահմանեան օրագիրներից քաղված ։ Այժմ նոցա մի մասը միայն ներկայացնումեմ ընթերցողիս ։

—«Աւգսբուրգեան Ցայտունգ» (10 մարտի № 69) հրատարակեց մի յօդված հայ—կաթոլիկների վերա «Դի Կատոլիշեն Արմենիեր» վերնագրով ։ Այս յօդվածից ծանօթանումենք հերձուածողութեան ծագման և ընթացքին, հայ—կաթոլիկների և Հռոմի աթոռի յարաբերութիւններին, բոլոր խարդախութիւններին և հայ—կաթոլիկներից իւրանց արտօնութիւնները խլելու ձգտողութիւններին ։ Հայ—կաթոլիկները պաշտպանումեն և մանաւանդ իւրանց իրաւունքը իւրանց եպիսկոպոսներ և պատրիարք ընտրելու—Պապին յաջողվեցաւ խլել այս իրաւունքը հայ—կաթոլիկներից, հասարակութեան բողոքի և սաստիկ ընդդիմադրութեան պատճառով ։ Այժմ պապը նզովեց քանի մի հայ—կաթոլիկ հոգևորականներ ։ — Իսկ գեր. Առաքելեան եպիսկոպոսը սպառնումէ նզովել եկեղեցուց այն ամէն կաթոլիկներ, որոնք 24 ժամում չեն հեռանայ հերձուածողներից ։

—Նոյն օրագրում (22 մարտի) կարդումենք թէ կաթոլիկ կուսակցութեան օրագիրները շատ անբաւական են, որ Ֆրանսիայի տէրութիւնը խառնվեցաւ հայ — կաթոլիկների գործի մէջ։ Պաշտօնական շրջաններից պատասխանումեն թէ հայ—կաթոլիկները Հռոմի պապերից ապահովացրված էին զանազան արտօնութիւններով, որոնց դէմ այժմեան պատրիարք Հասունը ներգործումէ ։ Հայ—կաթոլիկների մեծ մասը պատրիարքի ձգտողութիւնների դէմ բողոքեց, միևնոյն ժամանակ իւրանց կատարեալ հաւատարմութիւնը Հռոմի եկեղեցուն յայտնելով ։ Այս դրութեանը նայելով, Ֆրանսիան, որի ազդեցութիւնը արևելքում հիմնվումէ գլխաւորապէս այնտեղի քրիստոնեաներին տված հովանաւորութեան վերա, իւր պարտաւորութիւն է համարում խոստանալ հայ—կաթոլիկներին իւր պաշտպանութիւնը ։

—«Կեօլնիշէ Ցայտունգ» օրագրում (25 մարտի, 1870) կարդումենք թէ Հասունի բոլոր կուսակիցները թողելեն նորան ։ Պապից ուղարկված գեր. Պլուիմ եպիսկոպոսը առանց որ և իցէ հետևանքի ստիպված է վերադառնալ Հռոմ, և հասարակութիւնը կընտրէ Հասունի տեղ ուրիշ մի եպիսկոպոս ։ Հռոմը երևի չկարծելով որ շարժումը հայ—կաթոլիկների մէջ այսքան ընդհանուր է, վնասեց գործին անզգոյշ և խիստ կերպով վարվելով հերձուածողների հետ ։

—Վիեննայի «Նէօէ Ֆրէյէ Պրէսսէ» օրագիրը տպեց (27 մարտի) բաւական մեծ յօդված «Արևելքի եկեղեցական հարցեր» վերնագրով։ Սա մի ամփոփված պատմութիւն է այն անցքերի և եկեղեցական խռովութիւնների, որոնք վերջին ժամանակում հայ—կաթօլիկների, Յոյների և Ռումինացիների մէջ պատահած են ։ Հայերի վերաբերութեամբ յօդվածի մէջ նոր միտք չենք գտնում, բայց միայն տեղեկանումենք թէ Ֆրանսիայի դեսպանը Կ. Պօլսում պ. Բուրէ, կանչելով քանի մի հայ—կաթոլիկներ իւր մօտ, կարդաց նոցա Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարից պ. Դարիւից ուղարկված հեռագրալուրը, որով

նա յայտնում է Ֆրանսիայի պաշտպանութիւնը հայ—կաթոլիկներին, և աւելացրեց թէ նոքա չպէտք է զոհեն իւրանց հին արտօնութիւնները Հռոմի աթոռին, իսկ ընդհակառակն նոքերը պիտի պահանջեն ։ Իտալական տէրութիւնը այս մասին իւր համաձայնութիւնը յայտնեց Ֆրանսիայի տէրութեանը։ Հեղինակը վերջացնում է իւր գրվածը ցանելով թէ Ավստրիան, որը աւելի մեծ իրաւունք ունի քան թէ հեռաւոր Ֆրանսիան խառնվել արևելեան եկեղեցական հարցերի մէջ, — կամ ամենևին չէ հետաքրքրւում այս հարցերով, կամ եթէ խառնվում է արևելքի գործերի մէջ, — միշտ անյաջող կերպով ։

— «Աւստրիական Ցեյտունգ» (28 մարտի) օրագրի մի յօդվածից տեղեկանում ենք թէ Վիեննայի և Վենետիկի մխիթարեանները նմանապէս չեն կամենում հրաժարվել իւրանց հին արտօնութիւններից ։ Գեր. Պլուիմ եպիսկոպոսը հրամայեց Կ. Պօլսի սուրբ Յովհաննէսի եկեղեցու պատերից պոկել կոնդակը կախել, որով հաստատվում է նոցա եպիսկոպոսութեան նշանակումն Կ. Պօլսում ։ Բայց հերձուածողները հանեցին պատից, կտոր կտոր պատռեցին, և ոտնակոխ արին այս թուղթը։ Քանի մի հայ—կաթոլիկները յայտնեցին Ֆրանսիայի դեսպանին, թէ զարմանում են ինչ իրաւունքով Ֆրանսիայի տէրութիւնը խառնվում է նոցա եկեղեցական գործերի մէջ ։

— Նոյն օրագրին (30 մարտ) գրում են Կ. Պօլսից (25 մարտի) թէ Դաւուդ—փաշայի տեղը, որը ինչպէս յայտնի էր Թիւրքիայի հասարակական գործերի նախարար էր, նշանակվեցաւ այժմ Միհրան Բէյ (երևի Դիւզեան)։ Ուրեմն կրկին մի Հայ կառավարում է այս պաշտօնը ։

— Ֆրանսիական «Ժուռնալ դէ Դեբա» օրագրում (ապրիլ 2) կարդում ենք թէ մի հայ—կաթոլիկ աստուածաբան, որը հայ—կաթոլիկ եպիսկոպոսի հետ եկած էր Հռոմը, բացարձակ քարոզում էր ընդդէմ պապի իրաւասութեան ։ Եպիսկոպոս Բարնաբօ հրամայեց նորան համեստ լինել և ապաշխարել մի վանքի մէջ ։ Բայց երբ աստուածաբանը չհամաձայնեց, եպիսկոպոսի հրամանով ուղարկվեցան նուիրակներ, որոնք եկան հայ—կաթոլիկ եպիսկոպոսի տունը, բռնեցին աստուածաբանը և ղցեցին կառք ։ Աստուածաբանը այնքան ընդդիմանում էր, որ ազատվեցաւ և փախաւ եպիսկոպոսի տունը, որտեղ եպիսկոպոսի պաշտպանութիւնը և նորա բողոքը արգելք դրին նուիրակների դիտաւորութեանը ։ — Մի ուրիշ առաւել նշանաւոր փաստ. հայ — կաթոլիկ Անտոնեանների վանքը Հռոմում ներկայացաւ պապից յանձնարարութեամբ ուղարկված (վանք քննելու համար) հոգևորականը ։ Վանքի մեծաւորը (եպիսկ. Գասանճեան) չընդունեց, և երբ պապը նորան հրամայեց գնալ Սուրբ Սաբինայի վանքը (Դոմինիկանների մօտ) եկեղեցական ինչ ծառայութիւն կատարելու համար, — եպիսկոպոսը հրաժարվեցաւ հրաման կատարելուց և գրեց Մարսէյլը Ֆրանսիացի գեր. Պլաս եպիսկոպոսին, խնդրելով Ֆրանսիայի տէրութենից պաշտպանութիւն պապի դէմ։ Մեր ազգայիններից շատերին գուցէ յայտնի չէ որ Հռոմում կայ մի հայ—կաթոլիկ միաբանութիւն—Ա ն տ օ ն ե ա ն ն ե ր ը ։ Այս միաբանութիւնը առաջ Լիբանանի մէջ հաստատվեցաւ և կարծեմ մօտ յիսուն տարի առաջ հիմնեց մի վանք Հռոմում ։

— «Ժուռնալ դէ Դեբա» օրագիրը հաղորդում է թէ Թիւրքիայի տէրութիւնը, տեսնելով ինչ բռնաւորութեամբ է վարվում ս. աթոռը հայ—կաթոլիկների հետ, ուրեմն

Թիւրքիայի հպատակների հետ, հրամայեց իւր դեսպանին Ֆլորենցայում չտապել Հռոմի Հայերը պաշտպանելու համար։ Դեսպանը հասաւ Հռոմ ապրիլի 2-ին։

— «Ընդէպանդանս Բէլժ» (5 ապրիլ 1870) օրագրի «Արեւելքից տեղեկութիւններ» անունով յօդվածի մէջ կարդումենք գեր. Պլուիմ եպիսկոպոսը իւր նպատակին չհասած թողնումէ Կ. պոլիս, և վերադառնումէ Հռոմ, չհամարձակելով մինչև անգամ հրապարակել Հռոմից հետը բերած հայ—կաթոլիկների դէմ նզովի կոնդակը։

— Իտալական «Իլ Դիրիտտօ» (Իրաւունք) օրագրից (7 ապրիլ) տեղեկանումենք թէ Հասունը բողոքեց Հռոմից հեռագրալրով Կ. Պոլսի մէջ նոր հայ—կաթոլիկ պատրիարգի ընտրութեան դէմ։

— «Նէւ Ֆրէյէ Պրէսսէ» օրագրի մի յօդվածից (ապրիլի 9) յետագայ թւանշաններ ենք քաղում Թիւրքիայի կաթոլիկ բնակիչների մասին։ Թիւրքիայի բոլոր կաթոլիկների թիւը 919 հազար է, որոնցից Հռոմից անմիջապէս անկախ կաթոլիկները 509 հազար են, իսկ արևելեան եկեղեցիներին պատկանող կաթոլիկները 410 հազար են։ Հայ—կաթոլիկները Թիւրքիայում 78 հազար են թւով։

Մեծ. պ. Ա. Ա. յետագա տեղեկութիւններ է հաղորդում Հէյդէլբէրգից։

— Եվրոպական օրագիրների մէջ կարդումենք հետևեալ լուրեր։

«Կ. Պոլիս 28 ին Մարտի Հայ ժողովուրդը և Տաճկաց կառավարութիւնը չատ գրգռած են Հռոմից եկած մի հեռագրալրի պատճառով, որ հաղորդումէ ադանդաւորների մինի հայր Հանեմեանի արգելումն։»

— Բերլինի «Նացիօնալ Ցէյտունգ» տալումէ (30 Մարտի) մի յօդուած Հասունի առիթով, որի մէջ նկարագրումէ ինչպէս ճեզուիտները պատճառ եղան Լուդովիկոս 14-ի կառավարութեան ժամանակ, որ Հայերը երկու տարբեր դաւանութիւնների բաժանվեցան, որոնց մէջ սաստիկ ատելութիւն ծագեց։ Յօդուածի մէջ նկարագրած է նոցա (ճեզուիտների) ընդհանուր վարմունքը առաքելականների դէմ, և ինչքան պէտքէ տանջվէր նոցա ընդդիմանալու պատճառով Աւետիք Կ. Պոլսի պատրիարգը, որ նոցա ազդեցութեամբ հալածվեցաւ, բանտարկվեցաւ նախ Տաճկաստանի մէջ, յետոյ Ֆրանսիայի զանազան բանտեր անցաւ և վերջապէս գրեթէ մինչև իր մահը, մինչև 1711 թւի սկիզբը (նա մեռաւ նոյն տարու 21 յուլիսին) նստած էր Փարիզի Բաստիլ բերդի մէջ։ Յօդուածը վերջանումէ այն խորհրդածութեամբ, որ փիլիսոփայութիւնը կարելի է քրտունք ունի «երբ արհամարհանքով յետ է քաշվում կրօնական հարցերից, որոնք, իրանց նպատակը խաղաղութիւն և քաղաքակրթութիւն դնելով, ամեն տեղ և միշտ երկպառակութիւն և ատելութիւն են սերմանել և ամէն տեսակ բռնաւորութիւն և հալածանք են գործ դրել և երբ խղճումէ մարդկութիւնը, որը զօրութիւն չունի քահանայութենից ազատվել։»

Յօդուածի հեղինակը պնդումէ որ այժմեան հանգամանքներում էլ ճեզուիտներն են ծածուկ պատճառ եղել այն երկպառակութեանը, որ ծագել է հայ—կաթոլիկների հասարակութեան ծոցում։

Կանանց խնդիրը առաջ է գնում Ամերիկայում կանայք ընտրող լինելու և ընտր-

վելու իրաւունքներ ստացան արդէն։ Ամերիկայում այժմ նոքա ընտրված դատաւորական պաշտօններ ևս ստացան։ Անգլիայում նոքա կամենում են ընտրողական իրաւունք ստանալ։ Ռուսաստանում Պետերբուրգի բժշկական ակադեմիայում կանանց համար դասեր են սահմանվում նոյն ձևով և չափով գրեթէ ինչպէս ուսանողների, միայն այր ուսանողներից առանձին։ Կանայք արդէն պարապում են գրաշարութեամբ, հաշւետարութեամբ, տելեգրաֆական ծառայութեամբ, և այժմ խօսվում է, որ նոքա փոստային պաշտօններ նոյնպէս յանձնվին։ Այր մարդիկ երբեմն թշնամութեամբ են ընդունում կանանց, իւրանց հակառակորդներ համարելով։ Սա ի հարկէ մոլորութիւն է։

Իսկ Հայերիս մէջ կանայք ինչ իրաւունքներ ունին։ Մեր մէջ... տասնամեն հայ իգական սեռը իրաւունք պիտի ստանա եկեղեցիներում երգելու, և դեռ սա առաջին մեծ քայլ պիտի լինի....

Ապրիլ ամսի սկզբում ծխական ուսումնարանների համար արժանայիշատակ Յովսէփ Իփէնդեանից կտակված գումարով օրիորդների ուսումնարանների համար կարևոր իրեղէններ գնվեցան և բաժանվեցան Թիֆլիսի 6 օրիորդական ուսումնարաններին, որ չունէին աշակերտուհիները օգուտ քաղեն նոցանից։ Ներս. ուսումնարանի հոգաբարձութիւնը յանձնեց այս գործը պ. Իզմիրեանին և դոկտոր պ. Բաստամեանին, որոնք բաժանեցին աշակերտուհիների թւի և կարիքների համեմատ։ Իրեղէններն սոքա էին. գունաւոր դերձան, ասեղներ, թուղթ, գրիչներ, թել, ասեղներ, մատնոցներ, դրչահատներ, կարաւր և այլն այստեսակ իրեր, որ աշխատեց գնել մեծ. տիկին Բաստամեան։ Իրեղէնները ստանալուց յետ Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներ գնացին և մեծ հանդէսով վանքի գաւիթում հոգեհանգիստ լսեցին Յովսէփ Իփէնդեանի գերեզմանի վերա . . . ։ Շատ փոքր ազդեցութիւն գործեց մանուկների երախտագիտութեան այս հանդէսը. որտեղ Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներ առաջին անգամ երգեցին աղօթք հրապարակաւ։ Նորաշէն եկեղեցու միաբանութիւնը և երեսփոխանը վանքի միաբանութեան հետ ներկա էին հոգեհանգստի կատարմանը։

Նորաշէն եկեղեցու մասին մինչև այսօր ոչինչ ասած չունիմ։ Նորաշէն եկեղեցին Թիֆլիսի առաջին եկեղեցիներից պիտի համարվի իւր բարեկարգութեամբ։ Բարեկարգութիւնը եկեղեցին ստացել է իւր աւագ քահանայի արժ. հ. Սրապիոն Տէր-Մովսիսեանի և երեսփոխանի հոգսերի շնորհիվ։ Այժմեան երեսփոխան մեծ. պ. Մելիքնուբարեանը աւագ քահանայի հետ մի խօսք դարձած ցանկանում են ուսումնարաններ հիմնել եկեղեցու գաւիթում, որ մինչև այժմ միայն ցանկութեամբ յայտնվել է այս միտքը։ Ամեն յաջողութիւն ցանկանում եմ պ. Մելիքնուբարեանին, մանաւանդ որ մեր մէջ փոխանակ օգնելու որ մի բարի սկզբնաւորութիւնը իրագործվի կատարվի, մեր բարի Հայերը աշխատում են ամառից խափանել բարի գործը։ Եթէ արժ. հայր Սրապիոն Տէր-Մովսիսեան և պ. Մելիքնուբարեան կկարողանան կատարել իւրանց մտադրված գործը — հաստատ նոքա յիշատակ մշտա յիշելի պիտի թողն Նորաշէնի ժողովրդի համար։

Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներն արձակեցան Յիսուսի սուրբ Հարութեանը առաջ հինգ շաբաթի օրը։ Իսկ Զատկի Ճրագալոյցի շաբաթ օրը նոքա պա-

տարած երգերն խմբապետ հայկական եկեղեցում, որանց ժողովուրդը բազմութեամբ հաւաքված պաշտպամի վերա կանգնած էր։ Եւ դեռ ես կան այնպիսի պինդ երկու ուսուցողներ, որոնք յանդգնումեն Մարիամեան ուսումնարանների ուղղութեան դէմ խօսել։ Տեսնված կամ լսված է արդեօք որ Թիֆլիսի 10—12 տարեկան օրիորդներ ոչ միայն անգիր գիտենան աղօթքներ և ամբողջ պատարագը, հապա գեղեցիկ եղանակով քաղցր ձայնով երգեն էլ։ Սա յուսացված բան էր արդեօք։

Մարիամեան ուսումնարանների տարեդարձը տօնեցաւ. մայիս ամսի 31-ին պիտի կատարվէր տարեդարձը հանդիսաւոր կերպով մեծ. պ. Տէրյակոբեանի և պ. Մօնատերցովի մասնաւոր կլասիկական գիմնազիոնի վերին յարկում։ Աշակերտներն կներկայացնեն I հայկական և I ռուսական մանկական պիեսներ, կերգեն ազգային և եկեղեցական երգեր, այլև ռուսերէն, կարդեն եվրոպական և հայկական պարեր։ Այլև կկարդացվի տարեկան հաշիւ։ Օրիորդների կրթութեան համակրողներն հրաւիրվումեն գալ Աղաջէն Մարիամեան ուսումնարան և կանխապէս մանելու տոմսակ ստանալ։ Մարիամեան ուսումնարանները Թիֆլիսի հասարակութեան մասեօք մասի առանձին համակրութիւններ վայելած են ահա երկու տարի է և վայելելու վերա են։ Մարիամեան ուսումնարանների հաշիւը առանձին տպված ամեն բարերարուհիներին և բարերարներին կուղարկվի։

Զատկից յետ հայ դերասանները քանի մի թատրոնական ներկայացմունք խաղացին ամառնային թատրոնում. Առաջինը «Ռիշէլիէօ» թարգմանական պատմագրական պիես մի ներկայացրին, որը բոլորովին անհասկանալի էր մեր ժողովրդի համար։ Խաղացողների մէջ եւս առնելի էր պ. Զմշկեանի խաղը, որ կարդինալ էր ներկայացնում. Պ. Զմշկեանը որպէս կարդինալ բաւական ազատ վարվումէր սցէնի վերա։ «Ռիշէլիէօի» մասին այսքան միայն, արժէքով նա երևի այլ եւ չպիտի խաղացվի։

Վերջապէս կարօղացա տեսնել պ. Սունդուկեանի վաղուց խոստացված նոր պիեսը, որ կոչվումէ «Էլի մէկ զոհ կամ կեանքի կանոն»։ Այս պիեսում մեծ. պ. Սունդուկեանը ցանկանումէր ներկայացնել երիտասարդը որպէս կատարելատիպ (իդէալ)։ Պ. Սունդուկեանի ազնիւ ձգտողութիւններն այս երեւումեն պիեսի մէջ։ Շատ խ ե լ ա ց ի և ա զ ն ի ւ կերպով վարվումէ երիտասարդ Միքայելը թէ ծնողների և թէ իւր հարսնացուի հետ։ Նոյն խ ե լ ա ց ի կերպով վերջացնումէ Միքայելը, երբ շամպայն ձեռին մտնումէ նորահարսին շնորհաւորելու, և վեր լինելով նորա ուշաթափմանը, «Էլի մեկ զոհ» ասելով դառնապէս հեռանումէ։ Եւ պ. Զմշկեանը խելացի երեսով, հաստատ քայլով և դառն բողոքմունքը սրտում պահելով դուրս գնաց բեմից։ Հարկադրված լինելով կարճօրէն անցնել այստեղ, կասեմ պ. Սունդուկեանին, որ իւր շատ արժանաւորութիւնների հետ, պիեսը շատ երկար է, կրկնութիւնները շատ կան։ Կարծես հեղինակը ցանկացել էր պարտաւորել հանդիսատեսներ, յայտնելով ներգործող անձների բերանով այն մտքերն էլ, որոնք հանդիսատեսների գլխում պիտի ծնվէին խաղացողների խօսքերը լսելով։ Իսկ երիտասարդ Միքայելը համառօտված է։ Ես կցանկայի, որ մենք լսէինք նորա բերանից թէ ինչ կերպով կամենումէր նա իւր կեանքը անօրինել սիրելի կնոջ հետ, և թէ ինչ դիտաւորութիւններ ունէր նա կեանքի մէջ, և ոչ սէրը միմիայն վայելել ի հարկէ։ Այս բոլորը կամ ամե-

նելին չէ երևում կամ ախտաբկութեամբ. միայն. Գ. Ամէրիկեանի, պ. Սուքիասեանի և տ. Մելիքնազարեանի խօսքերը լսելով ես կարծում էի թէ Թիֆլիսաբնակ փաստաբանի մի ընտանիքի մէջ եմ նստած… Բայց պէտք նկատել, որ ոչ մի խօսացող չէ իմանում բեմի վերա ծիծաղել, ոչ միայն չէ իմանում, այլ իւր ծիծաղով իւրաքանչիւր խօսացողը բոլորովին ոչնչացնում է առաջ ասված խօսքերի տպաւորութիւնը ։ Ընդհակառակն պէտք նկատել, որ տ. Սաթենիկը բոլորովին բ ն ա կ ա ն օ ր է ն լացեց բեմի վերա ։ Սա հասկանալի է. որտում զգացմունքը ի հարկէ աւելի հեշտ է արտայայտել քան թէ հեգնութիւնը ։ Սակայն թող յուսամ, որ յարգելի խաղացողներն խօսքս անուշադիր չեն թողնի ։

«Մեղ. Հ-ի» Լրագրի այս տարվան № №ում մինչև մայիսի վերջը ահա չկա ոչինչ առանձին արժանաւոր յօդված, որին հրաւիրէի ընթերցողի ուշքը ։ Չեմ հասկանում ինչի խմբագրութիւնը այնքան անտարբեր տպում է ամեն դժվարամարս թարգմանութիւններ . . . . ։

Այս օրերս ստացանք «Արարատ» օրագրի № 12, որով վերջացաւ օրագրի երկրորդ տարին ։ «Արարատը» հաղորդում է, բաւական հետաքրքիր ազգային տեղեկութիւններ ։ Սրբ. Սարգիս արքեպիսկոպոսը գնացել է իւր թեմին ։ Աստրախանաբնակ պ. Սարգսեանը նվիրել է ուսումնարանների համար 100 ման. ։ Նուխու հոգևոր ուսումնարանի նոր հոգաբարձուներն 6 անձնեք ընտրվել են և մարտ ամսին ստացել են վեհ. Կաթողիկոսի հաստատութիւն ։

Ալեքսանդրոպօլից պ. Հայկազեանը գրում է «Արարատին», որ ուսումնարանի հոգաբարձութիւնը փոխվեցաւ, բայց բացի տեսուչ ընտրելուց ոչինչ է գործել նոր հոգաբարձութիւնը, բայց միայն օդը թնդացրին ։ Իսկ նորընտիր տեսուչը բացի «տ ե ս ո ւ չ տ ի տ ղ ո ս ի ց և ա մ ս ա կ ա ն ի ց» ոչինչ կարևոր փոփոխութիւն չէ արած ուսուցիչների վերաբերութեամբ ։ Ես ցաւով կարդացի այս տողերը ։ Ցաւալի է հարկէ, որ Թիֆլիսի ցաւերը ամեն հայաբնակ քաղաքներում տիրապետած են ։

Վեհափառ Գէորգ կաթողիկոսը մարտի 25-ին ստացել է պարսկական շահից «Առիւծի և Արեգակի» առաջին կարգի նշանշանը ։ Օգոստ. Շահի այս ուշադրութիւնը դէպի հայկական Կաթողիկոսը, հետևապէս դէպի հայկական ազգի ամբողջութիւնը, մխիթարութեան և երախտագիտութեան զգացմունք կզարթեցնէ ի հարկէ հայրասէր Հայերիս մէջ ։ «Արարատի» յարգելի խմբագրութիւնը հաղորդելով այս տեղեկութիւնը գրում է այսպէս. «Օգոստ. Շահէն առ. վեհ. Կաթողիկոսը Տ. Տ. Գէորգ Դ. շնորհուած . . . .» ։

«Արարատի» պրակին արժանաւորութիւնների մասին իմ կարծիքը վաղուց յայտնել եմ։ Ռուզհեան տարին վերջացաւ, ուստի ընթերցասէր Հայերն հրաւիրվում են օրագրին բաժանորդագրվելու Էջմիածին յայտնելով իւրանց ցանկութիւնը այս հասցեով. «Արարատ» օրագրի խմբագրութեան։ Տարեկան գինը 4 մանէթ է։

Լսումեմ որպէս թէ սրբ. Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանը հրաւիրված է Թիֆլիս գալու։ Թէ որքան այս տեղեկութիւնը ճիշդ աղբիւրից է — անյայտ է ինձ։ Այժմ մտաբերումեմ Վենետիկի միաբանութեան սրբազան Աբրայի արքեպիսկոպոս Հիւրմիւզեանի խօսքերը սրբ. Գաբրիէլի մասին։

Անցած տարի երեք հայրենակից ճանապարհորդներ Վենետիկում այցելութեան գնացել են սուրբ Ղազարի վանքը։ Մխիթարեան քեր. միաբանութիւնը իւրանց սովորական հիւրընկալութեամբ ընդունել են նոցա։ Երկար խօսակցութիւնների մէջ խօսքը եկել է սրբ. Գաբրիէլ եպիսկ. Այվազեանի վերայ։ Ճանապարհորդներից մին հարցրել է թէ ինչի՞ նոքա հակառակ և թշնամի են սրբ. Գաբրիէլին։ Այս հարցին պատասխանել է իմաստութեամբ սրբազան Գէորգ Հիւրմիւզեան այսպէս. «Իրաւ է՛ ես մինչև այժմ նորա թշնամի եմ, բայց դժբաղդաբար այս թշնամութիւնս ոչ ուրիշներն և ոչ ինքն կարողացան հասկանալ։ Աստուած պարգևել է նորան քանքար. ազգի դրութեանը նայելով, Գաբրիէլ Այվազեանի յարգը ճանաչելու համար գոնէ 150 կամ 100 տարի հարկաւոր է հայկական ազգին։ Լաւ գիտենալով, որ ոչ 150 և ոչ 100 տարի կեանք ունի նա, ուրեմն իւրան շնորհված քանքարը անօգուտ սեաւ հողին արժանի պիտի անէ։

Այս ասելով սրբ. Հիւրմիւզեանը աչքի առաջ չունէր իմաստուն Գէորգ Դ-ի վեհափառ գահակալութիւնը։ Արդարև սրբ. Հիւրմիւզեանի խօսքերը արդարացրեց հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսը, որը մինչև իւր վերջին շունչը, խաբված լինելով ի հարկէ, չէր դադարում հալածել սրբ. Գաբրիէլ Այվազեանը։ Բայց այսօր կաթողիկոսական գահը պայծառազարդված է վեհ. Գէորգ Դ. Կաթողիկոսի շնորհով։ Այսօր ուսումնականութեան գնահատման և բանիմաց հոգևորականների միջնորդութեամբ ժողովուրդը բարոյապէս փըրկելու ձայնը Վեհ. Գէորգ Դ-ի գահից լսվումէ։ Եւ միթէ մեր Վեհ. Հայրը չապացուցեց աշխարհին, թէ Նա գիտէ իմաստնաբար գնահատել արժանաւոր հոգևորական անձն, հալածված Գաբրիէլ վարդապետը եպիսկոպոսական աստիճան բարձրացնելով։ Թող յուսանք ուրեմն, որ մեր Կաթողիկոսը իւր բնածին իմաստութեամբ կշնորհէ սրբ. Գաբրիէլը հայկական ժողովրդին որպէս գործունեա հովիւ և ոչ որպէս սեաւ ծովի ափերին եղանակի պարզվելուն ի նանիր սպասօղ բնակիչ . . . .

. . . . .

. . . . .

. . . . .

Այժմ վերջ պիտի տամ խօսքիս դառնալով իմ ախորժակներիս մանաւանդ սովորութեանս սիրելի առարկային. բոլոր Հայերի վեհափառ Գէորգ Դ. Կաթողիկոսի շնորհ բե-

րելուն Թիֆլիս, որ ես պահում էի «պուռ լա բօնն բուշ» (քիմքերն քաղցրացնելու) ինչ-պէս սառուման Ցրանսիացիներն։ Այն օրերից յետ, երբ վեհ. Հայրը մշակում էր հայկական անապատը Էջմիածնում, իւր անձն զրկելով. մտածող Հայերը փափագումէին Նորան տեսնել։ Եւ ահա լսեցինք, որ մեր վեհ. Հայրը բարեհաճումէ մեզ տեսնել։ Սպասումէինք և լսեցինք, որ մայիսի 1 արդէն Թիֆլիս պիտի մտնէ։ Թիֆլիսի սրբ. առաջնորդը և Ներս. ուսումնարանի հոգաբարձուներից մի. Իզմիրեան և իշխան Բեհբութեան դիմաւորեցին վեհ. Հօրը Եաղլուճա ստասիօն։ Մայիսի 1-ին առաւօտեան 12 ժամին վեհ. Հայրը շնորհ բերեց Թիֆլիս հանդիսաւոր եկաւորութեամբ։ Մայիսի 3-ին կիւրակէ օրը պատարագեց յետ Թիֆլիսի հասարակութեան ականաւոր անձինք գնացին վեհ. Հօր գալը շնորհաւորելու «Հայկական Աշխարհի» խմբագրողն նոյնպէս արժանացաւ վեհ. Հօր ներկայանալ և բաղդաւոր էր լսել վեհ. Հօր խօսքերը, երբ ասել բարեհաճեց թէ Նա ուրախ էր կարդալով «Հայկական Աշխարհի» լաւ գրվածներ։ Ուրախ սրտով և բաղդաւոր դուրս եկան վեհափառից զաւակները Հօր տեսութիւնը վայելելուց յետ։

Այս անգամ շնորհաւորելով Հայերին ընդհանրապէս իւրանց վեհափառ Հայրապետի առողջ լինելը և Թիֆլիսցիներին մասնաւորապէս վեհ. Հօր տեսութեանը արժանանալը. խոստանումեմ միւս անգամ մանրամասնաբար հաղորդել ընթերցողներիս բոլորը ինչ որ պիտի ուրախացնէ նոցա իւրանց վեհ. Հօր վերաբերութեամբ։

Ցանկանումեմ ուրախացնել Մարիամեան ուսումնարանների ազգի և մտածող բարեկամները։ Մար. ուսումնարանի տեսուչը ներկայանալով Վեհափառ Հօրը խնդրեց, որ Նա թոյլատրէ, որ ուսումնարանների Տարեդարձին օրիորդներն եկեղեցում երգեն ի սուրբ պատարագին։ Վեհ. Հայրը բարեհաճեց թոյլ տալ Մարիամեան ուսումնարանի աշակերտուհիներին երգել ինչպէս առաջ իւր թեմում թոյլատրել էր, որ սուրբ կոյսերի տօներին և ուսումնարանի Տարեդարձի օրերին աշակերտուհիներն երգեն։ Թող ուրախանան ուրեմն բոլոր մտածող Հայերը, որ վեհ. Հայր Գէորգ Դ. իմաստուն և դիւրին կերպով բարեհաճումէ այս մեծ գործերին առաջարկել տալ հայկական բազմակարօտ կեանքի մէջ։

Մարիամեան Առաջին ուսումնարանի օրիորդներն Տարեդարձի օրը ս. պատարագին պիտի երգեն Նորաշէն եկեղեցում։

Մայիսի 10.

ՀԱՅԱՍԷՐ.